ՀՈՎՍԵՓ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ

ԼՈՒՍԱՇՈՂ ՃԱՆԱՊԱՐՀ

(Հուշեր)

2014

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷՋՄԻԱԾԻՆ

ՎԱՋԳԵՆ ՎԵՀԱՓԱՌԻ ՀԵՏ

Տ· Հուսիկ Արքեպ· Սանթուրյան (այժմ հանգուցյալ), Տ· Գարեգին Եպս· Ներսիսյան (այժմյան Գարեգին Բ· Ամենայն Հայոց Կաթողիկոսը), Տ· Հակոբ Ավ· Քհն· Հակոբյան-հորեղբայրս (այժմ հանգուցյալ), Տ· Հովսեփ Ավ· Քհն· Հակոբյան (այժմ ԱՄՆ Արևմտյան Թեմ), Տ, Գրիգոր Ավ· Քհն· Փանոսյան (այժմ հանգուցյալ), Տ· Նարեկ Ավ· Քհն, Մատարյան (այժմ ԱՄՆ, Արևմտյան Թեմ), Տ· Մանուկ Ավ· Քհն· Մարգարյան (այժմ ԱՄՆ, Արևմտյան Թեմ), Տ· Արտակ Ավ· Քհն· Սիմոնյան (այժմ Էջմիածնի Սբ· Աստվածածին եկեղեցի), Տ· Ղևոնդ Ավ· Քհն· (այժմ Ֆրանսիայի Թեմ), Տ· Խաչատուր Ավ· Քհն· Ֆրենկյան (այժմ Հոլանդիայի Թեմ), Տ· Եղիշե Ավ· Քհն, Բաղրամյան (այժմ Էջմիածնի Սբ· Աստվածածին եկեղեցի), Տ· Գուրգեն Ավ· Քհն· Աշուրյան (այժմ հանգուցյալ), Տ· Մարտիրոս Քահանա (այժմ ԱՄՆ, կարգալուծ):

«ԼՈՒՍԱՇՈՂ ՃԱՆԱՊԱՐՀ» – Հուշեր
ՀՈՎՍԵՓ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ
Գրքի կողքի ձևավորումը՝ Մաշտոց Ջոբանյանի

Copyright @ 2014 – By Archpriest Fr. Hovsep Hagopian
All right are reserved. - First edition – 2014
Printed in Armenia-Holy Etchmidzin
For information and address - Archpriest Fr. Hovsep Hagopian 1620 N. San Fernando Blvd. # 15 Burbank, CA 91504,
USA e-mail: frhovsepfaith@hotmail.com. www.frhovsep.com

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ն.Ս.Օ.Տ.Տ.

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Հրամանաւ Տեառն Յովնանու Արքեպիսկոպոսի

Առաջնորդին Հայց. Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի

Արեւմտեան Թեմի

ՀՐԱՇՔ ՄԱՅՐՍ

«Բոլոր մայրերը կույս են, ո՞ր հայրը ի տես իր նորածին երեխայի չի բացականչում հրա՜շք և մի պահ իր կնոջ մեջ չի տեսնում պատկերը Սուրբ Կույս Մարկամի: Կինը մայրությամբ վեր է բարձրանում մարմնականի պայմանից և պսակվում ծննդյան հրաշքի լույսով:... Հրաշալիքը՝ ծնունդի և սրբությունը՝ մայրության, ահա ընտանիքի հիմքը: Զի ընտանիքն է խորանը այդ հրաշքի և աղբյուրը մայրական սրբության»:

ՎԱՋԳԵՆ ՎԵՀԱՓԱՌ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Երկար տարիներ մտածում էի արդյոք արժի՞, որ գրեմ իմ հուշերը, հուշեր, որոնք սկսած Էջմիածին քաղաքի Սբ· Աստվածածին եկեղեցուց («Գյուղի ժամ»-ից), երբ ես ընդամենը տասը տարեկան էի, մինչև Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Կալիֆորնիայի Բրբենկ քաղաքը, հետապնդում էին ինձ, ապա այսօր դրանք հանձնելով թղթին ներքին դատարկություն եմ զգում, կարծես մի մեծ բեռ թոթափել եմ վրայիցս: Բայց ուրախ եմ դրա համար: Քանի որ հուշերը իմ ամբողջ կյանքն են, մի կյանք, որը լի էր ամեն տեսակ փորձություններով, ուրախություններով, տառապանքներով ու երջանկությամբ: Հիսուս Իր առաքյալներին ասաց, *«Աշխարհում նեղություն պիտի ունենաք, սակայն քաջալերվեցեք, ես հաղթեցի աշխարհին» (Հովհ·16:33):* Նեղությունները միշտ էլ հետապնդել են ինձ, սակայն հավատացեք, ես ուրախացել եմ դրանց ներկայության համար. քանի որ դրանք ամրացրեցին իմ հավատը, ուժը, նվիրվածությունը և սերը Աստծու, Հայաստանյայց Առաքելական մեր դարավոր Եկեղեցու և իմ ժողովրդի նկատմամբ: Փառքդ շատ լինի Տեր Աստված:

Այս գրքի հրատարակման համար Քրեսենթա Հովիտի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին (Լոս Անջելես, Կալիֆորնիա) որոշ գումարով իր մասնակցությունը բերեց, որը իբրև նվեր խոստացված էր, ինձ համար կազմակերպված հրաժեշտի Պատվո երեկոյին: Խորապես շնորհակալ եմ:

Արևելահայերենի ուղղագրության և մտքի դասավորման, ինչպես նաև գրքի կազմը պատրաստելու աշխատանքի մեջ, իրենց կարևոր լուման ունեն Առաջնորդարանի աշխատակիցներ՝ ինձ շատ սիրելի Հայկ Մադոյանն ու Մաշտոց Ջոբանյանը, որոնց հայտնում եմ իմ սերն ու շնորհակալությունը: Աղոթեցեք ինձ համար:

Սիրով՝

Հովսեփ Ավագ Քահանա Հակոբյան

Օգոստոս, 2014
Բրբենկ, Կալիֆորնիա, ԱՄՆ

ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐՍ ԴԵՊԻ ԵԿԵՂԵՑԻ

1960 թվականն էր: Անաստվածյան խորհրդային կարգերի ամենաթունդ ժամանակներն էին, երբ արգելվում էր խաչ կրել կամ նույնիսկ խաչ հանել: Այդպիսիներին դպրոցից կամ պաշտոնից անմիջապես հեռացնում էին: Ես այն ժամանակ 10 տարեկան մի պատանի էի, աշխույժ, ուրախ և բավական ժիր: Սովորում էի դպրոցում: Մանավանդ շատ էի սիրում երգել: Դրա համար ինձ ասում էին *«Ուրախ Հովսեփ»:* Եկեղեցու հետ կապ չունեի: Հայրս պարզ մի կոշկակար էր, իսկ մայրս՝ տնային տնտեսուհի, ապա՝ սկսեց աշխատել, նախ՝ իբրև բանվոր սովխոզում, իսկ հետո՝ շինարարության վրա: Մայրս իր խնամքին ուներ վեց երեխա, չորս տղա և երկու աղջիկ, հազիվ հազ հաստցընում էր: Ինչպես բոլորը, մենք եկեղեցի էինք գնում տարին մի քանի անգամ՝ տոնական օրերին: Հորեղբայրս՝ Տեր Հակոբ Ավագ Քահանա Հակոբյանը, ծառայում էր Սբ. Էջմիածնի Մայր Տաճարում և քաղաքում բավական սիրված էր ու մեծ հեղինակություն ուներ՝ իբրև բարի, արդար, հավատավոր և մաքուր հոգևորական: Ժողովուրդը նրան շատ սիրելու համար նրա ապրած փողոցը կոչել էր. *«Տեր Հակոբի փողոց»:*

Հորեղբորս միակ որդին *(հորեղբայրս ուներ ևս երեք աղջիկ)* հաճախում էր էջմիածին քաղաքի *«Սբ. Աստվածածնի»* անունը կրող եկեղեցին, որը ժողովուրդը կոչում էր նաև *(«Գյուղի ժամ»)* այդպես էր ճանաչվում, կառուցված 1767 թվականին Սիմեոն Երևանցի Կաթողիկոսի ժամանակ:

Հորեղբորս տղան մի Կիրակի ինձ ասաց, որ միասին եկեղեցի գնանք: Ես էլ, ճիշտն ասած, հետաքրքրությունից դրդված մորս ասացի ու գնացի նրա հետ: Երբ

մտանք եկեղեցի, տեսա հորեղբորս տղայի՝ Անդրանիկի նման մի քանի պատանիների, որոնք շապիկ հագած պատրաստվում էին մասնակցելու առավոտյան ժամերգության և ապա՝ Սբ. Պատարագին: Անդրանիկն էլ միացավ նրանց: Ես նստեցի նստարանին: Ժամերգությունը չսկսած լսեցի իմ անունը, մեկը ինձ էր կանչում, տեսա, որ Տեր հայրն է՝ Արժ. Տ. Քերովբե Ավագ Քահանա Շահբազյանը, որը Պարսկաստանից *(Իրան)* էր ներգաղթել: Այդ ժամանակ նրա հետ ծառայում էր նաև շատ բարի, ազնիվ, հավատավոր, նվիրյալ մի այլ հոգևորական, որը նույնպես Իրանից էր՝ Արժ. Տ. Վարդան Ավագ Քահանա Տեր-Վարդանյանը:

Երկուսն էլ հոգևորական լինելու համար Սիբիր էին աքսորվել, սակայն վերադարձից հետո անվախ շարունակում էին իրենց հոգևոր ծառայությունը: Տեր հայրը ինձ ձեռքով արեց, որ մոտենամ: Անունս հարցրեց. ասացի՝ *«Հովսեփ»:* Ընտանիքիս մասին հարցուփորձ արեց, հորեղբորս տղան ամեն ինչ բացատրեց նրան: Պարզվեց, որ նա մեր տան մոտերն է ապրում և լավ գիտի հորեղբորս ու ծնողներիս: Դրանից հետո նա ինձ ասաց. «*Գնա,՝ շապիկ հագիր»:* Մի կողմից նրա խոսքի մեջ կար փաղաքշական երանգ, մյուս կողմից՝ հրամայական: Ես տեղիցս չշարժվեցի, քանի որ նրա անսպասելի տոնից լեզուս կապ էր ընկել ու շփոթված էի: Նա այդ տեսավ: Մոտեցավ, շոյեց գլուխս ու հորեղբորս տղային ասաց, որ ինձ ներս տանի Խորան ու հարմար շապիկ ընտրի: Ես կարմրած, մի քիչ հուզված, դասը չիմացող աշակերտի պես միացա մյուս պատանիներին, ու այդ օրվանից սկսած իմ կյանքը փոխվեց:

Աստծու նախախնամությամբ ես կատարեցի իմ առաջին քայլերը: Աստված ինձ կանչեց Տեր հոր բերանով, որ տարիներ հետո ընդունվեմ Հոգևոր Ճեմարան, սովորեմ ու ապա՝ վերցնեմ իմ վրա Քրիստոսի ծանր և թեթև լուծը ու անսակարկ ծառայեմ Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն: Անաստվածության կարգերը այլևս ուժ չունեին ինձ ետ պահելու իմ հոգևոր կյանքին ծառայելու առաջին քայլերից: Իմ հոգևոր ուսուցիչների շնորհիվ, ես ոտքս ամուր դրեցի երկհազարամյա մեր Եկեղեցու առաջին քարին ու շարունակեցի իմ ճանապարհը:

Այդ տասը պատանիներից վեցը դարձան հոգևորականներ՝ հինգ ամուսնացյալ քահանա և մեկ արքեպիսկոպոս: Անաստվածության տարիների համար սա մեծ հունձ էր: Թող Աստված հավերժական լույս իջեցնի հորեղբորս՝ Արժ. Տ. Հակոբ Ավագ Քահանա Հակոբյանի, որն ինձ համար դարձաւ լույսի այն կանթեղը, որից մշտապես լուսավորվեցի, ինչպես նաև Արժ. Տ. Քերովբե Ավագ Քահանա Շահբազյանի եւ Արժ. Տ. Վարդան Ավագ Քահանա Տեր Վարդանյանի հոգիներին: Այսօր և միշտ պիտի հիշեմ նրանց կատարած հերոսական ծառայությունը: Վստահ եմ, հավիտենական կյանքում նրանք արժանացել են Աստծու գնահատանքին և օրհնությանը: Աղոթենք նրանց հոգիների լուսավորության ու հանգստության համար:

ԹԵ ԻՆՉՊԵ՞Ս ՀՈՐԵՂԲԱՅՐՍ՝ ՏԵՐ ՀԱԿՈԲ ՔԱՀԱՆԱՆ ԿԱՐՈՂԱՑԱՎ ԻՄ ԴՊՐՈՑԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՎԵՐՑՆԵԼ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1962 թվականն էր: Ես սովորում էի Էջմիածին քաղաքի Խաչատուր Աբովյանի անվան Միջնակարգ Դպրոցի 5-րդ դասարանում և փոխադրվել էի 6-րդ: Իմ առաջին հոգևոր ուսուցիչներս և հորեղբայրս՝ Տեր Հակոբը ծնողներիս համաձայնությամբ որոշեցին ինձ Ճեմարան տալ: Հոգևոր Ճեմարան քննություն տալու համար անպայման կարևոր էր, որ դպրոցի տնօրենությունը *(ինչպես ասում էին ռուսերենով դիրեկտորը-տնօրենը)* իմ փաստաթղթերը տար, որպեսզի նրանք ներկայացնեինք Ճեմարանի Տեսչությանը՝ ընդունման քննություններին մասնակցելու համար: Հասկանալի պատճառներով իբրև անաստվածության կարգերին տուրք տվող պաշտոնյա, տնօրենը հրաժարվում էր դրանք մեզ տալուց: Նա ասում էր. *«Դուք ի՞նչ է գժվել եք, եթե ես այս աշակերտի փաստաթղթերը տամ Հոգևոր Ճեմարանի համար, ապա ինձ հաջորդ օրը գործից կազատեն, հենց միայն նրա համար, որ իմ աշակերտը Ճեմարան է ուզում գնալ»:*

Այդ ժամանակները ո՞վ էր լսել, որ դպրոցից մեկը Ճեմարան ուսանելու գնար և ո՞վ կհամարձակվեր նրան ընդառաջեր կամ օգներ: Սակայն հորեղբայրս՝ Տեր Հակոբը հակառակ իր հոգևորական լինելուն, անվախ էր, քաղաքում էլ բոլորի կողմից սիրված էր, նույնիսկ զարմանալիորեն՝ բարձրաստիճան պաշտոնյաների մոտ էլ: Այս պատճառաբանությունը լսելով, նա ծիծաղելով ասաց. *«Պարոն Տնօրեն, (Հայաստան ներգաղթածները «ընկեր» բառի փոխարեն «պարոն» բառն էին օգտագործում, որը անշուշտ անհավատները չէին ընդունում և նեղանում էին). «Դուք*

մի՛ մտածեք, ես գլխավորի՝ Ռայկոմի (Ռայոնի կամիտետ – Շրջանային միություն) քարտուղարի հետ կխոսեմ և ձեզ թեթև նկատողություն կանեն ու կանցնի: Դուք միայն փաստաթղթերը տվեք»: Տնօրենը, որը լավ էր ճանաչում հորեղբորս, նախ զարմացավ, ապա համաձայնվեց և համոզվեց միայն այն ժամանակ, երբ նա հաջորդ օրը իր խոսքը գործի վերածեց ու ստացավ գլխավորի համաձայնությունը՝ թեթև նկատողության արժանացնելու: Ահա այս ձևով հորեղբայրս կարողացավ իմ փաստաթղթերը վերցնել դպրոցից:

Այդ ժամանակ կարգերը այդպիսին էին, մարդիկ, եթե պաշտոն ունեին, վախենում էին նույնիսկ հոգևորականին բարևել, եկեղեցի գնալ, ի ցույց մկրտություն, պսակ և այլ արարողություններ անել: Գաղտնի այդ բոլորը կատարվում էին, սակայն ոչ բացահայտ, քանի որ ինչպես ասացի վախ կար: Միակ չվախեցողը անաստվածության կարգերից պարզ սովորական մարդիկ էին, որոնք ոչ մի պաշտոն էլ չունեին և կորցնելու էլ ոչինչ չունեին: Դրանց մեջ մտնում էին նաև պարզ գյուղացիները, որոնց միակ հարստությունը հողն էր, ո՞վ կարող էր խլել նրանցից այդ:

Եվ եթե ուզում էք կարող եմ համարձակ արտահայտվել այս մասին, որ Հայրենիքում այդ անաստվածության կարգերի ժամանակ, երբ հալածվում էին հոգևորականը, եկեղեցիներից շատերը պահեստների էին վերածված, և նույնիսկ Վազգեն Վեհափառն էլ երբեմն, ոչ միշտ, իր վրա զգում էր ղեկավարության ճնշումները որևէ հարցի վերաբերյալ, մեր ճշմարիտ հավատը պահողները եղան այդ պարզ, համեստ, խոնարհ և չարքաշ աշխատող ու հողի հետ կռիվ տվող գյուղացին և հայ շինականը, որոնք ոչ մի ղեկավար պաշտոն չունեին ու, ամենակարևորը, միայն

երկյուղ ունեին Աստծուց ու, որևէ մեկից էլ վախ չունեին, եկեղեցի էլ էին գնում, մկրտություններ, պսակներ, նույնիսկ թաղումներ էին կատարում բացահայտ կերպով; Ասենք ինչի՞ց պիտի վախենային: Նրանք գործադրում էին Հակոբոս Առաքյալի խոսքը. «*Ինչպես որ մեռած է մարմինը առանց հոգու, այնպես էլ մեռած է հավատը առանց գործերի» (Հակ. 2:26):* Փառք ու պատիվ նրանց…

ՓՈՔՐԻԿ ՀՈՎՍԵՓԸ

1962 թվականի Օգոստոս ամիսն էր: Ես իբրև Էջմիածին քաղաքի Սբ. Աստվածածին Եկեղեցու սաներից մեկը իմ հոգևոր առաջին ուսուցչի՝ Տեր Քերովբե Քահանայի և հորեղբորս՝ Տեր Հակոբի միջնորդությամբ, ընդամենը 13 տարեկան, իմ ուժերը փորձեցի ընդունվելու համար Սբ. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան: Սբ. Աստվածածին եկեղեցում սկսած 1960 թվականից երկուս ու կես տարի արդեն իսկ անցել էի հոգևոր կյանքի ճանապարհ և բավական լավ գիտեի արարողությունները, Սուրբ Պատարագը և մանավանդ թե ո՞ւր եմ գնում: Շատերը գալիս էին Ճեմարան, նույնիսկ խաչ հանել չգիտեին: Միակ դժվարությունը տարիքս էր, որը չէր համապատասխանում այդ ժամանակվա Ճեմարան ընդունվելու կարգ ու կանոնին, քանի որ պետական օրենքով Ճեմարան կարող էին ընդունվել միայն միջնակարգը ավարտած շրջանավարտ-ները՝ 17 տարեկան հասակում:

Անշուշտ ես այնքան սիրով ու հավատով էի լցված, որ այս բանը ինձ չէր հուզում ու նույնիսկ ինչ մեղքս թաքցնեմ՝ չէր անհանգստացնում: Իմ նպատակը մեկ էր, սովորել և հասնել հոգևոր կոչման ու ծառայել Աստծուն և իմ ժողովրդին: Ճեմարանի քննությունները հաջողությամբ հանձնելուց հետո, քննիչ հանձնախումբը հաշվի չառնելով տարիքս, ընդունվողների ցուցակում գրեց նաև իմ անունը: Կար մի անհանգստացնող հանգամանք; Բոլոր Ճեմարան ընդունվողները պիտի տային ամենավերջին քննությունը, որը Վազգեն Վեհափառն էր անցկացնում: Ամենադժվարը իհարկե այս էր: Վեհափառը մեծ հոգեբան էր և լավ էր հասկանում, թե ո՞վ ապագայում կարող է լինել մեր Եկեղեցու սպասավոր: Նա լավ գիտեր պետական օրենքը և

Ճեմարանի Տեսչությունը վստահ չէր, որ Վեհափառը իմ նման փոքր տարիք ունեցող պատանիի պիտի համաձայնվեր ընդունել: Վեհափառը ստանում էր միայն ընդունվողների ցանկը՝ անուն ազգանուն և վերջ, ոչ մի գնահատական և մեկ բոպե զրուցելով երիտասարդի հետ հասկանում էր, թե նա վաղվա հոգևորական պիտի կարողանա՞ դառնալ կամ ոչ և իր ցանկում նրա անվան դիմաց դնում էր (+) կամ (-): (+) ստացողները ընդունվում էին, իսկ (-)՝ ոչ:

Բոլոր ընդունվածներս արդեն Վեհարանում ենք ու սրտատրոփ և հուզված սպասում ենք Վեհափառին: Շատերը նույնսիկ Վազգեն Վեհափառին չէին էլ տեսել, միայն լսել էին նրա մասին, ես էլ: Իբրև ամենափոքր տարիք ունեցող մեկը, ես մնացի ետևում և դա լավ էր, որպեսզի ժամանակից շուտ (-) ստանալու տխուր փաստի առաջ չկանգնեի: Երիտասարդները հերթով մոտենում էին Վեհափառին, համբուրում նրա աջը, նա հարցեր էր տալիս և իր առջև դրված ցանկում դնում էր իր գնահատա-կանը: Եկավ վերջապես իմ հերթը: Մոտեցա արագ և համբուրեցի նրա աջը. «*Աստված օգնական Վեհափառ Տեր*» ասելով: Հիմա այնքան էլ բարձրահասակ չեմ, պատկերացրեք տասներեք տարեկանում ինչ հասակ պիտի ունենայի՝հազիվ գետնի երեսին երևում էի, ինչպես ժողովուրդն է ասում:

Վեհափառը տեսնելով ինձ, անակնկալի եկավ և անունս հարցրեց, ասացի *«Հովսեփ»:* «*Օհ, Աստվածահոր անունն է, լավ փոքրիկ ես երևում, որտե՞ղ ես ապրում և ո՞ւր ես սովորել ու քանի՞ տարեկան ես»:* Ասացի, որ «*Ծնվել եմ Էջմիածին քաղաքում և ապրում եմ այստեղ, մի քանի տարիներ սովորել եմ Սբ. Աստվածածին եկեղեցում և 13 տարեկան եմ»: «13՞»:* Վեհափառը զարմացած, բայց ժըպիտը դեմքին դարձավ դեպի Տեսուչ հայր Սուրբի կողմը ու

հարցրեց. «*Ո՞ւր է այս Սբ. Աստվածածին եկեղեցին, ինչ որ չեմ կարողանում հիշել»:* Հայր սուրբը պատասխանեց, որ Մայր Աթոռից դեպի հրապարակ տանող ճանապարհին գտնվող եկեղեցին է, որ կոչվում է նաև *(«Գյուղի ժամ»): «Ահ, հիմա հասկցա»:*

Վեհափառի երեսին ժպիտ երևաց և նա քնքշությամբ ու զգուշությամբ ձեռքը գլխիս դրեց ու ասաց. *«Աղուոր պզտիկ կերևիս, ապրիս, տղաս, գնա»:* Ես շոյված ու հուզված նրա հայրական վերաբերմունքից, նույն արագությամբ համբուրեցի նրա ձեռքը, ինչպես որ ներս էի մտել և դուրս եկա, դեռևս կասկածանքի մեջ, *«Արդյոք ընդունվեցի՞»:* Երբ բոլորը վերջացրին, Տեսուչ Հայր Սուրբը դուրս եկավ ընդունարանից և ընթերցեց ընդունվողների ցանկը, նրանք, որոնց անվան դիմաց Վեհափառ Հայրապետը (+) էր դրել: Բոլորս անհամբեր սպասում էինք այս պահին: Ի զարմանս շատերի, հակառակ իմ փոքր տարիքին, Վեհափառը շրջանցել էր պետական օրենքը և հոգեբանորեն հասկացել, որ ապագային ես կարող եմ դառնալ սպասավորը Հայաստանյայց Առաքելական եկեղեցու և ինձ (+) էր դրել:

Ավելի քան վեց տարի սովորելուց հետո, երբ ավարտեցի Սբ. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը, Աստծու կամքով ինձ բախտ վիճակվեց դառնալ Կաթողիկոսարանի քարտուղար Վեհարանում և առիթը ունենալ օրը մի քանի ժամ աշխատակցելու ՎԱԶԳԵՆ ՎԵՀԱՓԱՌԻ ՆՄԱՆ ՄԵԾ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԻ ՀԵՏ: Քսան տարիներ շարունակ ես ստացա Վեհափառ Հայրապետի օրհնությունը իբրև քարտուղար: Այս պահին հուզումով եմ հիշում այդ տարիները: Մեծ պատիվ է ինձ համար…

ԾԵԾ 500 ԷՋԱՆՈՑ ԳԻՐՔ ԿԱՐԴԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Ինչպես ասել եմ շատ փոքր էի, որ Հոգևոր Ճեմարան ընդունվեցի: Ամենափոքրն էի, սակայն պետք է սովորեի և ոչ միայն սովորեի, այլև պիտի կարողանայի քայլ անել մեծահասակների հետ: Դեռևս ուշքի չեկած, առաջին արգելքը դրվեց իմ առաջ և այն էլ խիստ ձևով: Շաբաթ երեկոները մեր սերտողության ժամն էր, երբ պիտի սովորեինք մեր դասերը, որոնց հսկում էին Ճեմարանի փոխտեսուչը կամ վերակացուն: Վերակացուն, որը շատ խիստ մեկն էր ինձ ասաց, որ ես պետք է մինչև հաջորդ շաբաթ 500 էջանոց մի գիրք կարդամ և բովանդակության մասին գրավոր կարճ մի բան պատրաստեմ ու ներկա-յացնեմ իրեն:

«500 էջանոց մի գի՞րք»,- զարմացա ես, բայց ճարս ինչ, պիտի կատարեի: 13 տարեկան և 500 էջ: Նույնիսկ ինձանից մի քանի տարի մեծ աշակերտները դա չէին կարողանում անել ու պատժվում էին: Իսկ պատիժը ոչ այլ ինչ էր, եթե ոչ՝ ծեծը: Վերակացուն ծեծում էր ուղղակի բռունցքով կամ փայտով և չէր խնայում: Անցավ շաբաթը և երեկոյան սերտողության ժամանակ ինձանից պահանջվեց այն, ինչ որ հանձնարարված էր: Սակայն ես մյուս դասերի կողքին, որոնք նույնպես դժվար էին ինձ համար, չէի հասցրել 500 էջ կարդալ և ամփոփել: Եկավ պահը և … ես մի լավ ծեծ կերա: Խեղճ մայրիկ, եթե իմանայիր… Եվ այդպես մի քանի շաբաթ լավ ծեծ կերա, մինչև որ կարողացա 500 էջ կարդալ և ամփոփել: Այս ձևով ես դարձա Ճեմարանի ամենաարագ ընթերցողը: Ծեծը ինձ համար եղավ դաս, որպեսզի ես ընթերցասեր դառնամ:

ԵՐԵԽԱ Է ԴԵՌ…

14 տարեկան պատանի էի, համեմատած մյուս ուսանողների հետ, նրանք ամեն մեկը 19-22 տարեկան էին, բավական թրծված, ծանր, լուրջ, իսկ ես թռվռան, ժիր, ուրախ և չափից ավելի աշխույժ, նույնիսկ երեսիս աղվամազը հազիվ էր երևում:

Մեր վերակացուներից մեկը երիտասարդ վարդապետ էր, *(որ հետո կարգաթող եղավ)* ինձ շատ էր սիրում, սակայն երբեմն խաղեր էր սարքում գլխիս, որպեսզի մյուսները տեսնեն, որ ես երեխայական բաներ եմ անում: Եվ մի օր, նա տղաներին ասում է· թե՝ *«Տղաներ, դուք գիտե՞ք, որ Հովսեփը այնքան փոքր է, որ վանքի տված ճաշով չի կշտանում և նապաստակի պես խոտ է ուտում ու կաթ ծծում՝ ծծակով: Չե՞ք հավատում, գնացեք, բացեք իր մահճակալը և կտեսնեք»:* Պատկերացնում եք իմ վիճակը, 14 տարեկան մի պատանի, որն ընտրել էր հոգևոր կյանքի ճանապարհը և, որին օրինակ պիտի հանդիսանային փորձառու հոգևոր կոչմանը նվիրված անձինք, և հանկարծ··· ամոթից կարմրել էի, չէի կարողանում խոսել:

Տղաները հետաքրքրության համար վարդապետի հետ մտան իմ սենյակը, ուր ես մնում էի մի քանի այլ ուսանողների հետ, բարձրացրին իմ անկողնի բարձը և այ քեզ բան··· բարձի տակ դրված էր կաթով լի մի շիշ՝ ծծակը վրան և խոտ: *«Ահա տեսա՞ք, որ ասում էի»*- կարծես հաղթական ժպիտով ասաց Վարդապետը: Անշուշտ նրա արածը չար կատակ էր, բոլորը ծիծաղեցին և դուրս եկան, բայց ես քարացած մնացել էի տեղում, չգիտեմ ամոթի՞ց, թե՞՝ ցավից: Անկախ ինձանից սկսեցի լաց լինել:

Տարիներն անցան, ես էլ Աստծու կամքով մեծացա,

Սարկավագ ձեռնադրվեցի, ավարտեցի Հոգևոր Ճեմարանը ու մի օր էլ իբրև ամուսնացյալ քահանա հարմար վայրում հանդիպեցի այս Վարդապետին, որն արդեն կարգաթող էր և ամուսնացել էր հայտնի մի երգչուհու հետ: Ուզեցի ցավս մեղմացնել և ծիծաղելով պատմեցի նրան այս դեպքի մասին: Նա իհարկե հիշեց ու ներողություն խնդրեց իր այդ չար կատակի համար, որը ինձ համար կարող էր ճակատագրական լինել: Ես արդեն ներել էի նրան, բայց··· վերքը հասցված էր:

ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻՑ ԻՄ ՀԵՌԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1965 թվականն էր, ես ընդամենը տասնհինգ տարեկան էի: Մեծ քույրս ամուսնանում էր, թույլտվություն խնդրեցի մասնակցելու նրա հարսանիքին, ստացա ու գնացի, ներկա եղա ու երբ երկուշաբթի օրը հոգնած վերադարձա Ճեմարան, փորձեցի մի քիչ հանգստանալ: Պառկած էի, երբ զգացի, որ ոտքերս տաքանում են, արթնացա և տեսա, որ չարաճճի ընկերներս թուղթ են վառել իմ ոտքերի արանքում, որպեսզի արթնանամ: Սրա նման մի քանի այլ դեպքեր էլ եղան, հարկ չեմ համարում գրելու: Շատ բարկացա և դիմում գրեցի ազատվելու Ճեմարանից, պատճառաբանելով, որ ուզում եմ ոսկերիչ դառնալ և օգնել ծնողներիս, քանի որ նյութապես շատ նեղ վիճակում էին: Ինձանից բացի մենք հինգ երեխաներ էինք, հայրս կոշկակար էր և ծայր ծայրին հազիվ էր հասցնում, մայրս էլ մեկ սովխոզում էր աշխատում, մեկ շինարարության վրա: Մի խոսքով նյութական վիճակներս բարվոք չէր:

Ճեմարանի փոխ-տեսուչը հորեղբորս՝ Տեր Հակոբ ավագ Քահանա Հակոբյանի ընկերն էր: Փոխանակ դիմումիս ընթացք տալու, այն հանձնել էր հորեղբորս, որը դիմումը ձեռքին բարկացած եկավ մոտս: *«Երևում է հոգևոր կյանքը քեզ համար ձանձրալի է հա, հիմա էլ ուզում ես ոսկերի՞չ դառնալ, դա ո՞րտեղից միտքդ եկավ: Լավ է, որ դիմումդ իմ մոտ եկավ ու ընթացք չտվեցին: Ես քեզ հասկանում եմ, բայց մի՛ մտահոգվիր: Եղբորս ընտանիքին ես կօգնեմ այնքան, ինչքան հնարավորություն ունեմ, իսկ դու պետք է սովորես, քո ապագան եկեղեցական դառնալն է, Աստված քեզ ընտրել է և դու պետք է հասնես քո նպատակին: Դու այդ շնորհքը ունես, մի՛ վհատվիր, ամեն ինչ դեռ առջևում է»:*

Ես գլուխս կախ մեղավորի պես լսում էի իմ խնամատար հորեղբոր ձայնը, որը այնքան քաղցր ու հմայիչ էր հնչում: Այդ օրից անցել են ավելի քան քա-ռասունութ տարիներ, սակայն ինչքան ճիշտ ու հեռատես էր նա, որ կարողացել էր կանխագուշակել իմ հոգևոր կյանքի ճանապարհը: Սիրելի հորեղբայր, ինչքան երախտապարտ եմ քեզ 39 տարիների իմ քահանայական գործունեությամբ: Հիշում եմ, երբ 1974 թվականին ամուսնացյալ քահանա պիտի ձեռնադրվեի, քեզանից խորհուրդ հարց-րեցի, թե ինչպե՞ս անեմ, որ սիրված լինեմ մեր ժողովրդի կողմից, ինչպես դու *(ասել եմ, բայց մի անգամ ևս ինձ համար հաճելի է կրկնելը: Ժողովուրդը այն փողոցում, ուր որ նա ապրում էր, կոչել էր իր անունով՝ «Տեր Հակոբի փողոց» և մինչև այսօր էլ այդ անունը մնում է, հակառակ, որ փողոցի անունը Բուլղարացի մի համայնավարի՝ Դիմիտրովի անունով էր):* Դու ինձ պատասխանեցիր.

«Տղաս, աղբյուրդ միշտ մաքուր ու զուլալ պահիր: Քո աղբյուրը և՛ նյութական և՛ բարոյական իմաստով, ժողովուրդն է: Ինչպես ափսեի մեջ ջուրը մեկ շաբաթ մնալով կհոտի, եթե անընդհատ ջուր չավելացնես, այդպես էլ քո ժողովրդի պարագային: Պետք է նրան սիրես մաքուր, անկեղծ և անշահախնդիր սիրով: Եթե աջ ձեռքով նվերներ կստանաս, ձախով էլ պիտի բաժանես քո ժողովրդիդ կարիքավորներին, զրկյալներին, անօթևաններին, որոնք ոչ միայն քո աղոթքներին պետք ունեն, այլ նաև քո օգնության»

«Հիշի՛ր Հակոբոս առաքյալի խոսքը. «Հավատքը առանց գործի մեռած է»: Ես այսքան տարիների իմ քահանայագործությամբ փորձեցի միշտ լինել իմ ժողովրդի հետ ու իմ ժողովրդի մեջ, թե՛ տխրության և թե՛ ուրախության

պահերին: Սիրեցի ու սիրվեցի: Գնա և սիրիր մեր ժողովրդին: Նա արժանի է քո սիրույն և վստահ եմ շատ տարիներ հետո, երբ ես էլ չեմ լինի, ժողովուրդը անպայման կգնահատի ու կարժևորի քո նվիրյալ և անձնվեր ծառայությունը»: Ժամանակը ցույց տվեց հորեղբորս, փորձառու ավագ քահանայի խոսքերի ճշմարտացիությունը:

Սիրելի հորեղբայր, դու հիմա ինձ նայում ես քո հոգու աչքերով, հպարտանում և ժպտում ես իմ այս գրած հուշերիս վրա, որովհետև Դու իբրև իմ Հոգևոր Ծնողը, երկրային կյանքումդ արդեն իսկ կանխագուշակեցիր իմ հոգևոր կյանքի փշոտ, երբեմն տառապալից, բայց Աստծուն հաճելի ու ընդունելի ճանապարհը: Ես փորձեցի շարունակել քո կիսատ թողած ծառայությունը: Ուրախ եմ վկայելու, որ ինձանից հետո էլ երիտասարդ, խոստումնալից և նվիրյալ մի նոր Տեր Հակոբ Քահանա Հակոբյան, թոռդ, արտաքինով, երաժշտական ընդունակություններով և ջերմ հավատով քեզ նման, գալիս է արժանիորեն փոխարինելու իր պապին: Բարի երթ իր ծառայության: Թող լույս իջնի քո հոգուն, սիրելիդ իմ հորեղբայր: Հիշատակն արդարույն օրհնությամբ եղիցի:

ՆՈՐ ՎԵՀԱՐԱՆԻ ՄԵԾ ՊԱՀԵՍՏԻ ԳՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Լավ չեմ հիշում, հավանաբար 1965 թվականն էր, երբ տեղի ունեցավ Վեհարանի մեծ պահեստի գողությունը: Այն ժամանակ նոր Վեհարանի մուտքի մոտ պահակ կար, որը հսկում էր Վազգեն Վեհափառի և շրջակայքի անվընտանգությունը:

Գողության մասին մենք իմացանք միայն վաղ առավոտյան: Դեպքը այսպես էր տեղի ունեցել: Նախկին շրջանավարտ ճեմարանականներ, *(որոնցից մեկը գրադարանի պատասխանատուն էր),* գիշերով զբաղեցնում են պահակին և քիչ-քիչ նոր Վեհարանի պահեստից հանում ձմեռային տաք հագուստներ, եկեղեցական կտորներ, կոշիկներ, մի խոսքով, ինչ որ այն ժամանակ արժեք ուներ: Վազգեն Վեհափառը դրանք իբրև նվեր ստանում էր արտասահմանից և անվճար բաժանում տոնական օրերին հոգևորականներին ու երբեմն էլ կարիքավոր պաշտոնյաներին: Պահակը, որը մուսալեռցի էր և արթուն մեկն էր, զգում է մի բան և անմիջապես կտրվելով իրեն զբաղեցնողից, դուրս է գալիս ու կարողանում բռնել գողերին: Երեք հոգի էին, մեկն էլ՝ արտասահմանից էր:

Առավոտյան, երբ քայլում էինք վերակացու Մեսրոպ Վարդապետի հետ *(այս վարդապետը բոլորիս հայտնի Խորեն Պալյանն է, որն իր կարգը թողեց ու ամուսնացավ երգչուհի Լուսինե Զաքարյանի հետ, այժմ հանգուցյալ)* ճեմարանի պարսպի երկայնքով, հեռվում նկատեցինք մի սև առարկա, կիսամութ էր, դեռ լույսը լավ չէր բացվել և մենք էլ այդ գողության ծանր տպավորության տակ էինք: *«Հայր Սուրբ, կարծես թե վանականներից մեկին սպանել են, երևի դա էլ դիակն է»,-* սրտնեղված և հուզված խոսքս ուղղեցի Վարդապետին, հեռվից մեզ այդպես

էր թվում: Նա էլ մտահոգ էր: Ավելի մոտենալով, ուրախություն մեզ տեսանք, որ երևացող սև զանգվածը ոչ թե դիակ է, այլ փոսի մեջ նետված անգլիական եկեղեցական սև զգեստի լավագույն կտոր (մի մեծ թոփ): Վեհափառը այս շրջանավարտներից չէր սպասում, քանի որ երեքն էլ լավագույն գնահատականներով Հոգևոր Ճեմարանը ավարտած վստահելի երիտասարդներ էին ու ապագա հոգևորականներ:

Վազգեն Վեհափառը ներողամտության մեծ մոտեցում ցույց տվեց, ուղղակի ներեց նրանց և չուզեց, որ դատապարտվեն: Սակայն կառավարությունը հակառակ Վեհափառի ներողամտության գողության համար նրանց օրենքով դատապարտեց կարճ ժամանակվա բանտարկության: Բնական է, որ նրանք հեռացվեցին վանքից, սակայն նրանց այս սխալ և տգեղ արարքը երկար ժամանակ դրոշմվեցին մեր սրտում: Սա մի տեսակ ապտակ էր, ըստ իս երախտամոռություն էր Ազգիս Վեհափառ Հայրապետի հոգատարության, սիրույն ու խնամքին և Հոգևոր Ճեմարանում ստացած իրենց հոգևոր կրթության: Տասնաբանյա պատվիրանների մեջ ասվում է, *«Մի գողացիր»* և վերջ, ոչ մի պատճառ ընդունելի չի: *«Մի»*-ն հստակ շեշտված է, որը արգելման նշան է: Ճիշտ է այդ երեք երիտասարդները իրենց պատիժը կրելուց հետո, քանի որ խելացի էին, հասան գիտության բարձր նվաճումների, բայց գոնե իմ մեջ նրանց արարքը երբեք չմոռացվեց:

Նրանք իրենց խնամող ձեռքը փոխանակ համբուրելու, ոչ միայն հրեցին իրենցից, այլ՝ նյութին գերի դարձան և վստահ եմ այդպիսին էլ մնացին: Այստեղ ես կուզենայի կրկին անգամ մասնավոր կերպով շեշտել Վազգեն Վեհափառի ներողամտության ոգին: Վեհափառը վարվեց Հիսու-

սի նման, Որը խաչի վրա, խնդրեց Հորից, որ ների Իրեն տանջողներին, չարչարողներին, արյունլվա անողներին· *«Հա՛յր, ների՛ր դրանց, որովհետև չգիտեն, թե ինչ են անում» (Ղուկ. 23:34):*

Տարիներ հետո արտասահմանյան մի երկրում, ուր հյուրաբար գտնվում էի իբրև զբոսաշրջիկ իմ հարազատներից մեկի տանը, հանդիպեցի այդ գողություն անողներից մեկին, որը փեսա էր երևելի մի մեծահարուստի: Նրա համար հանդիպումը անակնկալ էր: Մի պահ, երբ առանձին էինք, նա խնդրեց, որ այս մասին ոչ ոքի չհայտնեմ: Երևի զղջացել ու ամաչում էր: Երանի···

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

1966 թվականն էր և այդ տարին շատ էր տարածված հարբուխ հիվանդությունը: Ես ընդամենը 16 տարեկան էի: Ճեմարանի ուսանողության մի մասն էլ զերծ չմնաց դրանից: Մի քանի հոգի այդ հիվանդությամբ պառկեցին, բայց դա քիչ էր, որպեսզի դասերը ընդհատվեին ու մենք ազատ լինեինք: Մեր կարճ խելքով որոշեցինք խաղ խաղալ: Խաղն այսպիսին էր. ուսանողների մեծ մասը պիտի սուտ հիվանդանար, որպեսզի գոնե երկու շաբաթով Ճեմարանի դասերը դադարեցվեին ու մենք ազատ շունչ քաշեինք. մի խոսքով հանգստանայինք: Երիտասարդի չարաճիճություն: Վստահ եմ ձեզանից շատերն էլ, որոնք սովորել են համալսարանում կամ այլ հաստատություններում այսպիսի չարաճիճի բաներ արել են:

Ուրեմն, մեզ լավ կհասկանան: Այդ ժամանակ Ճեմարանն ուներ ընդամենը՝ 40 աշակերտ: Հետաքրքիրն այն էր, որ կառավարությունը Վեհափառին թույլ չէր տալիս, որպեսզի 41 աշակերտ ունենա: Այն ժամանակ ես փոքր էի և չէի հասկանում, հետագայում, երբ մեծացա, ավելի մոտիկից ծանոթացա իրավիճակին, նոր անդրադարձա, թե ինչո՞ւ: Քանի որ անաստվածության գաղափարախոսություն էր, հարմար չէր, որ Ճեմարանը շատ շրջանավարտներ ունենար ու Հայաստանը լցվեր հոգևորականներով: Նրանք ժամանակին եղածներին Սիբիր քշեցին, որպեսզի եկեղեցիներում քահանաներ չլինեն ու փակելը հեշտ լինի: Դրա համար եկեղեցիներից շատերը գոմերի ու պահեստների վերածվեցին: Նպատակը պարզ էր. չզորացնել եկեղեցին նոր սերունդով:

Ուրեմն քառասուն աշակերտներից 27-ը հոգի հիվանդացանք, դարձանք մեծամասնություն: Հիշում եմ հատուկ դեղ կար մազի նման, որ քսում էինք մեր քթերին, արհեստական կարմրություն առաջացնելու, իբրև թե սուր հարբուխով հիվանդ ենք: Մի քանի օր անցավ, մենք ուրախացանք, որ մեր խաղը իր նպատակին է հասնում, սակայն շատ կարճ տևեց մեր ուրախությունը: Հիմա կիմանաք, թե ինչպե՞ս: Մի օր մեր հանրակացարանը մտան վերակացու Տեր Հայրը «դոխտուր» (բժիշկ) անունով Սարկավագի հետ: Այդ Սարկավագը մի քիչ բժշկությունից հասկանում էր, դրա համար էլ անունը կնքել էինք «դոխտուր»: Նրան տեսնելով, հասկացանք, որ մեր խաղը իր ավարտին է մոտենում՝ ոչ մեր օգտին:

Վերակացուն, որը հայտնի էր աշակերտների նկատմամբ իր ծեծով, «Դոխտուր»-ին պատվիրեց, որ ստուգի, թե ո՞վ է իսկական հիվանդը և ո՞վ է ձևացնողը: «Դոխտուր»-Սարկավագը մոտենում էր հիվանդին, «ստուգում ու դառնալով վերակացուին, ասում էր, հիվա՞նդ է, թե…»: Ով որ հիվանդ չէր, վերակացուն բռնում էր, դուրս հանում մահճակալի միջից, մի երկու հատ հարված տալիս ծոծրակին ու ստիպում էր, որպեսզի հագուստները հագնեն և դուրս գնան: Ահա այս ձևով վերակացուն «Դոխտուր«-ի թելադրանքով հիվանդներից 15-ին առողջ հանեց ու բնականաբար այդքան խնամքով մշակված մեր խաղը խափանվեց: Անշուշտ ճեմարանի կարգ ու կանոնը խախտելու և ղեկավարությանը մոլորեցնելու համար սուտ հիվանդները պատժվեցին: Դժբախտաբար թե բարեբախտաբար պատիժ ստացողների մեջ ես էլ կայի: Հեյ գիտի ջահելություն;

16 տարեկան եղա և կառավարության օրենքով, ինչպես մյուս բոլոր տղաները, ես էլ անձնագիր ստացա: Հայաստանում 16 տարեկան հասակում ես անձնագիր ստանում: Ուրախացել էի, որ վերջապես ես էլ Հայաստանի քաղաքացի եմ դարձել: Բայց մի բան չէի կարողանում պատկերացնել, թե ինչպե՞ս է լինում անձնագրի ստացումը ու իմ ճեմարանական դասընկերներիս միամիտ-միամիտ ասում էի, թե՝ *«Ամեն տարի անձնագիրս փոխվելու է, չէ՞»:*

Կարծում էի, թե ամեն տարի ինձ նոր անձնագիր պիտի տան: Եթե մի բան չգիտես, ինչպե՞ս կարող ես այն պատկերացնել: Ես էլ պատանի էի, միամիտ տղա, ճեմարանում ամենակրտսերը, ո՞րտեղից պիտի իմանայի այս մասին: Ճեմարանական ընկերներս էլ ինձանից մի քանի տարով մեծ էին և քահ-քահ ծիծաղում էին իմ միամտության վրա ու ձեռք առնելուց հետո, բացատրում էին, որ այդ այդպես չէ, անձնագիրը միայն մեկ անգամ է տրվում, երբ ժամանակը լրանում է, նոր կնիք են դնում նրա վրա ու ժամկետը երկարացնում են: Միամիտ պատանի, դեռ ինչեր-ինչեր պիտի սովորես, որ մարդ դառնաս և հասկանաս աշխարհի չարն ու բարին, լավն ու վատը, գեղեցիկն ու տգեղը:

Իսկ դուք ինչո՞ւ եք ծիծաղում, միամիտ պատանի եք գտել, հա…: Ոչինչ, ժողովուրդն ասում է. *«Ծիծաղում է նա, ով վերջում է ծիծաղում»* կամ *«Ճտերն աշնանն են հաշվում»: Ես դեռ իմ խոսքը չեմ ասել, երբ ժամանակը գա, կասեմ: Հետո… դուք գիտեք, չնեղանաք ինձանից»:*

ՖԱՆՏԱՄԱՍԸ

(1966 թվականին ֆրանսիական մի հայտնի շարժանկարի (կինոյի) անունն է)

1966 թվականն էր: Բեյրութից մի մտավորական էր եկել, որին Վազգեն Վեհափառը Հոգևոր Ճեմարանի վերակացու էր նշանակել: Շատ տարօրինակ մարդ էր: Արտաքինն էլ այդ էր ցույց տալիս, բարձրահասակ, կիսաճաղատ գլխով, բիզ-բիզ մազերով, խոշոր կապույտ աչքերով և մանավանդ խոսելաձևով: Արդեն նա արևմտահայերեն էր խոսում և մեզ արևելահայերիս համար դա իսկ տարօրինակ էր: Նրա պարտականությունն էր իբրև վերակացու հսկել մեզ, հետևել մեր ամեն մի քայլին և այդ մասին զեկուցել Տեսուչին: Ուսանողները երեկոյան ժամը 10:00-ին պարտադիր զինվորականների նման անկողնում պիտի լինեին: Վերակացուն մեզ տեղավորելուց հետո, մեկնեց: Մեզանից մի քանիսը, ինչպես ասում են ավելի ճարպիկները, որոնց մեջ ես էլ կայի, գնացինք դիտելու վանքին կից զբոսայգու մեջ ամառային կինոյում ցուցադրվող մի հայտնի ֆրանսիական ժապավեն, որը կոչվում էր «Ֆանտամաս»: «

«Ֆանտամաս»-ի դերակատարը հատուկ դիմակ էր դնում, որը ճաղատ մարդու տպաավորություն էր թողնում: Որպեսզի կարողանայինք ամառային կինոյի *(շարժապատկեր)* այդ ժապավենը դիտել, պիտի բարձրանայինք պատերի վրա և պառկած նայեինք: Մեր չար բախտից, վերակացուն տուն գնալու ճանապարհին միտքը փոխում է և ուզում է մի անգամ ևս ստուգել, թե ուսանողները քնա՞ծ են կամ ոչ: Գալիս է ննջասենյակ ու տեսնում, որ մի քանիսը բացակա են: Խենթացած սկսում է փնտրել ամբողջ վանքով մեկ, թե ո՞ւր կարող են լինել սրանք: Ճեմարանի

շենքի մոտից անցնելու պահին ստվերներ է նկատում ու հասկանում է, որ մենք պատի վրա ենք, քանի որ ժապավենի ձայները լսվում էին: Մոտենալով պարսպին, նա առանց ուշադրություն դարձնելու կինոյի սրահում նստած ժողովրդին, սկսում է գոռալ· «*Գողեր, ավազակներ, անմիջապես վար իջեք»:* Այդ ձայնի վրա մեր տղաներից մեկը էլեքտրական սյունը բռնելով արագ իջնում է նրա մոտ ու անհայտանում: Վերակացուն շփոթված այդ անակնկալից, ասում է· *«Ասիկա ո՞վ էր, կապի՞կ էր, ինչ էր»:*

Մենք պարսպի վրա վախից չորացել էինք: Նկատի ունեցեք, որ ես գոնե այն ժամանակ տասնվեց տարեկան էի, մյուսները մի քիչ ավելի տարիքով էին: Վերակացուն չէր դադարում գոռալուց: «*Գողեր« ավազակներ, անմիջապես վար իջեք»*: Կինոյի սրահում նստած ժողովրդից արդեն անհանգիստ շարժումներ ունեցողներ կային, թե սա ի՞նչ ձայն է: Մի քիչ էլ սպասեցինք, սակայն վերակացուի ձայնը չէր կանգնում: Մեր տղաներից մեկը, որը ճաղատի նման էր, ճակատի մասում ավելի քիչ մազ ուներ, չդիմացավ, պատից թռավ կինոյի սրահը ու վազելով այն կողմից փախավ: Սրահում նստած մարդիկ սկսեցին գոռալ «Ֆանտամաս»-ը, «Ֆանտամաս»-ը և զարմանքի հետ պայթեց մի ուրախ ծիծաղ:

Ու այսպես ամեն մեկս մի կողմ փախչելով, գնացինք ննջասենյակ ու սուտ քնած ձևացանք, մինչև որ վերակացուն եկավ: Նա եկավ, տեսավ, որ բոլորը տեղում են, ամբողջ ուսանողությանը քնից հանեց ու սկսվեց հարցուփորձը, սակայն այդպես էլ *«փախչողները»* չհայտնաբերվեցին: Հաջորդ օրը սակայն ըստ նրա կասկածվող դասարանի տղաների երեսից, ամբողջ մի դասարան պատժվեց ճաշի ժամանակ ոտքի մնալով: Այն ժամանակվա

Ճեմարանի պատիժներից մեկն էլ այդ էր, ոտքի մնալ ու նայել, թե ինչպես են ուտում ընկերներդ: Անշուշտ բոլորի գնալուց հետո, պատժվողները սոված չէին մնում, ուտում էին, բայց գլխավորապես պատժի նպատակն այն էր, որ մնացածները տեսնեն սխալ գործողների պատիժը: Վերակացուի հոտառությունը ճիշտ տեղին էր, քանի որ այդ դասարանի տղաներն էին ննջասենյակից փախչողներն ու ֆիլմը նայողները: Այդպես էլ է լինում: Պատանի էինք:

17-18 տարեկան երիտասարդ էի: Մեր լսարանում ունեինք մեկը, որ բանաստեղծություններ էր գրում, ոչ միայն բանաստեղծություններ, այլ նաև գրում էր արձակի ձևով: Հետաքրքիր բանաստեղծություններ էին: Մի օր էլ ես ոգևորված նրանից, նստեցի և ով գիտի, հիմա չեմ հիշում քանի հատ, բայց իրար ետևից գրեցի ու գրեցի: Երևի այդ պահին մուսաս եկել էր: Հաջորդ օրը լսարանում այդ բանաստեղծությունները ցույց տվեցի իմ դասարանցիներին: Ով զարմանք և հուսահատություն, փոխանակ ինձ քաջալերելու, սկսեցին ձեռ առնել և ծիծաղել իմ վրա: Հիմա եմ ես անդրադառնում, թե ինչքան սխալ էին նրանք այդպես ինձ հետ վարվելու համար:

Ես խիստ նեղվեցի ու դուրս եկա. այդ պահին իմ աչքում ո՛չ բանաստեղծություններս էին երևում և ո՛չ մեկը, միայն ներսումս փոթորիկ էր: Սաստիկ վիրավորված էի: Ազատ ժամիս գնացի սենյակիս ուղղությամբ, բարկացած լուցկին վերցրեցի ու կրակի տվի ամբողջ գրածս: Գուցե սխալ էր, բայց այդ պահին արեցի: Շատ հնարավոր էր, որ բանաստեղծ դառնայի, բայց երևի Աստծու կամքն էր, որ այդպես չեղավ:

Բանաստեղծ չդարձա, բայց շատ տարիներ հետո հրատարակեցի չորս քարոզգրքեր Աստծու ճշմարտությունների մասին, որոնք մեր ժողովրդի բոլոր խավերի մոտ մեծ ընդունելություն գտան: Բանաստեղծություններս այրեցի, բայց տարիներ հետո հոգուս դռներն ու սրտիս լարերը լայն բացեցի իմ ժողովրդի և իմ սիրելի Եկեղեցու առաջ:

ՖՈՒՏԲՈԼԻ ԽԱՂԸ

1967 թվականն էր: Հոգևոր Ճեմարանը ոչ միայն հոգևոր սնունդ էր տալիս, այլեւ կոփում էր մարմինը, Ավետարանի այն խոսքով, թե՝ *«Չգիտե՞ք» թէ ձեր մարմինները տաճար են Սուրբ Հոգու, որ ձեր մէջ է, և որն ստացել եք Աստծուց, և դուք ձեր տերը չեք, քանզի մեծ գնով գնվեցիք: Փառավորեցեք Աստծուն ձեր մարմինների մեջ» (Ա· Կորնթ· 6:19-20)*: Ամեն առավոտ Ճեմարանի սաները մարմնամարզություն էին անում մինչև ժամերգության մասնակցելը, ոչ միայն մարմնամարզություն, երևի ձեզ զարմանալի կթվա, այլ նաև մենք ուսանողներս ֆուտբոլի խումբ ունեինք և ամեն Կիրակի Սուրբ Պատարագից հետո վարձելով Էջմիածին քաղաքի ֆուտբոլի դաշտը, մեր մարզիչի ուղեկցությամբ, գնում էինք կոփելու մեր մարմինը՝ ֆուտբոլ խաղալով: Եվ պետք է ասել բոլորս էլ ուրախ էինք ու գոհ: Մեր խմբում շատ լավ խաղացողներ կային, օրինակ 9 համարի տակ խաղում էր իմ դասարանցի Վրեժը, որը Պարսկաստանից էր, բայց Հնդկաստանի Մարդասիրական Ճեմարանում էր սովորել ու շարունակում էր իր ուսումը Սբ. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանում և հետաքրքիրն այն էր, որ նա երբեք կոշիկ չէր հագնում ու բոբիկ էր խաղում և նրա հարվածը այնքան ուժեղ էր, որ դարպասապահը դժվարությամբ էր կարողանում ետ մղել:

Հնդկաստանում շատ բոբիկ էր ման եկել ու ոտքերը քարի պես էին դարձել: Պաշտպանությունում խաղում էին Սաղոյան եղբայրները՝ Ախալցխայից, Ռաֆիկն ու Ռուբիկը, *(որոնք զույգ էին և շատ անգամ դժվարություն էինք ունենում զանազանելու նրանց),* որոնց, չասելու համար անկարելի էր, բայց շատ դժվար էր շրջանցել: 10 համարի տակ խաղում էի ես իբրև թիմի ավագ: Հավատացեք, վատ

չէի խաղում: Մյուս տղաներն էլ լավ մարզավիճակում էին: Մի խոսքով մեր խումբը բավական ուժեղ կազմ ուներ:

Ուրեմն, ինչպես ասացի, մենք դաշտը վարձել էինք և պատրաստվում էինք խաղալու, երբ Երևանից եկան «Արարատ» ֆուտբոլային խմբի փոխարինողները: Մարզիչների փոխհամաձայնությամբ, առանձին մարզվելու փոխարեն, պիտի միմյանց հետ խաղայինք: Խաղն անցավ առանց որևէ միջադեպի: Մենք արդարացրինք մեր մարզիչի սպասելիքները ու խաղը շահեցինք 5:2 հաշվով՝ անակնկալ մատուցելով Երևանի ֆուտբոլիստներին: Նրանք ուղղակի հիացած ու զարմացած էին մեր խաղով:

Մենք անհավանականը հավանական դարձրինք, հաղթելով մի խմբի, որը Հայաստանի առաջին ֆուտբոլային խմբի փոխարինող կազմն էր, ասել է, թե նրանք համալրում էին գլխավոր թիմին: Նրանց մարզիչը նույնիսկ առաջարկեց մեզ դուրս գալ Ճեմարանի սահմաններից ու Հայաստանով մեկ իբրև առանձին թիմ ներկայանալ և խաղալ: Հետաքրքիր առաջարկ էր, բայց անիրականալի: Մենք ասացինք, որ դա Վազգեն Վեհափառի հետ է կապված, նա գիտի, թե դա ինչպե՞ս պիտի լինի: Ինչքան ես տեղյակ եմ, նրանք միջնորդություն էին հարուցել այս հարցի կապակցությամբ, բայց քանի որ անաստվածության կարգեր էին՝ արգելված էր խաչ կրելը, խաչ հանելը, նույնիսկ դպրոցներում սովորեցնում էին *«Աստված չկա, հավատք չկա, եկեղեցին հաշիշ է»* և այլն, ապա այս հարցը անշուշտ փակվեց:

«Եկեղեցին պետությունից անջատ է և իրավունք չունի քաղաքականությամբ զբաղվելու»,- պատասխանը այս էր: Իհարկե Վազգեն Վեհափառն էլ լավ գիտեր այս բոլորը, դրա համար էլ որևէ ձևով լուծում չտրվեց: Ըստ իմ

տեղեկությունների, երբ այս մասին ասել էին Վեհափառին, նա հետաքրքիր ժպիտով էր պատասխանել, որ կարող էր այս նշանակել. «*Զարմանում եմ այս հարցը մեջտեղ բերելու համար. Դուք մոռանում եք, թե ո՞ր երկրում եք ապրում և ի՞նչ կարգեր են. իսկ մտածե՞լ եք, եթե ասենք թույլատրեն, ի՞նչ անուն պիտի տանք Ճեմարանի խմբին»:* Իրապես ի՞նչ: Վեհափառը ճիշտ էր, նույնիսկ կարող էր ծիծաղելի թվալ շատերին, քանի որ ֆուտբոլն էլ էր դարձել քաղաքակա-նություն:

Ու այսպես մեր խումբը մնաց Հոգևոր Ճեմարանի սահմաններից ներս և մենք մեր ֆուտբոլը խաղացինք, որը մաքուր էր, արդար էր և ամենակարևորը՝ հեռու էր քաղաքականությունից:

ՀՈՐԵՂԲՈՐՍ՝ ՏԵՐ ՀԱԿՈԲԻ ԱՊՏԱԿԸ

Ճեմարանական տարիներն էին, արդեն 16 տարեկան էի և սովորում էի առաջին լսարանում: Մեզ հետ սովորում էին նաև Բեյրութից եկած տղաներ, որոնցից մի քանիսը ծխում էին: Ես ապրում էի նրանց հետ մի սենյակում: Լույսը հանգցնելուց հետո ես կրակներ էի տեսնում ու ծուխի հոտ զգում: Սկզբում գլխի չէի ընկնում, թե ի՞նչ է տեղի ունենում, մինչև, որ մի օր պատահական լույսը վառեցի ու տեսա, որ նրանք ծխում են: Երիտասարդ էի և նրանք առաջարկեցին, որ փորձեմ, ես էլ սկսեցի ծխել: Հակառակ որ Հոգևոր Ճեմարանում արգելված էր ծխելը, բայց մենք գաղտնի էինք ծխում: Այդ օրվանից անցել էր մեկ տարի:

Մի օր, երբ գաղտնի սենյակում ծխում էի, պատուհանի մոտով անցավ մեր հանդերձապահուհին և տեսավ, որ ծխում եմ. չհասցրեցի թաքցնել: Մտածեցի, վերջ, հիմա Տեսուչը կամ վերակացուն կիմանան ու իմ հարցերը կլուծեն և կհեռացնեն Ճեմարանից: Անմիջապես ծխախոտը հանգցրեցի, բայց չհասցրի սենյակից դուրս գալ, երբ վերակացուն ներս մտավ: Նա ինքը ծխող չէր և անմիջապես զգաց ծուխի հոտը և հասկացավ, որ ծխողը ես եմ, քանի որ ինձանից բացի սենյակում ոչ ոք չկար: Զարմանալիորեն ինձ ոչինչ չասեց ու գնաց: Չանցավ կես ժամ, հորեղբայրս՝ Տեր Հակոբը, որ վերակացուի ընկերն էր, ինձ կանչեց:

Գնացի, բայց ճանապարհին մտածեցի, որ վստահ վերակացուն է իրեն ասել այս մասին: Ես հորեղբորս շատ էի սիրում և նրա ասածը միշտ ինձ համար օրենք էր: Ինձ տեսնելով համբուրեց, բայց խիստ հայացքով ուղղակի աչքերիս մեջ նայելով, հարցրեց. *«Ծխո՞ւմ ես»:* Ես սուտ չէի կարող խոսել, այդպես էի սովորել: Պատասխանեցի. *«Այո՛»:*

Տխրեց և շարունակեց խիստ տոնով. «*Գիտես չէ, որ ես 35 տարի է ծխում եմ ու սրա ձեռքը կրակն եմ ընկել և ինչքան փորձում եմ ազատվել սրանից, չեմ կարողանում»:* Այսպես արտահայտվելով, գլուխը շարժեց ու ասաց, որ լավ չեմ անում:

Մենք կանգնած էինք դեմ դիմաց ու ես գլուխս ամոթից չէի կարողանում բարձրացնել: Դիմացս կանգնած էր մեկը, որն իմ ամբողջ կյանքի ընթացքում, թե՛ տանը, թե՛ մինչև Ճեմարան ընդունվելուց առաջ եկեղեցում և թե՛ այստեղ՝ ուսումնառության տարիներին, եղել էր իմ պահապան հրեշտակը ամեն տեսակետից: Ես ամոթից կարմրել էի: Մեր ժամանակ ամոթ հասկացությունը կար, հիմա ո՞վ է ամաչում և ո՞ւմից, աչքերիդ մեջ նայելով ինչ ասես որ չեն անում: *«Ինձ նայի՛ր»,*- մի տեսակ հրամայական տոնով ասաց ինձ: Վախվխելով գլուխս բարձրացրի և հանկարծ… զգացի երեսիս ուժեղ մի ապտակ: Անակնկալի եկա, չէի սպասում: Ապտակը շատ ուժեղ էր ու ցավեցրեց, բայց քանի որ հորեղբորս ես շատ էի սիրում, այդ ապտակը ինձ համար օրհնություն եղավ: Ապտակը նշան էր, որ անմիջապես պիտի թողնեի ծխելը:

Այդ օրից անցել են 41 երկար տարիներ: Այսօր ես սիրով և ուրախությամբ եմ հիշում այդ հիշարժան և զգաստացնող ապտակը: Ապտակ, որը վերջ տվեց իմ ծխելուն: Երանի մենք էլ կարողանայինք այդ զգաստացնող ու օրհնյալ ապտակը տալ մեր զավակներին:

Հորեղբայր, թող լույս իջնի հոգուդ, երբեք չեմ մոռանա այդ օրհնյալ ապտակդ:

ՏԵՍՈՒՉ ՀԱՅՐ ՍՈՒՐԲԻ «ՎՐԵԺԸ»…

Սբ. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանում սովորելուս հինգերորդ տարին, երբ արդեն Սարկավագ էի, դասընթացների շարքում Տեսչությունը երկու լրացուցիչ դասեր առաջադրեց, ոչ պարտադիր, այլ՝ ըստ ցանկության. ընտրությունը ուսանողինն էր: Դասերից մեկը՝ մեքենագրությունն էր, մյուսը՝ դաշնամուրը: Ես երաժշտություն և երգել շատ էի սիրում, բնականաբար դիմում տվեցի, որպեսզի գնամ դաշնամուրի դասերի: Սպասում էի դիմումիս պատասխանին և հանկարծ… Մինչև այս դիմումը, ասեմ, որ մի առիթով մի քանի երիտասարդներով սխալ էինք թույլ տվել և Տեսուչ Հայր Սուրբը ինձանից նեղացել էր ու նույնիսկ պատժել, հրահանգելով, որ արտագրեմ Գործք Առաքելոցը՝ իբրև գրավոր պատիժ *(Հոգևոր Ճեմարանում այս պատժի ձևն էլ էր ընդունված):*

Գրավոր պատիժը, որն ավելի քան քառասուն էջ էր, ժամանակից էլ շուտ արտագրեցի և նույնիսկ արժանացա Տեսուչ Հայր Սուրբի գնահատանքին, սակայն …. նա դժգոհ էր և զայրացած իմ դեմ ու սպասում էր մի առիթի, որպեսզի իր զայրութը իմ վրա թափի. և այդ առիթը ներկայացավ՝ իմ դիմումը: Ու նա առանց հաշվի առնելու իմ նախասիրությունը, նրա վրա մակագրել էր՝ մեքենագրություն: Այսպիսի հարվածի ես ճիշտն ասած չէի սպասում:

Այդ ժամանակ 17 տարեկան էի: Ինչպիսի հուսախաբություն, ինչպիսի վրդովմունք, ինչպիսի ներքին զայրույթ, որը չկարողացա ցույց տալ անզորությունից: Ուղարկել մեքենագրության դասերի: Սա մեծ պատիժ էր ինձ համար: Բայց ժողովուրդն ասում է. *«Չկա չարիք, առանց բարիքի»:* Հուզված ու բարկացած, որոշեցի գրամեքենան դարձնել դաշնամուր: Այնպես մեքենագրել, կարծես

դաշնամուրի ստեղների վրա պիտի նվագեի: Դասընթացները մեկ տարվա համար էին: Ես ավելի քան մեկ տարի առանձին մի գրամեքենայի վրա սովորում էի՝ հետևելով ուսուցչուհու հրահանգներին: Մեկ տարի հետո ես մեքենագրում էի տասը մատներով դաշնամուրի պես և տարվա վերջում քննությունից ստացա դասարանի ամենաբարձր գնահատականը՝ 5+:

Տեսուչ Հայր Սուրբը գոհ չէր: Նա իր «վրեժը» չէր հանել: Դեռ ավելին: Սբ. Էջմիածնի Ճեմարանը ավարտելուց հետո, Սարկավագները վանքի զանազան տեղերում պիտի աշխատեին, մինչև որ պաշտպանեին իրենց ավարտաճառերը: Վազգեն Վեհափառի Կաթողիկոսարանում քարտուղարի կարիք կար: Փնտրում էին մի Սարկավագի, որը լավ հայերեն և միաժամանակ լավ մեքենագրել իմանար: Ճեմարանում միայն մեկը կար, որը կարող էր լրացնել այդ բացը: Դա ե՛ս էի, քանի որ իբրև Ճեմարանավարտ լավ հայերեն գիտեի և հրաշալի մեքենագրում էի: Տեսուչը ստիպված Վազգեն Վեհափառին առաջարկեց իմ թեկնածությունը:

Վեհափառն էլ ինձ լավ գիտեր, քանի որ տարիներ շարունակ մեզ դասավանդում էր հոգեբանություն, տրամաբանություն և քարոզխոսություն: Եվ Հովսեփ Սարկավագ Հակոբյանս, ընդամենը 18 տարեկան, աղվամազը երեսիս, դարձա Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա. Հայրապետի Կաթողիկոսարանի մեքենագիր-քարտուղարը, ուր ծառայեցի ավելի քան քսան տարիներ: Պատիվ, որն Աստծու կողմից էր ինձ համար նախասահմանված: Աստծու կամքով երաժշտության փոխարեն գրամեքենան իբրև միջոց դարձավ իմ հոգևոր կյանքի իրական ճանապարհը: Ես այդ տարիներին

հավատս ու նվիրումս ավելիով զորացրի Վազգեն Վեհափառի շնչի ներքո, դաստիարակվեցի նրա առաքինությամբ ու խոնարհությամբ: Այդ բոլորը տևեցին ավելի քան 32 երկար տարի՝ իբրև ուսանող, քարտուղար և վանահայր Էջմիածին քաղաքի Սուրբ Աստվածածին Եկեղեցու:

Հոգելույս Վազգեն Վեհափառը դարձավ իմ դաստիարակը, ուսուցիչը, Հոգևոր Հայրը և մտքիս ու հոգուս կերտիչը: Ես իմ երիտասարդության հոգևոր քուրան անցա նրա ձեռքի տակով: Լավ հիշեք վերևում իմ ասած խոսքը· *«Չկա չարիք առանց բարիքի»:* Տեսուչ Հայր Սուրբի *«Վրեժը»* ինձ դարձրեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի քարտուղարը: Երանի այսպիսի *«վրեժ»*-ներ շատ լինեին:

ՁՄԵՐՈՒԿԸ

Վերջին լսարանում չորս հոգի էինք: Դա 1968 թվականն էր: Լսարանում ամենափոքրը ես էի՝ 18 տարեկան: Մնացածները 23-ից բարձր էին, մեկը Թուրքիայից էր, *(այժմ հանգուցյալ, երիտասարդ հասակում մահացավ առանց հոգևորական դառնալու),* մյուսը՝ Հնդկաստանից էր *(այժմ ամուսնացյալ քահանա է և պաշտոնավարում է Լոնդոնի եկեղեցիներից մեկում, միաժամանակ Լոնդոնի կենտրոնական թանգարանի հայկական բաժնի տնօրեն-վարիչն է),* երրորդը՝ Հայաստանի Սոլակ գյուղից էր, *(այժմ ծառայում է Լաչինում դպրոցի տնօրեն է, սարկավագ է, նա էլ հոգևորական չդարձավ),* վերջինը՝ ես էի:

Այդ ժամը Լսարանում ազատ էինք, տղաները իբրև Էջմիածնեցի, շուկան լավ իմացող, դրամ տվեցին ու խնդրեցին, որ գնամ, ձմերուկ առնեմ, բերեմ: Օրը տաք էր և ձմերուկ ուտելու ախորժակ կար: Գնացի, բայց քանի որ վանքից դուրս գալու համար մասնավոր թույլտվություն պիտի վերցնեի վերակացուից, *(Ճեմարանի օրենքն այդ էր և մենք գիտեինք),* ստիպված դուրս եկա ոչ բնական ճանապարհով՝ պատի վրայով: Դե ջահել էի, գիտեք, ուժս էլ, ճարպկությունս էլ տեղն էր: Մի խոսքով չերկարացնեմ, ձմերուկը գնեցի, առոք փառոք պատից ներս ցատկեցի ու պատրաստվեցի բացելու Ճեմարանի դուռը և այ քեզ փորձանք… դիմացս դուրս եկավ վերակացու Տեր Հայրը: Պատկերացնո՞ւմ եք իմ վիճակը. ձմերուկը ձեռքս, ապացույցը կա, ի՞նչ պատճառ կարող եմ բռնել արդարացնելու համար իմ քայլը:

Տեր հոր բնական հարցը այս էր. *«Այս ո՞րտեղից ես գալիս…. հա, պարզ է, շուկա՞ էիր գնացել»:* Փախուստի

տեղ չկար, արդարանալու համար ասացի. *«Տղաները դրամ էին տվել, մենք էլ ազատ էինք, ասի գնամ ձմերուկ առնեմ, ուտենք հովանանք»,*- անմեղ-անմեղ պատասխանեցի ես: Տեր Հայրը լսեց ինձ, խոժոռվեց ու խիստ տոնով ասաց. *«Անցի՛ր առաջ»* ու ցույց տվեց դեպի երկրորդ հարկ տանող աստիճանները: Պարզ էր, գնում էինք Լսարան: Ես վախ-վորած հետևեցի նրան, մտածելով , որ հիմա արդեն մի լավ ծեծ կուտեմ *(արդեն հինգ տարի շարունակ Տեր Թոդիկյան սիստեմով մի լավ ծեծ կերել էի, մարմինս էլ պնդացել էր):* Երկուսով մտանք լսարան ու նա դառնալով մեծերին ասաց.

«Խելոքներ, դուք չեք ամաչում, այս երիտասարդին մոլորության ու մեղքի մեջ եք գցում, չգիտե՞ք, որ արգելված է քաղաք դուրս գալ առանց թույլտվության»: Այս պարա-գայում մեզ համար մի քիչ մեղմացուցիչ հանգամանք կար, քանի որ վերջին Լսարանում էինք, արդեն ծեծ ուտելու ժամանակը անցել էր, ուստի տղաները ներողություն խնդ-րեցին Տեր Հորից և նրան հրավիրեցին միանալու իրենց: Հիմա կողքից մեկը կարող է ասել, *«Այ քեզ համարձակու-թյուն, հերիք չէ մեղքը գործել են, սխալը թույլ տվել, քիչ է, դեռ Տեր Հորն էլ հրավիրում են ձմերուկ ուտելու»:* Բնական է նա մերժեց և թելադրեց, որ հաջորդ անգամ նույն սխալը չգործենք:

Այս պարագայում մենք էժան պրծանք: Փախուստով գնված ձմերուկը իրապես էլ համով էր: Բարի ախորժակ:

ՄԱՐՇԱԼ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Հստակ չեմ հիշում, թե ո՞ր թվականն էր , բայց այսօրվա պես աչքիս առջևն է Խորհրդային Միության հերոս, Մարշալ Հովհաննես Բաղրամյանի Մայր Աթոռ Սուրբ էջմիածին այցելությունը և հանդիպումը Հոգևոր Ճեմարանի ուսանողության հետ: Մենք լավ ծանոթ էինք Մարշալ Բաղրամյանին, նրա հայրենական պատերազմի սխրագործություններին և նրա հետ հանդիպումը մեզ համար տոնական օր էր: Հակառակ, որ անաստվածության մթնոլորտ էր տիրում, սակայն նա ցանկություն էր հայտնել մեզ տեսնելու: Մենք շատ խանդավառված էինք և ուրախ: Մեզ հետ նրա հանդիպումը ջերմ էր ու հուզիչ: Բազմաթիվ հարց ու պատասխաններից հետո, նա մեկ առ մեկ մեզ մոտեցավ և իր ուրախությունը հայտնեց:

Այսպես են ՄԵԾԵՐԸ՝ ԽՈՆԱՐՀ ԵՎ ԱՌԱՔԻՆԻ:

Մի քանի տարիներ ինձ հետ սովորում էր Հնդկաստանից եկած Վրեժ Սարկավագ Ներսիսյանը, որը այդ ժամանակ ընդամենը քսան տարեկան էր: Վրեժը անգլիացիների նման սակավախոս էր և հանգիստ բնավորություն ուներ: Երբ Մարշալը նրան մոտեցավ ասաց. *«Տղաս, ես 70 տարեկան եմ և սպիտակել եմ, պարզ է, իսկ դու այդքան երիտասարդ ինչո՞ւ ես սպիտակել»:* Մարշալը կատակով էր ասում, քանի որ նրա գլխին մազ չկար, նա ճաղատ էր, ի՞նչ սպիտակության մասին կարող էր խոսք լինել: Վրեժի մազերը ժամանակից շուտ սպիտակել էին, ինչո՞ւ, ինքն էլ չգիտեր:

Մենք ասում էինք, թե Հնդկաստանում շոգ է եղել, դրանից էլ մազերը սպիտակել են: Անշուշտ սա էլ կատակ

էր: Մարշալը կատակի նույն տոնով շարունակեց. *«Մի՛ մտածիր, որ մազերդ ժամանակից շուտ սպիտակել են, դա իմաստության նշան է»* ու ժպիտը դեմքին հեռացաւ հրաժեշտ տալով բոլորիս: Մարշալը մարգարեի պես ճիշտ էր գուշակել նրա ապագան.

Վրեժ Սարկավագը ճեմարանը ավարտելուց հետո, իր ուսումը շարունակեց Լոնդոնում, ձեռնադրվեց ամուսնացյալ քահանա՝ Տեր Ներսես անունով և իր ծառայությունը բերեց Լոնդոնի եկեղեցիներից մեկում, ինչպես նաև եղավ Անգլիական թանգարանի հայկական բաժանմունքի Վարիչ-Տնօրենը ու մեծ հայրենասիրական գործ էր կատարում, հրատարակելով բազմաթիւ արժեքավոր ուսումնասիրություններ և օտարներին ծանոթացնելով մեր մշակույթի աննման գանձարանին: Նա այսօր էլ իր պատվավոր ծառայությունն է բերում Անգլիական այդ թանգարանում՝ նույն պաշտոնով: Ապրե՛ս Տեր Ներսես, իմ վաղեմի դասընկերս՝ ՎՐԵԺ ՍԱՐԿԱՎԱԳ ՆԵՐՍԵՍՅԱՆ:

ՎԵՐԱԿԱՑՈՒԻ ԱՊԱԿԵ ԱՄԱՆԸ ԵՎ ՀԱՎԸ

Հոգևոր Ճեմարանը մի վերակացու ուներ, որ եկել էր Բեյրութից ընտանիքով: Դեռևս Հայաստանի կյանքին վարժված չէր և երբեմն տարօրինակ բաներ էր անում: Օրինակ՝

ա. ժողովուրդը աշնան կողմը ձմեռվա ուտելիք էր ապահովում, որոշ բանջարեղեններ, ինչպես օրինակ՝ լոլիկ, սմբուկ եփելով ապակյա ամանների *(բանկա)* մեջ: Իմանալով այս մասին, վերակացուի կինը նույնպես պատրաստվում է բանջարեղեններ եփել ձմեռվա իբրև ուտելիք, որի համար պետք ուներ այդ ապակյա ամաններին, որոնք շուկայում ազատ վաճառքի չկային: Մեկը հավանաբար ծիծաղելու համար վերակացուին խորհուրդ է տալիս, գնալ և խնդրել Քաղաքապետից: Սա էլ առանց կշռադատելու ու մտածելու, թե ո՞ւր է գնում, ժամադրություն է վերցնում և հանդիպում Քաղաքապետին: Լսելով նրա խնդրանքը, Քաղաքապետը զարմանում է ու հարցնում, թե նա քանի՞ հատի կարիք ունի, մտածելով, որ մարդը մի հիսուն-վաթսուն հատի գոնե պետք պիտի ունենա: Վերակացուն պատասխանում է, թե «Քանի մը հատ«: *«Մի քանի հա՞տ»,*- զարմանում է *Քաղաքապետը ու հասկանում, որ այս* մարդը նորեկ է և տեղյակ չի ոչ մի բանից ու կարգադրում է բավարարել նրա խնդրանքը:

բ. Նույն օրը վերակացուն գնում է շուկա և գնում մի խոշոր հավ: Օրը ամառ էր և նա սպիտակ շապիկ էր հագել: Շուկայից մինչև վանք տարածությունը բավական հեռու էր և նա հավը կրծքին սեղմած մտնում է վանքի դարպասից ներս: Դարպասից ներս մտնելուց հետո, անմիջապես հանդիպում է իր մի ծանոթ հավատացյալի ու հարցնում, թե հավին այսքան գումար է վճարել, լա՞վ է, կամ՝ ոչ: Հա-

վատացյալը տեսնում է, որ հավը կեղտոտել նրա սպիտակ շապիկի վրա, ուզում է հասկացնել նրան այս բանը, բայց վերակացուն չի ըմբռնում նրա ասածը, քանի որ հավատացյալը արևելահայերենով օգտագործում է «ծրտել» բառը, որ նշանակում է կեղտոտել: *«Պարոն, հավը ծրտել է ձեր վրա»: «Չեմ հասկնար ի՞նչ կըսես»*- պատասխանում է վերակացուն,- *քեզի կհարցնեմ այս գինով առած եմ հավը, աղվո՞ր է կամ ոչ»:* Արևմտահայը արևելահային հասկանալու մի քիչ դժվարություն ուներ: Մի խոսքով, մի քանի անգամներ կրկնելուց հետո, հավատացյալը բարկանում է ու ասում. *«ՊԱՐՈՆ ՎԵՐԱԿԱՅՈՒ, ՀԱՎԸ (օգտագործում է մյուս բառը) ԿԵՂՏՈՏԵԼ Է ՁԵՐ ՎՐԱ»:* Վերակացուն այս անգամ հասկանալով, անդրադառնում է ու շփոթված ասում. *«Ման ի՞նչ կ'ըսես,· սա Հայաստանի հավերը անկիրթ և ալ աղտոտ են: Չե՞ն գիտեր, որ շապիկս ճերմակ (սպիտակ) է»:* Ահա այսպես «միամիտ» էր մեր վերակացուն:

Վերակացուն, հակառակ որ երաժշտության ուսուցիչ չէր, սակայն երեկոները մեր ազատ ժամերին մեզ զբաղեցնելու համար մի երգ էր սովորեցնում, որը կոչվում էր *«Ոսկեծղիկ գեղեցկատիպ»:* Հիմա ճիշտ բառերը չեմ հիշում, բայց վերնագիրը մտքումս տպավորվել է, նույնիսկ երաժշտությունն էլ եմ հիշում, բայց առանց բառերի: Ինչո՞ւ հանկարծ այս մասին հիշեցի, որովհետև հերթական երգի փորձի ժամանակ մի հետաքրքիր դեպք պատահեց, որ խորը տպավորվել է իմ հիշողության մեջ:

Վերակացուն, սկզբում մեզ բառերը սովորեցրեց, ապա սկսեց երգել տարօրինակ ձևով, գոնե մեզ հայաստանցիներիս համար այդպես թվաց: Դրա համար էլ սկսեցինք ծիծաղել, թե երգի եղանակի և թե բառերի վրա: Վերակացուն մի քանի անգամ փորձեց մեզ լրջության հրավիրել, բայց մենք փորձում էինք կատակի տալ: Ինչո՞ւ, որովհետև չէինք ուզում այդ երգը սովորել, քանի որ արևմտահայերեն էր և մեր ականջին խորթ էին հնչում նրա բառերը: Սա էր պատճառը, որ չէինք ուզում սովորել: Կարելի է ասել, ոչ միայն սա, այլ նաև ինքը վերակացուն տարօրինակ արտաքին ուներ· մեծ գլուխ, կիսաճաղատ՝ ցցված մազեր, բարձրահասակ, տարօրինակ ձայն, ծիծաղելի խոսելաձև: Այն ժամանակ մենք այդպես էինք տեսնում: Ճեմարանում սովորում էին Վրաստանի Ախալցխա քաղաքի Ծուղրուտ գյուղից երկու եղբայրներ, որոնք զույգ էին, կաթի պես իրար նման, զանազանելը երբեմն անհնարին էր լինում՝ Ռուբիկ և Ռաֆիկ էր նրանց անունը: Վերակացուն նույնպես շատ անգամ շփոթում էր նրանց:

Հերթական փորձի պահին, երբ բոլորը երգում էին, տղաներից մեկը դիտավորյալ այն խանգարելու համար սխալ ձայն հանեց: Վերակացուն սուր լսողություն ուներ և անմիջապես դադարեցրեց երգը և մոտենալով առաջին շարքում կանգնած տղաներից մեկին բարկացած հարցրեց· *«Ո՞վ էր սա ձայն հանողը»,*-ըսեք նայիմ ինձի»: Մի պահ բոլորը ծիծաղեցին, կատակի տալով, սակայն վերակացուն ավելի քան լուրջ էր և երբ տեսավ, որ իր հարցմանը պատասխանող չեղավ, իր մոտ գտնվող տղաներից մեկին, որը այդ եղբայրներից մեկն էր ուժգին ապտակ տվեց, ասելով· «*Ծո, Ռուբեն դո՞ւն էիր այդ ձայն հանողը»:* Խեղճ Ռուբենը, որը իրապես ձայն հանողը չէր, արդարանալով և ցավից նեղվելով, ասաց, որ ինքը չէր: Սակայն հարվածը արդեն իսկ հասցված էր: Հետո երբ բոլորս ցրված էինք, պարզվեց, որ ձայն հանողը մյուս եղբայրն էր՝ Ռաֆիկը: Վերակացուն շփոթել էր բուն «հանցագործին»: Այդ երգի փորձը վերջինը եղավ: Վերակացուն մեզ այլևս չփորձեց սովորեցնել երգը: Ապտակը ոչ տեղին, բայց իր նպա-տակին հասավ: Մեր ուզածն էլ այդ էր:

Այդ տարիներին մեր սենյակները գտնվում էին ճիշտ Վեհարանի դիմացը և նորոգության մեջ էին: Մեզանից շատերը քնում էին միջանցքներում երկաթե մահճակալները վրա: Հարմարությունը այդպիսին էր, ժամանակակից մահճակալներ չկային, մենք էլ գոհ էին եղածից և երբեք էլ չէինք դժգոհում: Տղաներից մեկը Էջմիածին քաղաքից էր, շատ խորն էր քնում: Մենք էլ 16-17 տարեկան պատանիներ էինք և սիրում էինք խաղեր խաղալ, ավելի հաճելի անցկացնելու համար մեր օրերը: Բնական է այդ տարիքի համար:

Եվ ահա մի գիշեր, որոշեցինք այդ տղայի մահճակալը տեղափոխել աշտարակի ժամացույցի տակ, որը մեր սենյակներից շատ հեռու չէր, սակայն մոտ էր զբոսայգուն *(այն ժամանակ զբոսայգին Մայր Աթոռին չէր պատկանում, այլ՝ քաղաքինն էր):* Երբ վերակացուն գնաց և ուսանողները քնեցին, մենք մի քանի չարաճճիներով ուսանողին մահճակալով զգույշ տարանք ու դրեցինք աշտարակի ժամացույցի տակ, ուր փոքրիկ մի տեղ կար, հարմար այս մահճակալին և մեզանից գոհ, ծիծաղելով ու պատկերացնելով, թե առավոտյան, երբ նա արթնանա, ինչպես պիտի վախենա, վերադարձանք ու կարելի է ասել, հանգիստ էլ քնեցինք: Այդ տարիքում արդեն հեռուն էլ չես մտածում, անելիքդ անում ես: Մենք էլ նույնը արեցինք:

Մեր բախտից տղան խորը քնող էր և գիշերվա կեսին չարթնացավ, այլ՝ առավոտյան: Զարմանալին այն էր, որ նույնիսկ աշտարակի ժամացույցի ձայները նրան չէին արթնացրել: Առավոտյան արթնանալուց հետո, տեսնելով, թե ինքը ո՞ւր է ընկել, բողոքել էր վերակացուին, որը

չգտնելով *«հանցագործ մեղավորներին»,* բայց կասկածելով, թե ովքեր կարող էին արած լինել, ամբողջ մի դասարան ճաշի ժամանակ ոտքի կանգնեցրեց և զրկեց ուտելուց: Նա ճիշտ էր զգացել ու պատժել· «հանցագործ մեղավորները» այդ դասարանի տղաներն էին, այսինքն՝ մենք այդ չարաճիճի պատանիները:

ՍՐԲԱԶԱՆԻ ՇՆԻԿԸ

Հոգևոր ճեմարանը արդեն ավարտել էինք: Մի քանի սարկավագներով հավաքվել էինք մեր միաբանական սենյակներից մեկում և փուռը դրած կովի գլուխ էինք ուտում, որը հետաքրքիր ձև ուներ, ավելի նման էր վագրի ժանիքների: Քանի որ կովի գլուխը լավ չէր եփվել, լրիվ չկարողացանք ուտել, մտածեցինք, թե ի՞նչ անենք: Պատկերացրեք, որ այն ժամանակ մենք 18-20 տարեկան երիտասարդներ էինք, լի չարաճիճի մտքերով: Երուսաղեմի վանքից եկած Սրբազաններից մեկը, որը Մայր Տաճարի Լուսարարապետն էր, շատ լավ հոգևորական էր, բոլորս էլ սիրում էինք նրան և նա հրաշալի օրինակ էր մեզ համար: Նա մի փոքրիկ գեղեցիկ շնիկ ուներ, որին դրսի վանդակում էր պահում: Սրբազանը շատ էր սիրում այդ շնիկին, մենք բոլորս էլ նույնպես: Մտածեցինք մի բարի խաղ խաղալ նրա հետ, բնականաբար առանց դիտավորության: Կովի գլուխը, ինչպես նկարագրեցի վագրի ժանիքների էր նման բաց բերանով, տարանք և դրեցինք շնիկի բնի առաջ ու վրան գրեցինք՝ *«Փնտրես չգտնեսյան Հանձնաժողով»* ու տուն գալով մեզանից գոհ հանգիստ քնեցինք:

Ինչ որ տեղի ունեցավ հաջորդ առավոտ, պարզապես աննկարագրելի է: Մեր չարաճճիությունը ավարտվեց տխրությամբ: Ժամերգության ժամանակ նկատեցինք որ Սրբազան Հայրը լուռ ու տխուր է: Նա միշտ սիրում էր կատակել, ուրախ ու զվարթ մարդ էր: Զարմացանք: Նախաճաշի գնալու ճանապարհին, հարցրեցի, թե նա ինչո՞ւ է տխուր, բա՞ն է պատահել: Մենք արդեն մոռացել էինք գիշերվա մեր արածը, կարծելով, թե պարզապես խաղ էինք արել ուրախանալու համար: Քանի որ Սրբազանը ինձ շատ էր սիրում, այդ համարձակությունը ունեցա նրան հարց-

նելու: Նա տխրությամբ ասաց, որ առավոտյան իր փոքրիկ շնիկին մեռած է գտել: *«Ինչպե՞ս»* իմ հարցին, նա պատասխանեց, թե շունը երբ փորձել է գլուխը դուրս հանել, նկատել է վագրի ժանիքներ ու քանի որ փոքրիկ էր, վախից սիրտը պայթել է: Ինչ որ տեղ նա ինձ էլ կասկածեց, բայց ես հերքեցի, քանի որ իրապես մենք ոչ մի այդպիսի նպատակ չէինք ունեցել:

Տխուր էինք իրապես բոլորս և՝ Սրբազանը և՝ մենք: Այդ օրերից շատ ու շատ տարիներ են անցել ու ես երբեք էլ չեմ կարողանում մոռանալ Սրբազանի տխուր դեմքը և կասկածամիտ հայացքը:

Թող Աստված ների մեզ, մեր ոչ գիտակցված արարքի համար, քանի որ մեր նպատակը այդ չէր:

Սիրելի Սրբազան, Դուք Ձեր սերը, նվիրվածությունն ու հավատը մեզ ժառանգ թողեցիք: Թող լույս իջնի Ձեր հոգուն:

ՎԱԶԳԵՆ ՎԵՀԱՓԱՌԻ ՊԱՏԻԺԸ

Կաթողիկոսարանի քարտուղարությունում պաշտոնավարելուս մեկ ու կես տարին էր: Ըստ իս բավական լավ էի աշխատում և արժանանում էի Վեհափառի, Դիվանապետի և այլ պաշտոնյաների գնահատանքին: Սակայն իբրև երիտասարդ, *(ես այն ժամանակ 19 տարեկան էի),* երբեմն սխալներ էլ էի թույլ տալիս, որոնք ինձ թվում էր, թե Վեհափառը չի տեսնում կամ նույնիսկ տեսնելով աչքաթող է անում: Ինձ մոտ այդպիսի տպավորություն էր ստեղծվել: Կամաց-կամաց սխալներս կուտակվում էին, բայց ես չէի զգում, չկար մի խորհրդատու, որն ինձ ուղղություն տար և աչքերս բացեր, որպեսզի չշարունակեի սխալներ գործել:

Մի Չորեքշաբթի օր, երբ մեր հերթական հոգևորականաց հավաքույթն էր *(ամեն Չորեքշաբթի Վազգեն Վեհափառը բոլոր հոգևորականներին հավաքում էր միասին քննարկելու որոշ հարցեր, գնահատելու կամ հանդիմանելու նրանց ովքեր լավ էին ծառայում կամ հակառակը),* Վեհափառը ի շարս այլ հոգևորականների, սկսեց բոլորի ներկայության ինձ էլ գնահատանքի խոսքեր ասել: Հաճելի էր լսել նրա բերանից այդ բոլորը: Սակայն եկավ մի պահ և նա սկսեց մեկ առ մեկ թվել նաև իմ սխալները, որոնք այդքան կարճ ժամանակում ես գործել էի: Չկարծեք, որ դրանք մահացու մեղքեր էին, ուղղակի կապված էին Կաթողիկոսարանի աշխատանքի հետ: Իմ աշխատած սենյակիս դռանը գրված էր. *«Մուտքը արգելված է»* և Վեհափառը խստիվ արգելել էր որևէ մեկի մուտքը այնտեղ, նույնիսկ բարձրաստիճան հոգևորականների, քանի որ արտասահմանյան բոլոր գործերը այնտեղ էին: Ես ամեն բան գիտեի Սփյուռքի բոլոր գաղթօջախներում գտնվող Թեմերում տեղի ունեցող դեպքերի, բողոքների և այլ գործերի մասին:

Դրա համար էլ գրված էր *«Մուտքը արգելված է»*: Դե ես էլ երիտասարդ Սարկավագ, չէի կարողանում Արքեպիսկոպոսին ասել, որ *«Սրբազան Հայր, խնդրում եմ դուրս եկեք, Վեհափառը պատվիրել է, որ այստեղ չմտնեք կամ իմ մոտ չնստեք»:* Ես ինձ թույլ չէի տա, քանի որ մեծերի նկատմամբ հարգանք ունեի: Մի սխալս այս էր: Սրա նման և այլ սխալներ: Սա արդեն իմ անփորձությունից էր:

Վեհափառը իր հանդիմանական խոսքը վերջացրեց ու մի պահ լռություն տիրեց: Սովորաբար այսպիսի դեպքերում բնական է, որ սխալ գործողը ներողություն պիտի խնդրի, կանգնի և սպասի ներողամտության, ես ոչ մեկն էլ չարեցի, քանի որ կողքից ինձ հրող կամ ականջիս փսփրսացող չեղավ: Մի խոսքով, կարմրած, հուզված. լուռ նստած մնացի: Վեհափառն էլ համբերությամբ սպասում էր: Դա տևեց մի քանի րոպե: Այնուհետև Վեհափառը տեսավ, որ որևէ արձագանք չեղավ իմ կողմից, բարկացավ և ասաց. *«Տեսնում եմ իմ ասածները տեղ չհասան, և դու դեռ լռում ես: Շատ լավ; Տասը օր քեզ տնային բանտարկություն: Կմնաս սենյակումդ, դուրս չես գա, նույնիսկ ճաշդ էլ այնտեղ կբերեն, մինչև որ հասկանաս»:*

Ես գլուխս կախ, շփոթված, մյուս հոգևորականների ծիծաղկոտ հայացքների ներքո, գնացի իմ սենյակը և բանտարկվեցի: Ինձ համար ամենամեծ պատիժը դա էր, քանի որ ես աշխույժ էի, եռանդուն և արագաշարժ: Երանի թե Վեհափառը իբրև պատիժ ինձ տար արտագրելու ամբողջ Նոր Կտակարանը, ես դա մեծագույն հաճույքով և անտրտունջ կանեի, քան թե այս բանտարկությունը սենյակում: Ինչ որ է Վեհափառի հրամանն էր և քննարկման ենթակա չէր:

Մի հարցում բախտս բերեց, որ իմ սենյակի ներքևի հարկում Մայր Աթոռի խմբագրությունն էր և վարդապետներից մեկը ինձ առաջարկեց մեքենագրել չորս հարյուր էջանոց մի գիրք ու խոստացան վճարել: Այդպիսի մի գործ յոթը օրում մեքենագրելու համար ահավոր արագաշարժություն էր հարկավոր, նույնիսկ այսօր ամենաուժեղ համակարգիչով աշխատողը այդքան կարճ ժամանակում չի կարող դա անել: Բայց ես մեքենագրեցի յոթ օրվա ընթացքում և աշխատում էի գիշերը, որ չիմանան այդ մասին: Ինձ համար կարևորը զբաղվելն էր: Իհարկե դրա համար ինձ վճարեցին, սակայն շատ քիչ, ես էլ դրանից հրաժարվեցի:

Սրբազաններից մեկը խորհուրդ տվեց ութերորդ օրը խնդրել Վեհափառին ներել ինձ: Միասին գնացինք, ես ծունկի եկա Հայոց Հայրապետի առաջ, ներողություն խնդրեցի սխալներիս համար ու խոստացա, որ պիտի փորձեմ հեռու մնալ դրանցից ինչքան հնարավոր է: Մինչև այսօր հիշում եմ Վեհափառի ներողամիտ ժպիտը: Նա ներեց ինձ ու թույլ տվեց, որ հաջորդ օրվանից շարունակեմ իմ պաշտոնավարությունը Կաթողիկոսարանում: Դա 1969 թվականն էր:

Ութօրյա իմ տնային բանտարկությունը լավ դաս եղավ ինձ համար, ապացույցը դրանից հետո ավելի քան իմ քսան տարվա պաշտոնավարությունը Վազգեն Վեհափառին և Կաթողիկոսարանին, որի ընթացքում երբեք ու երբեք այդպիսի խիստ պատժի չարժանացա:

Վազգեն Վեհափառը երբեմն սիրում էր կատակներ անել նույնիսկ բարձրաստիճան հոգևորականների հետ: Չեմ հիշում, ո՞ր թվականն էր: Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց Վանքի նախկին Լուսարարապետ՝ Հայկազուն Արքեպիսկոպոս Աբրահամյանը, որին իմ ամբողջ հոգևոր ծառայության ընթացքում ունեցել եմ իբրև տիպար և օրինակելի հոգևորական ու շատ բան եմ սովորել նրանից, այդ տարիներին երեք պաշտոն էր զբաղեցնում. Գերագույն Հոգևոր Խորհրդի Ատենապետն էր, Մայր Տաճարի Լուսարարապետն էր և Հոգևոր Ճեմարանի Վերատեսուչն էր: Բնական է, որ շատ նամակներ կային, որոնք Վեհափառ Հայրապետի փոխարեն, նա էր ստորագրում; Ստորագրությունը այսպիսին էր՝ Հայկազունարքեպիսկոպոս:

Այսպես էր ստորագրում և բավական գեղագիտական ձևով: Կարելի է ասել, որ գրեթե անհնարին էր կեղծել նրա ստորագրությունը: Ես էլ երիտասարդ քարտուղար էի: Վեհափառը ինձ կանչեց ու մի նամակ տալով, ասաց, որ Սրբազանի հին ստորագրություններից վերցնեմ և եթե կարող եմ նրա փոխարեն ստորագրեմ, որովհետև Սրբազանը այստեղ չէ և նամակը շտապ ուղարկելու կարիք կա: Ես էլ ինչպես միշտ ասացի՝ *«կփորձեմ»,* չուզելով Վեհափառի խոսքից դուրս գալ: Ստորագրեցի և նամակը հանձնեցի Վեհափառին: Անցավ երևի մեկ կամ երկու ժամ, Վեհափառը հերթական զանգով ինձ կանչեց և իր աշխատասենյակում ես տեսա իմ սիրելի Սրբազանին, որի ձեռքը համբուրեցի ու կանգնեցի, սպասելով Նորին Սրբության հրահանգին: Պետք է ասեմ, որ երկուսի տրամադրու-թյուններն էլ բարձր էր, ուրախ ու ժպիտները դեմքներին: Ճիշտն ասած Սրբազանը հազվագյուտ էր ժպտում, բայց թուխ

դեմքի վրա ժպիտ ուներ: Մինչ ինձ դառնալը Վեհափառը խոսում էր Սրբազանի հետ: Հանկարծ նա Սրբազանին երկարելով իմ ստորագրած նամակը, ժպտալով խնդրեց, որ կարդա: Սրբազանը կարդաց: Վեհափառը հարցրեց, թե նա տեղյա՞կ է այդ նամակի բովանդակությանը: Երևում էր, որ Սրբազանը շփոթված էր, քանի որ բնավ էլ տեղյակ չէր: Խեղճ Սրբազան, ո՞րտեղից պիտի տեղյակ լիներ, քանի որ նամակը Հովսեփ Սարկավագն էր ստորագրել: Սրբազանը ուսերը թոթվեց, որ նշանակում էր, թե տեղյակ չի:

Վեհափառի դեմքից կարծեք ժպիտը անհետացավ ու նա խիստ տոնով հարցրեց. *«Ինչպես տեղյակ չեք, սիրելի Սրբազան, այդ նամակին վրա ձեր ստորագրությունը չէ՞»:* «*Այո, Վեհափառ*,- պատասխանեց Սրբազանը,- *իմ ստորագրությունն է, բայց ես տեղյակ չեմ ասոր բովանդակութենեն, առաջին անգամ կտեսնեմ այս նամակը»: «Զարմանալի է,- շարունակեց Վեհափառը,- Ձեր ստորագրությունն է, բայց Դուք տեղյակ չեք այդ նամակեն, ինչպե՞ս հասկնանք ասիկա»:* Այդ երկխոսության ընթացքում ես կանգնած հետևում էի առանց ծպտուն հանելու: Երևում էր, որ Սրբազանը շփոթված էր և չէր կարողանում հասկանալ, թե ինչպե՞ս է պատահել որ ինքը տեղյակ չի այդ նամակի բովանդակությունից:

Վեհափառը տեսնելով Սրբազանի շփոթմունքը, բացեց գաղտնիքը ծիծաղելով. *«Դուք իրավունք ունիք, սիրելի Սրբազան, որ տեղյակ չեք այդ նամակեն, քանի որ ատիկա Դուք չեք ստորագրած, այլ այս չարաճիճի երիտասարդի գործն է, որուն կատակի համար ես հրահանգեցի ստորագրելու Ձեր փոխարեն: Ինչպես կտեսնաք Հովսեփ Սարկավագը այնպես ստորագրած է, որ Դուք նույնիսկ չկրցաք զանազանել կեղծը իսկականեն»:* Եվ նամակը ետ ուզելով՝

պատռեց: Սրբազանը մի պահ հանդարտվեց և ապա ասաց. *«Հովսեփիկ (ինձ փաղաքշական այդպես էր դիմում Սրբազանը, քանի որ ինձ շատ էր սիրում), այս գործի համար լավ մասնագետ մը կրնաս ըլլալ»:* Ես ժպտացի և ինձանից գոհ *«Աստված օգնական»* ասելով դուրս գնացի Վեհափառի աշխատասենյակից: Տարիներ հետո, երբ նրանք արդեն չկային, հիշելով այս դեպքը, հասկացա, թե ինչպիսի մեծեր եմ ունեցել իմ շուրջը:

ՎԱԶԳԵՆ ՎԵՀԱՓԱՌԻ ՃՇՏԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԴԱՍԸ

1969 թվականն էր, մեկ տարուց ավելի էր, որ աշխատում էի Կաթողիկոսարանում իբրև քարտուղար: Գործերը շատ էին և հնարավոր չէր լինում ավարտել: Այդ ժամանակ ես երիտասարդ Սարկավագ էի և բնակվում էի վանքում: Վեհափառը մի օր ինձ ասաց. «*Կարո՞ղ ես այսօր երեկոյեան ժամը 6:00-ին մոտս գալ, որպեսզի մնացած գործերը վերջացնենք»:* Բնական է, որ ես չպիտի մերժեի և գնացի երեկոյան: Բոլորս էլ գիտենք, թե Հայաստանում ինչպես էին ժամը հարգում, չմոռանանք, որ ես էլ ծնվել ու մեծացել էի այնտեղ: Ես էլ պիտի ուշանայի, չէի կարող չէ՞ հոսանքին հակառակ լողալ: Վեհափառը Վեհարանում մենակ էր ապրում: Ես գնացի ժամը վեցն անց տասնը-հինգին, մտածելով, որ Վեհափառն է էլի, ո՞ւր պիտի գնա, ուզի չուզի դուռը պիտի բացի: *«Ջահելի խելք էր»,* չէի մտածում, թե ո՞ւմ եմ սպասեցնում, այն էլ Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

Զանգը սեղմեցի ու սպասեցի, որ դուռը բացվի: Սպասեցի, սպասեցի, բայց դուռը բացող չեղավ; Ստիպված վերադարձա վանքի սենյակս: Հաջորդ օրը Վեհափառը հարցրեց, թե այսօր կգա՞ս: Ասացի, որ եկա, բայց դուռը բացող չեղավ: *«Երևի քնել եմ ու չեմ լսել: Այսօր կգա՞ս, արի նույն ժամին»:* Գնացի, նորից ուշացած և նույնը կրկնվեց, Վեհափառը դուռը չբացեց: Հուսահատված և մի քիչ էլ նեղված վերադառնում էի Վեհարանից, ինքս ինձ խոսելով, թե՝ *«Զարմանալի մարդ է Վեհափառը, կանչում է, դուռն էլ չի բացում»:* Այսպես վրդովված քայլում էի, երբ իմ դիմաց դուրս եկավ Սրբազաններից մեկը և իմանալով վրդովմունքիս պատճառը հարցրեց, թե Վեհափառը ո՞ր ժամին է ինձ կանչել ու ես ե՞րբ եմ գնացել: Երբ իմացավ ուշացումով

գնալս, ասաց. *«Հենց գաղտնիքն էլ դրանում է, Վեհափառը քեզ ուզում է փորձել և սովորեցնել ճշտապահություն: Եթե վաղը նորից կանչի, արի իր նշած ժամանակից հինգ րոպե շուտ և երբ աշտարակի ժամացույցը առաջին հարվածը խփի, դռան զանգը տուր և կտեսնես, թե ի՞նչ կլինի»:*

Սրբազանի ասած պատկերը կրկնվեց հաջորդ օրը և ես արեցի այնպես, ինչպես ինքը ինձ խորհուրդ էր տվել. աշտարակի ժամացույցի առաջին հարվածից հետո, որը ցույց էր տալիս ժամը 6:00-ը, ես Վեհարանի դռան զանգը տվեցի: Լսեցի դռան բացվելու ձայնը և Վեհափառը ուրախությամբ ու ժպիտով բացականչեց. *«Վերջապես հասկացա՞ր, որ ժամանակին պիտի գաս, ես ընդամենը կես ժամ պիտի տրամադրեմ քեզ, դրանից հետո ուրիշ ժամադրություններ ունեմ, սովորի՛ր, որ սրանից հետո ճիշտ ժամանակին գաս»:* Վեհափառը ինձ ժամանակը հարգելու դաս էր տվել: Ինքը սովորել էր Գերմանիայի և Ռումինայի համալսարաններում և չափից ավելի ճշտապահ էր:

Ես Վեհափառի դասը այդ օրվանից լավ սովորեցի ու մինչև այսօր, ավելի քան 44 տարիներ սիրով եմ հիշում և փորձում եմ ինքս էլ ճշտապահ լինել ու իզուր տեղի չսպասեցնել մեր ժողովրդին: Վեհափառը ամենամեծ կարգապահ ու ճշտապահ Հոգևորականն էր, որն իր կյանքի օրինակով էր մեզ սովորեցնում: Իր ճշտապահության ևս մեկ օրինակ բերեմ. ամեն առավոտ ժամը 9:00-ին Վեհափառը նստած էր Լուսավորչի Աթոռի վրա: Երբեք չէր ուշանում: Դա Կաթողիկոսարանի աշխատանքի սկիզբն էր: Վեհափառը հավասարապես մյուս աշխատողների հետ, ինքն էլ էր ճիշտ ժամանակին մտնում իր աշխատասենյակը, մեզ օրինակ հանդիսանալով: Լույս իջնի գերեզմանիդ, սիրելի Վեհափառ:

ՇԻՐԱԶԻ «ԲՈՂՈՔԸ»

Քարտուղարությանս շրջանին, մի օր հորեղբորս տղան՝ Անդրանիկը, իմանալով, որ շատ արագ եմ մեքենագրում, ինձանից խնդրեց, որպեսզի մի բանաստեղծություն մեքենագրեմ մի քանի օրինակից: Վեհարանի այն սենյակը՝ քարտուղարությունը, ուր որ ես աշխատում էի, պահվում էին արտասահմանի և ներքին Սփյուռքի բոլոր փաստաթղթերը, որոնց մասին ես քաջատեղյակի էի ու դրա համար էլ այդ սենյակի դռան վրա գրված էր, «Մուտքն արգելված է», այսինքն այնտեղ կարող էր մտնել միայն Վազգեն Վեհափառը և կամ Մայր Աթոռի Դիվանապետը:

Ես էլ երիտասարդ Սարկավագ, ապա Քահանա, չէի կարողանում նրանց ասել, որ Վազգեն Վեհափառը արգելել է որևէ մեկի մուտքն այդ սենյակ: Վեհափառն էլ երբեմն հանկարծակի մտնում էր իմ սենյակը տեսնելու համար, թե ո՞վ կա և կամ ես ի՞նչ եմ անում: Երբ հորեղբորս տղան այդ բանաստեղծությունը ինձ տվեց, ես առանց նայելու նրա վերնագրին՝ համաձայնվեցի մեքենագրել: Մի քանի օրինակից սկսեցի մեքենագրել, սակայն դրանից առաջ կարդացի վերնագիրը, ուրախացա, մյուս կողմից էլ վախեցա, քանի որ այդ բանստեղծությունը Հովհաննես Շիրա-զինն էր՝ *«Բողոք»* անունով, որն արգելված էր: Շիրազին իր հայրենասիրական կոչերի համար, ամեն տարի Ապրիլի 24-ին Հայոց Ցեղասպանության Սգատոնի օրը տնային բանտարկություն էին տալիս, որպեսզի չոգևորի ժողովրդին և կառավարության դեմ ցույցեր չլինեն: Ինչ որ է. ախով վախով սկսեցի մեքենագրել, բայց, ինչպես ասում են, իմ չար բախտից, իր սովորության համաձայն, Վեհափառը հանկարծ մտավ իմ սենյակ ու երբ տեսավ մեքենագրում եմ,

հետաքրքրությունը շարժեց ու հարցրեց, թե՝ *«Ի՞նչ եմ անում»:*

Վստահ եմ, որ դուք իմ վիճակը պատկերացնում եք, երիտասարդ Սարկավագ, նստած մեքենագրում եմ Շիրազի արգելված բանաստեղծությունը: Լեզուս կապ ընկավ: Վեհափառը կրկնեց իր հարցը և կամաց-կամաց մոտեցավ իմ սեղանին ու մինչ ես կհասցնեի նրան պատասխանել, կողքից փորձեց կարդալ թե ի՞նչ եմ մեքենագրում: Ես կմկմալով հազիվ-հազ արտաբերելով բառերը սխալմամբ Շիրազի փոխարեն ասացի, թե Սմբատ Շահազիզի բանաստեղծություններից մեկն է: *«Սմբատ Շահազի՞զ»,*- զարմացած ասաց Վեհափառը և քանի որ արդեն իսկ կարդացել էր *«Բողոք»* վերնագիրը, հասկացել էր, որ այն Հովհաննես Շիրազինն է: Այս պահին ես չեմ կարող նկարագրել նրա զայրացած դեմքը, ոչ թե նրա համար, որ Շիրազի բանաստեղծությունն էի մեքենագրում, այլ՝ սուտ խոսելուս համար *(Վեհափառը երբեք չէր սիրում սուտ խոսողներին, ինքն էլ երբեք չէր ստում):*

Վեհափառը լավ գիտեր Շիրազի ո՞վ լինելը, բայց քանի որ այդ օրերին շատ զգույշ էր քաղաքական հոսանքների մեջ Եկեղեցին չներգրավելու տեսակետից, ահավոր զայրացավ, գրամեքենայի միջից դուրս քաշեց բոլոր օրինակները, պատռեց, նետեց և հեռացավ: Ես տեղում չորացել էի: *«Վերջ,*- մտածեցի, *Վեհափառը հիմա քիչ հետո ինձ կկանչի և քարտուղարությունից դուրս կհանի»:* Շիրազին բոլորն էին սիրում, ես էլ էի սիրում և մինչև հիմա էլ սիրում եմ, բայց չէի կարծում, որ դա ինձ կփրկի: Մտածում էի, որ Վեհափառը ինձ կկանչի ու կասի. *«Բավական է, թող քարտուղարությունը և գնա»:* Ի՞նչ ամոթ կլինի ինձ համար, ի՞նչ պիտի պատճառաբանեմ ես, ինչո՞վ պիտի արդա-

րանամ: Սակայն Աստված ինձ հետ էր և հակառակը պա՞-տահեց: Երևի ես երիտասարդ էի ու դեռ լավ չէի ճանաչում այն բարեսիրտ, ներող, հասկացող, ազնվահոգի ու նվիրյալ Հայրապետին:

Քիչ հանդարտվելուց հետո, նա ինձ երկու զանգով կանչեց իր մոտ *(Վեհափառը տարբեր զանգերով կանչում էր աշխատողներին, իմը՝ երկու զանգով էր):* Գնացի, վախեցած, գույնս գցած, մեղավորի պես, նույնիսկ ծունկի գալու և ներողություն խնդրելու տրամադրությամբ, քանի որ սուտ էի խոսել Շիրազի փոխարեն Սմբատ Շահազիզի անունը տալով: Ներս մտա Վեհափառի աշխատասենյակը: Վեհափառը աչքերը բարձրացրեց, արդեն ինձ նայեց ոչ թե բարկացկոտ, այլ բարի ու հանդարտ աչքերով. պոռթկումը և զայրույթը տեղի էին տվել: Հանդարտվելուց հետո, զգացել էր, որ բավական խիստ էր վարվել ինձ հետ, մտածել էր, երիտասարդ եմ, գուցե ինչ որ տեղ վիրավորված էլ կլինեմ: Ես չսպասեցի, որ նա առաջինը սկսի, ներողություն խնդրեցի սխալիս համար: *«Տղաս, դու ճիշտ ես, ես բարկացա քո սուտ խոսելու վրա, սակայն հիմա հասկանում եմ, որ դա քո շփոթությունից ու վախից եղավ»:*

«Լավ իմացիր. ապրում ենք այնպիսի մի կարգերի (սիստեմի) մեջ, ուր մի փոքրիկ սխալը կարող է ճակատագրական լինել մեր Եկեղեցու ապագա գործունեության վրա: Դու երիտասարդ ես, անփորձ, հիմա դժվար կհասկանաս, բայց վստահ եմ, որ մի օր պիտի գիտակցես իմ խոսքերի իմաստը: Պետք է ավելի հեռատես լինել: Եկեղեցին և հոգևորականը պետք է հեռու մնան քաղաքականությունից, որևէ կուսակցության պատկանելուց: Մեր նպատակը և առաքելությունը մեր ժողովրդի մեջ հոգևոր կյանքը և հավատը զորացնելն է: Քաղաքականությամբ

թող զբաղվեն նրանք ովքեր դրա մասնագետներն են: Մերը աղոթքն է»:

«Ներում եմ քեզ, բայց հաջորդ անգամ առանց ինձ տեղյակ պահելու որևէ բան մի մեքենագրիր քարտուղարությունում, կարող է մեզ համար վտանգավոր լինել»: Այդ պահին հանկարծ միտքս լուսավորվեց, հասկացա Վեհափառի խոսքերի իմաստը, քանի որ Դիվանապետը, որ աշխարհիկ մարդ էր, պետության ներկայացուցիչն էր Վեհարանում նստած ու հսկում էր ամբողջ անցուդարձը և զեկուցում Կառավարության, նույնիսկ Վեհափառի գործունեության մասին; Վեհափառի զգուշությունը տեղին էր: Շատ հուզված էի նրա բարյացակամ ու հայրական վերաբերմունքից: Հանդարտված և ուրախ-ուրախ արագ համբուրեցի Վեհափառի աջը ու դուրս եկա: Նրա խրատը ինձ համար ավելի քան քսան տարի դաս եղավ և դրանից հետո էլ չփորձեցի այնպիսի քայլեր անել, որոնք կարող էին վնաս հասցնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, Վազգեն Վեհափառի և մեր Սուրբ Եկեղեցու հեղինակության:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԲԱՆԱԿԻ ԻՄ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

1970 թվականն էր: Երկու տարի էր, որ աշխատում էի Կաթողիկոսարանում: Արդեն քսան տարեկան էի, ըստ Խորհրդային Հայաստանի կառավարության օրենքի, 18 տարեկանում արդեն պարտադիր զինվորության պիտի մեկնեի: Վազգեն Վեհափառը քանի որ հոգևորականներ քիչ ուներ, փորձում էր անընդհատ հետաձգել նրանց մեկնումը զինվորության: Իմ գնալու ժամանակից արդեն անցել էր երկու տարի, ամեն անգամ Վեհափառը կառավարությանը ուղղված հատուկ գրությամբ, որտեղ գրված էին լինում մեկնողների անունները, խնդրում էր, որ Ճեմարանի սաների կամ հոգևորականների գնալը հետաձգվեն մեկ տարով: Այդ օրերին հորեղբորս՝ Տեր Հակոբ քահանայի տղան՝ Անդրանիկը 18 տարեկան եղավ: Նա հորեղբորս միակ արու զավակն էր, դրանից բացի հորեղբայրս երեք աղջիկներ էլ ուներ:

Նա շատ էր վախենում որդուն կորցնելուց, քանի որ նրա արդեն երկու արու զավակները մահացել էին: Անդրանիկը ավելի հանգիստ տղա էր, շատ աշխույժ չէր և դրա համար էլ հորեղբայրս վախենում էր նրա համար: Եվ քանի որ իմ ժամանակից արդեն երկու տարի անցել էր, խնդրեց, որ ես ընկերակցեմ Անդրանիկին, որպեսզի հանկարծ բանակում նրան մի բան չպատահի: Համաձայնվեցի ու դիմեցի Վեհափառին, որ ինձ թույլատրի մեկնեմ Խորհրդային բանակ՝ ծառայության: Վեհափառը նույնիսկ չէր ուզում լսել այդ մասին, բայց ես համոզեցի նրան, ասելով, որ գնամ ծառայեմ ու ապա կվերադառնամ և կշարունակեմ քարտուղարի իմ պաշտոնը: Այս պայմանով տեղի տվեց: Պատրաստվեցի գնալ զինվորության:

Իմ քայլից ոգևորվելով, մի քանի երիտասարդ վարդապետներ նույնպես ուզեցին թույլտվություն ստանալ Վեհափառից զինվորության մեկնելու համար, բայց նա բոլորին մերժեց ու բարկացած ասաց. *«Ինչ է ուզում եք վանքը ամայացնել, ձեր հերթն էլ կգա, համբերեք, հիմա ժամանակը չէ»:* Վեհափառը ճիշտ էր, որովհետև իմ բանակից վերադառնալուց հետո կառավարությունը մասնավոր օրենք հանեց, որ բոլորը անխտիր պիտի ծառայեն, տարեկետում այլևս չկար: Ես նույնիսկ հիշում եմ, որ մի վարդապետի, որը 27 տարեկան էր և ծառայում էր Փարիզի հայկական համայնքում, ետ կանչեցին ու մյուս վարդապետների հետ միասին տարան զինվորության:

Ու այսպես ես Անդրանիկի հետ գնացի Խորհրդային բանակ: Մենք ծառայեցինք ռուսական մի քանի քաղաքներում և ամենավերջում՝ Բաքու քաղաքը եկանք ու այնտեղ մնացիք մեկ տարի: Դա 1971 թվականն էր; Բաքվում գործում էր Սբ. Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցին, որ ուներ իր Հոգևոր Հովիվը: Ես նրան Սբ. Էջմիածնից գիտեի, մի երիտասարդ աբեղա էր: Աբեղան կուսակրոն *(ոչ ամուսնացյալ)* հոգևորականության սկիզբն է: Ես երբեմն իբրև կրտսեր տասնապետ *(սերժանտ)* կարողանում էի գնալ քաղաք և կիրակի օրերը մասնակցում էի Սուրբ Պատարագներին: (Ի միջի այլոց ասեմ, որ Անդրանիկը իր խելոքության պատճառով բավական բարձր պաշտոնի հասավ իբրև ավագ տասնապետ *(սերժանտ)* և ղեկավարում էր 120 զինվորի: Ես իբրև կրտսեր տասնապետ ղեկավարում էի ընդամենը 10 հոգու և ամեն օր զեկուցում էի նրան իմ խմբի վիճակի մասին, *(երբեմն էլ հայերենով էի ասում, որ մյուսները չհասկանան):* Ժողովուրդը տեսնում էր, որ մի զինվոր, մտնում է խորան ու եկեղեցական շապիկ հագած բարձրանում Սուրբ Սեղան: Զարմանում էին: Հետո, երբ

իմացան, թե ո՞վ եմ, ուրախացան: Երբեմն Բաքու էր այցելում Ադրբեջանի հայոց Առաջնորդը Սբ. Էջմիածնից, որին մեկ մեկ տեսնում էի ու նա ինձանից լուրեր էր տանում Վեհափառին:

Հակառակ որ ես ծառայում էի բանակում, իմ անունը մնացել էր մեր եկեղեցական օրացույցում իբրև քարտուղար: Այս մասին իմ վեց հայ ընկերներին ասացի չհավատացին: Մի օր էլ բոլորս եկեղեցի գնացինք, ես խնդրեցի մոմավաճառից եկեղեցական օրացույցը և նրանց ցույց տվեցի, թե ի՞նչ էր գրված այնտեղ. *«Մայր Աթոռի Դիվանատուն, Դիվանատան քարտուղար՝ Հովսեփ Սարկավագ Հակոբյան»:* Զարմացած էին մնացել: Ու այդպես երկու տարի շարունակ իմ անունը մնաց քարտուղարության ցանկում: Ես նույնիսկ աշխատավարձ էի ստանում Վեհափառից որոշ գումար, որն այն ժամանակվա համար լավ էր, միայն թե մայրս էր գնում և այն ստանում իմ խնդրանքի համաձայն:

Ուղիղ մեկ տարի հետո, երբ ծառայում էի Ռուսաստանի խորքերում, նամակ ստացա, որ 17 տարեկան եղբայրս, ավտովթարից մահացել է և ուզում էին, որ ես տուն գամ ու մասնակցեմ թաղմանը: Ճիշտն ասած, ես այնքան էլ չհավատացի այս լուրին, կարծելով թե կատակ են անում, գործերս կարգավորել են, որ ես տուն գնամ ու իբրև արձակուրդ հանգստանամ: Այսպես էի մտածում մինչև տուն հասնելս, նույնիսկ զարմանալիորն ուրախ էի, քանի որ չէի պատկերացնում, որ դա կարող է ճիշտ լինել: Դժբախտաբար մեր տան սեմին հասկացա, որ դա կատակ չէր, այլ՝ իրականություն: Եղբայրս չկար:

Բանակից Վեհափառին նամակներ էլ էի գրում պատմելով իմ վիճակի, ծառայությանս, տպավորություն-

ներիս, դժվարություններիս, երազներիս, մի խոսքով ամեն ինչի մասին: Հետո ես իմացա, որ Վեհափառը այդ նամակ-ները կարդացնել է տվել սարկավագներից մեկին ամեն Չորեքշաբթի տեղի ունեցող մտերմիկ հոգևորականաց հավաքույթներին: Հորեղբայրս ճիշտ էր, որ ես մեկնեցի նրա որդու հետ: Աստված դարձավ մեր պահապանը, բազում փորձություններից անցնելով, մենք ողջ և առողջ վերադարձանք տուն: Մի քանի օր տունը մնալուց հետո, ես շարունակեցի Կաթողիկոսարանի իմ քարտուղարի պաշ-տոնը:

Աշխարհիկ զինվորությունը ինձ համար եղավ մի մեծ փորձառություն, որպեսզի ես լավ ու նվիրված հոգևոր զինվոր դառնամ: Ես ավելի սիրեցի եկեղեցին, կոփվեցի, զորացա հավատիս մեջ ու անքակտելիորեն կապվեցի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, իմ սիրելի Վազգեն Վեհափառի ու իմ հոգևոր կյանքի հետ: Դա 1972 թվականի Դեկտեմբեր ամիսն էր: Ահա այդ օրից անցել են ավելի քան 42 երկար ու ձիգ տարիներ, որոնց միջով անցա ու դեռ Աստված ինձ ուժ է տալիս շարունակելու իմ հոգևոր ծառայությունը Աստծուն ու իմ սիրելի ժողովրդին:

ԶԻՆՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԻՆՁ ՊԱՏԱՀԱԾ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1971 թվականն էր, իմ զինվորական ծառայության մեկ տարին արդեն լրացել էր: Այդ ժամանակ ես ծառայում էի Բաքու քաղաքում: Պետք է ասեմ, որ այդ քաղաքը դուրս չեկավ, քանի որ շատ մաքուր չէին և՝ շրջապատը և՝ ուտելիքները, իսկ ջուրը սարսափելի անհամ էր: Լինելով կրտսեր սերժանտ, իմ պարտականության մեջ էր մտնում հերթապահել մի ամբողջ գիշեր ու ցերեկ: Եվ սա լինում էր հաճախակի: Ահա այդ ծանրաբեռնված շրջանում չգիտեմ ինչպես, ես անակնկալ հիվանդացա շատերի համար անհասկանալի հիվանդությամբ: Նույնիսկ հիվանդանոցի գլխավոր բժիշկը չկարողացավ իմանալ, թե ես ի՞նչ հիվանդություն ունեմ:

Իրականում *«Ի՞նչ էր իմ հիվանդությունը»,*- կհարցնեք նաև դուք: Չգիտեմ զզվելուց, անմաքրությունից, թե մի այլ բանից ես ուղղակի քոս էի կպել, ճանկռում էի մարմինս, այն աստիճան, որ քորածս տեղերից արյուն էր գալիս: Քանի որ դրա դեմ որևէ բուժում չկար, որպեսզի մյուս հիվանդներին չվարակեմ, *(բժիշկը այդպես էր կարծում, հակառակ որ չէր իմանում, թե ի՞նչ հիվանդություն է դա),* մի սև գույնի քսուկ էին քսում մարմնիս ու սավանով փաթաթում և առանձին սենյակում էին պահում: Իբրև թե այդ մազը հանգստացնում էր ու թույլ չէր տալիս, որ ես ինձ քորեմ: Այսպես դա տևեց մոտ մեկ շաբաթ: Հայտնի չէր, թե ինչքան պիտի շարունակվեր իմ այս հիվանդությունը, եթե մի օր ինձ այցելության չգար իմ հայ ընկերներից մեկը, Վասյան, որի հետ ծառայում էի: Այդ օրհնյալ օրը երբեք չեմ մոռանա: Երիտասարդ զինվորը Ստեփանավանի Կուրթան գյուղից էր, Լոռվա աշխարհից, մեր մեծ բանաստեղծ

Հովհաննես Թումանյանի ծննդավայրի կողմերից: Արդեն մեկ տարի էր, որ միասին էինք ծառայում: Ամառ էր և շատ տաք: Նա ինձ այցելելով հարցրեց, թե ի՞նչ եմ լինում և ի՞նչ է պատահել ինձ հետ: Ես էլ բացատրեցի վիճակս, այնքանով ինչքան հասկանում էի: Նա հարցրեց, թե ե՞րբ է սկսվում քորը, ես էլ պատասխանեցի, որ գիշերը ավելի շատ և այն քսուկը, որ քսում են մարմնիս, զզվելի հոտ է գալիս: Ես շատ անգամ ինքս ինձնից դրա պատճառով զզվում էի, ուր մնաց ուրիշները: Բայց բարեբախտաբար գիշերը ինձ այցելող չկար, իսկ առավոտյան ես լողանում էի, որ այդ հոտը չգա:

Ընկերս ինձ լսելով, մի բարի խորհուրդ տվեց, որը ինձ փրկեց: Նա ինձ ուշադիր լսելուց հետո, ասաց. *«Քանի որ ամառ է և պարտեզը ջրվում է ռեզինե խողովակով, փորձիր օրվա տաքին սառը լոգանք ընդունել, ուղղակի սառը ջուրը պահիր քո վրա; Երկու օր չի անցնի և արդյունքը կտեսնես: Հավանաբար մի բանից զզվել ես և բացի դրանից այս կողմերը մաքուր չեն, դրանից էլ վարակ է անցել մարմնիդ մեջ: Դա միայն սառը ջուրը կարող է անցկացնել: Ես մեր գյուղում՝ Կուրթանում, այդ «դեղաբույսը» փորձարկել եմ մեր գյուղացիներից մի քանիսի վրա և շատ լավ ազդեցություն է ունեցել, ուղղակի հանգստացել են ու մաքրվել: Փորձիր, սառը ջուրը չօգնի էլ, վնաս չի տա: Ժողովրդական խոսքն ասում է, «Խեղդվողը փրփուրից էլ է բռնում»:* Շնորհակալություն հայտնելով ընկերոջս այս բարի խորհրդի համար, անմիջապես մոտեցա պարտեզի մի անկյունում նետված ռեզինե խողովակին և քանի որ օրն էլ տաք էր, գաղտնի, որպեսզի բժիշկներն ու քույրերը չտեսնեն, հագուստներս հանեցի և ջուրը պահեցի վրաս, մի քանի րոպե:

Այսպես կրկնեցի օրը մի քանի անգամ. Սառը ցնցուղը շատ հաճելի էր: Առաջին օրը շատ բան չզգացի, բայց երկրորդ օրը լոգանքից հետո, զգացի, որ արդեն քիչ եմ քորվում: Սակայն վստահ լինելու համար համբերեցի նաև երրորդ օրը ու ցերեկը կրկնեցի այս գործողությունը: Հրաշք: Զգացի, որ այլևս ոչ մի քոր էլ չկա: Այդ գիշեր նույնիսկ թույլ չտվեցի, որ սև գույնի մազը քսեն մարմնիս: *«Ինչո՞ւ»,*- հարցմանը, ասացի, որ վաղը կպատասխանեմ: Հաջորդ օրը գնացի գլխավոր պատասխանատուի մոտ ու ասացի, որ նոր *«դեղատոմս»* եմ գտել ու դրանով բուժվել: Զարմացավ ու ռուսերենով ասաց, թե այդ *«դեղատոմսը»* պիտի օգտագործի իր բուժումների ժամանակ. *«Երբեք մտքովս չէր անցնի, որ պարզ սառը ջուրը կարող է բուժել քորը»,*- ասաց նա: Ստուգելով ու տեսնելով, որ ամեն ինչ լավ է, ինձ դուրս գրեց հիվանդանոցից: Ինչքան աղոթեցի իմ ընկերոջ համար: Նրա մի պարզ խորհուրդը ինձ փրկեց երկար ժամանակ տառապելուց:

Դեռ հայտնի էլ չէր, ապագան ի՞նչ էր նախատեսելու ինձ համար, քանի որ հստակ բուժում չկար և միայն քսուկ քսելով ու սավանով փաթաթելով ո՞ւր պիտի հասնեի: Ձին-վորությունից ազատվելուց նույնիսկ շատ տարիներ հետո, երբ մարմնիս որևէ մասը քոր էր գալիս, անմիջապես սառը ջրով թրջում էի ու անցնում էր: Մինչև այսօր էլ նույնը շա-րունակում եմ: Դո՛ւք էլ փորձեցեք Կուրթան գյուղի ընկե-րոջս՝ Վասյայի *«դեղատոմս»*-ը և արդյունքը կտեսնեք: Մի՛ կասկածեք, քանի որ ես արդեն դրա փորձը ունեմ:

Սիրելի Վասյա, իսկապես Դու ինձ համար եղար այդ ժամանակվա փրկարարը: Չգիտեմ հիմա ի՞նչ պայ-մաններում ես ապրում, ինչպիսի՞ վիճակում ես, բայց ես հավատացած եմ, որ իմ աղոթքները քեզ միշտ եղան պա-

հապան ու օգնական, որովհետև ես սրտանց եմ աղոթել: Աստված չի նայում արտաքինին, այլ՝ սրտին: Հեռվից հեռու, քանի որ ես հիմա ապրում եմ Կալիֆորնիայում, իմ աղոթքները ուղղված առ Աստված, թող քեզ և ընտանիքիդ համար լինեն սպեղանի ձեր բոլոր վերքերի համար և Աստծու շնորհներն ու պարգևները անպակաս լինեն ձեր վրայից:

ՎԵՀԱՐԱՆԻ ԲՅՈՒՐԵՂԱՊԱԿՅԱ (ՔՐԻՍՏԱԼԵ) ԱՂԲԱՄԱՆԸ

1975 թվականն էր: Վազգեն Վեհափառի մոտ իբրև քարտուղար աշխատում էի ավելի քան հինգ տարիներ: Արդեն ամուսնացել էի և մեկ տարի էր, որ ձեռնադրվել էի ամուսնացյալ քահանա: Ապրիլի 30-ն էր: Վեհափառը ինձ ասաց, որ հաջորդ օրը Մայիսի մեկին աշխատանքի գնամ, հակառակ, որ տոնական օր էր *(Մայիսի մեկին Երևանի հրապարակում մեծ շքերթ էր լինում և հազարավոր քաղաքացիներ մասնակցում էին այս շքերթին, որը լինում էր նաև զինվորական կամ աշխատանքային),* քանի որ հյուրեր պիտի ունենար և բացի դրանից անհետաձգելի գործեր կային: Անկեղծ ասած երեցկնոջ հետ ծրագրել էինք գնալ Երևան տոնական օրը այնտեղ անցկացնելու համար: Վեհափառին մերժել անկարելի էր, համաձայնվեցի և հաջորդ օրը՝ Մայիսի մեկին եկա Վեհարան:

Սովորականի պես Վեհափառը նստած էր ընդունարանի սրահում մի քանի երիտասարդ վարդապետների հետ ու թեյ էր խմում: Մոտեցա և նրա աջը համբուրեցի: Պատահեց անսպասելին, թեյի բաժակը, որը Վեհափառը բռնել էր աջ ձեռքով, թափվեց նրա վրա: Բարեբախտաբար այն շատ տաք չէր և այնքան էլ վնաս չհասցրեց նրան: Օրվա սկիզբը ինձ համար բարենպաստ չէր: Երիտասարդ վարդապետները սկսեցին ծիծաղել իմ վրա, քանի որ նրանց հետ մենք տարեկիցներ էինք, մի տարբերությամբ, որ նրանք կուսակրոն հոգևորականներ (այսինքն՝ ոչ ամուսնացյալ հոգևորականներ էին, իսկ ես՝ ամուսնացյալ): Ես այն ժամանակ ընդամենը 25 տարեկան էի:

Քիչ անց, Վեհափառը ինձ ասաց, որ գնամ իր հետ: Նա գնաց իր ննջասենյակի և ճաշասենյակի կողմը, ես էլ հետևեցի նրան: Վեհափառը ինձ ցույց տվեց մի մեծ բյուրեղապակյա աղբաման, որը նվիրված էր Բելգիայի հայերի կողմից և նրա վրա ներքևում արձանագրություն էլ կար: Աղբամանը իմ ծանրությունից ավելի էր, քանի որ ես շատ նիհար էի: Նա ինձ ասաց, որ ես այդ աղբամանը վերցնեմ և տանեմ աշխատասենյակի կողմը, ուր որ առաջ դրված էր եղել, թե ինչո՞ւ էին բերել ննջասենյակի կողմը, չգիտեմ ու ինքը վերադարձավ աշխատասենյակ՝ շարունակելու իր զրույցը երիտասարդ վարդապետների հետ:

Ճիշտը եթե խոստովանեմ, այդ օրերին հայրս ինձ մի լավ կոշիկ էր կարել *(հայրս հիանալի կոշկակար էր, սակայն հազվադեպ էր կոշիկ կարում իր ընտանիքի անդամների համար).* Ժողովուրդը մի լավ խոսք ունի ասում է. *«Կոշկակարի տղան կոշիկ չունի»: Փորձված խոսք է)* փայլուն երեսով: Ես շատ էի սիրում այդ կոշիկը: Միայն թե այն մի անհարմարություն ուներ. մարմարի վրա սահում էր: Պատկերացնո՞ւմ եք իմ վիճակը. աղբամանը՝ ծանր, ես՝ թեթև, այն թեքությամբ մի կերպ գրկած բերում էի դեպի աշխատասենյակի կողմը: Ովքեր որ Վեհարանում եղել են, կհիշեն, որ ճաշասենյակից դեպի աշխատասենյակ կամ գլխավոր ընդունարանը մինչև երկու դռները գորգապատ են, սակայն դրանց առջև մարմարե հատակը բաց էր: Ես հաջողությամբ աղբամանը գրկած մոտեցա առաջին դռանը և… կոշիկներս ինձ դավաճանեցին և ես սահելով կորցրի հավասարակշռությունս ու աղբամանի ներքևի մասը պոկվեց, դղրդալով ընկավ մարմարի վրա և կտոր կտոր եղավ: Մյուս մեծ մասը մնաց ձեռքերիս մեջ: Աղմուկը այնքան մեծ էր, որ ամբողջ Վեհարանը թնդած. ես շվարած ու շփոթված

կանգնած էի կոտրված աղբամանի մեծ մասը ձեռքերիս մեջ:

Պարզվում է, որ աղբամանը երկու մասից է եղել, որը ես չգիտեի և Վեհափառն էլ ինձ չէր զգուշացրել այս մասին: Վեհափառը աղմուկը լսելով արագ եկավ, տեսավ աղբամանի փշուրները, իմ շփոթված, շվարած և վախվորած տեսքը ու առանց մի բառ իսկ արտասանելու գնաց իր ննջասենյակի կողմը, մտավ այնտեղ և մի քանի րոպե չերևաց: Թե նա իր սենյակում ինչպիսի ապրումներ ունեցավ, ի՞նչ արեց, չեմ կարող ասել, բայց ավելի հանգստացած մի քանի րոպեից վերադարձավ: Այդ պահին Վեհարանում էր գտնվում, երևի իմ բախտից էր, վանքի ատաղծագործը, որը նկարները շրջանակների մեջ էր դնում: Նա եկավ, տեսավ ու Վեհափառին ասաց, որ աղբամանի ներքեվի մասը կարող է փայտից պատրաստել ու հնարավոր կլինի վերևի մասը տեղավորել նրա վրա և այդպես դնել ընդունարանում:

Աղբամանի մյուս կեսը զգուշությամբ մի կերպ հասցրեցի ընդունարան, որից հետո Վեհափառն ինձ ասաց. «Հայր Հովսեփ, *(Վեհափառը ինձ Տեր Հովսեփի փոխարեն՝ Հայր Հովսեփ էր ասում, քանի որ միշտ իր մտքում ինձ վարդապետ էր պատկերացնում)* այսօրվա համար այսքանը բավական է, կարող ես տուն գնալ»: Ներքուստ ես ուրախացա, որ նեղ վիճակից դուրս եմ եկել և արագ, առանց ժամանակ կորցնելու *(շատ հնարավոր էր, որ Վեհափառը մտափոխվեր ու խոսքը ետ առներ)* արագ նրա ձեռքը համբուրեցի ու դուրս եկա: Տարիներ հետո հասկացա, թե ինչպիսի մեծահոգություն ցուցաբերեց Վազգեն Վեհափառը այդ պահին, երբ տեսավ կոտրված բյուրեղապակյա աղբամանի մի մասը և համբերությամբ կարո-

ղացավ զսպել իր զայրույթը և իր հանդիմանությամբ չվի-
րավորեց իմ սիրտը: Գուցե դա ինձ համար ճակատա-
գրական լիներ: Ո՞վ գիտի: ԻՐԱՊԵՍ ՍԱ ՎԵՀԻՆ ՎԱՅԵԼ
ԱՐԱՐՔ ԷՐ: ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ԼՈՒՅՍ ՔՈ ՀՈԳՈՒՆ, ՍԻՐԵ-
ԼԻ ՎԵՀԱՓԱՌ:

«Եկեղեցին հայկական ծննդավայրն է հոգվույս»,- ասել է Արևմտահայ նշանավոր բանաստեղծ՝ Վահան Թեքեյանը:

1978 թվականն էր: Մի վարդապետի հետ նոր էինք վերադարձել Ամերիկայի Միացյալ Նահանգների Արևելյան Թեմ Հոգևորականաց Համագումարին իբրև Մայր Աթոռի ներկայացուցիչներ մասնակցելուց: Ավելի քան մեկ ու կես ամիս Ամերիկայի Արևելյան և Կանադայի Հայոց Թեմերում կատարեցինք Սուրբ Պատարագներ, զանազան հանդիպումներ ունեցանք հայության հետ բոլորին փոխանցելով Վազգեն Վեհափառի օրհնություններն ու բարի մաղթանքները: Վերադառնալուց հետո իմացա, որ Վեհափառ Հայրապետը ինձ Սուրբ Հռիփսիմե վանքից տեղափոխել է Մայր Տաճար, ուր երկու ամիս ծառայելուց հետո, ինչ-ինչ պատճառներով հրաժարվեցի ու մնացի միայն իբրև Կաթողիկոսարանի Քարտուղար մինչև նոր նշանակում:

Ահա այդ օրերին էր, որ երազ տեսա: Ինձ երևաց Սուրբ Աստվածամայրը, որն ինձ հորդորեց գնալ և տեր կանգնել Էջմիածին քաղաքի Սբ. Աստվածամոր եկեղեցուն՝ *(«Գյուղի ժամ»-ին):* Ես սրանից տասնութ տարի առաջ տասը տարեկան հասակում այդ եկեղեցուց էի սկսել իմ հոգևոր ուսումը: Բնական է, որ ես շատ երիտասարդ էի և ուշադրություն չդարձրեցի այդ երազին: Այս մասին ոչ մեկին էլ չպատմեցի: Երբ Սբ. Աստվածամայրը երրորդ անգամ ինձ երևաց, այս անգամ սպառնաց, որ եթե չգնամ ինձ հետ կարող է դժբախտություն պատահել: Այս անգամ ստիպված եղա պատմելու Վազգեն Վեհափառին, որը ավելի փորձառու հոգևորական էր և կարող էր ինձ ճիշտ խորհուրդ տալ: Վեհափառը ինձ լսեց, հասկացավ հարցի լրջությունն, սակայն մի մտահոգություն ուներ. *«Տղաս, կարող եմ*

նշանակում անել, բայց այնտեղ դրա՞մ չկա, ինչպես պիտի ընտանիքդ պահես»: Նա լավ տեղյակ էր, որ այդ եկեղեցին եկամտաբեր չէ:

«Վեհափառ Տեր, մի մտածեք,- ասացի ես, երկնքում Աստված կա, իսկ երկրի վրա՝ Ձերդ Սրբությունը: Աստծու կամքով և Ձեր օգնությամբ կարճ ժամանակվա ընթացքում կփորձեմ վերականգնել կիսավեր այս եկեղեցին ու այն ժամանակ անպայման ժողովուրդը մեզ կգնահատի և եկեղեցին կհասնի իր հոգևոր բարձրության և՛ տնտեսապես և նյութապես»: 1978 թվականի Սեպտեմբերի 11-ին ես նշանակվեցի իբրև պատասխանատու Քահանա: Ինձնից բացի այնտեղ իրենց ծառայությունն էին մատուցում երկու տարիքով քահանաներ, մեկը 72՝ իսկ մյուսը՝ 68 տարեկան, իսկ ես ընդամենը՝ 28 տարեկան էի:

Աստված կանչեցի ու անցա գործի:

Մի քանի ամիս անց ես Վեհափառ Հայրապետին հրավիրեցի եկեղեցի, տեսնելու նրա վիճակը:

1979 թվականի Փետրվարին Վեհափառ Հայրապետը եկավ Արարատյան Հայրապետական Թեմի առաջնորդական Փոխանորդ՝ Գերաշնորհ Տ. Կոմիտաս Արքեպս. Տեր-Ստեփանյանի *(այժմ հանգուցյալ)* հետ: Մուտքից ես գեղեցիկ դիմավորում էի կազմակերպել, հավատացյալների և երեխաների հետ, որոնց ձեռքներին ծաղիկներ կային: Վեհափառը հակառակ որ բավական մոտ էր այս եկեղեցուն, սակայն տասնհինգ տարի չէր եղել այնտեղ: Վազգեն Վեհափառը երբ ներս մտավ Սբ. Աստվածածին եկեղեցուց ներս, իր առաջին զարմացական բացականչությունը այս էր. *«Այս եկեղեցին պիտի լինի երկրորդ Մայր Տաճար»* և հրահանգեց Մայր Աթոռի Գլխավոր Ճարտարապետին, որ անմիջապես գծագրությունները պատրաստվեն եկեղեցին հիմնովին վերանորոգելու համար:

«Այս եկեղեցին պիտի լինի երկրորդ Մայր Տաճար»: Վեհափառի սրտից բխած այս խոսքը մարգարեաշունչ էր: Նա կարծես տեսել էր ավելի հեռուն: Այդ օրից անցան տասնվեց երկար ու ձիգ տարիներ: Շատ ծանր փորձությունների ու դժվարությունների միջով անցանք: Սակայն Աստված օրհնեց, Վեհափառ Հայրապետը և բարի մարդիկ օգնեցին, նույնիսկ բարերար էլ գտնվեց Արգենտինայի Բուենոս Այրես քաղաքից և եկեղեցին դարձավ Էջմիածին քաղաքի ամենագործունյա ու եկամտաբեր աղոթքի Տներից մեկը, եկեղեցի, որն ուներ իր մեծ երգչախումբը, Սուրբ Պատարագին և ժամերգություններին մասնակցող պատանիների մի մեծ խումբ և այլ հարմարություններ:

Եկեղեցին մոտեցավ Մայր Տաճարին, գեղեցկացավ և՝ արտաքնապես և՝ հոգևոր գործունեությամբ, սակայն Մայր Տաճար չեղավ, քանի որ երկրորդ Մայր Տաճար չէր կարող լինել, այն մեկ հատիկ Սրբություն Սրբոց էր:

Տարիների ընթացքում ես մեծ զոհողությունների գնով կատարեցի Սբ. Աստվածամոր ցանկությունը, իր անունը կրող եկեղեցին ոտքի կանգնեցրեցի և ոչ միայն այդ, շենքի կառուցմանը զուգընթաց, վերազարթոնք ապրեց նաև հոգևոր կյանքը. բացեցի մի փոքրիկ դպրոց 9-12 տարեկան երեխաների համար, նույն ձևով, ինչպես ես էի սովորել իմ առաջին հոգևոր ուսուցիչների դաստիարակությամբ: Եկեղեցին լցվեց փոքրիկների քաղց-րիկ ու զիլ ձայնով, որոնք երգում էին «Առաւօտ լուսոյ» «Տէր ողորմեա», «Ամեն Հայի», «Փառք ի բարձունս», «Սուրբ Աստուած» և այլ շարականներ: Այս ձևով Սիմեոն Երևանցի Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից 1767 թվականին կառուցված Սբ. Աստվածածին եկեղեցու զանգերը նորից շարունաեցին ղողանջել ու բոլոր հավատացյալներին կանչել աղոթքի:

ՈՒՐԲԱԹ ՕՐԸ ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ՊԱՏԱՐԱԳ ԿԱՐԵԼԻ՞ Է ԿԱՏԱՐԵԼ, ԹԵ՞՝ ՈՉ

1980 թվականն էր: Ես արդեն երկու տարի էր, որ Սբ· Աստվածածին եկեղեցու Հոգևոր Հովիվն էի և միաժամանակ շարունակում էի մի քանի ժամվա իմ ծառայությունը Կաթողիկոսարանում իբրև Քարտուղար: Մի օր քարտուղարության իմ աշխատանքային ժամին, Սարկավագս զանգեց ու ասաց» «*Տեր Հայր, հավատացյալներ են եկել եկեղեցի և ուզում են ուրբաթ օրը իրենց նոր ննջեցյալի հոգու համար հոգեհանգստյան Պատարագ կատարել, կարելի՞ է, թե ոչ, ի՞նչ պատասխանեմ»: «Ես ինչքան, որ սովորել ու տեղյակ եմ, որևէ արգելք չեմ տեսնում ուրբաթ օրով հոգեհանգստյան Պատարագ կատարելու մեջ, թեկուզ և այդ օրը պահքի օր է, բայց, ավելի հստակեցնելու համար ասացի հարցնեմ Վեհափառին»,*- պատասխանեցի Սարկավագիս: Չնայած վստահ էի, բայց հարմար գտա հարցնել Ամենայն Հայոց Կաթողիկոսին և նրա համաձայնությունը ստանալ, քանի որ իմ ազատ օրը հինգշաբթի էր և կարիք կար փոխելու, որպեսզի կարողանամ Սուրբ Պատարագը մատուցել ուրբաթ օրը: Երկու պարագային էլ առանց Վեհափառի չէի կարող: Հարմար առիթով Վեհափառին հարցրեցի այս մասին և նա որևէ արգելման խնդիր չտեսավ ուրբաթ օրով հոգեհանգստյան Պատարագ մատուցելու և թույլատրեց, որպեսզի հինգշաբթիի փոխարեն ազատ օր Ուրբաթ գնամ:

Ես հեռաձայնեցի Սարկավագիս և ասացի, որ պատասխանի հավատացյալներին, թե կարող ենք Սուրբ Պատարագ մատուցել: Այս խոսակցությունը տեղի էր ունենում երկուշաբթի օրը: Երկու օր անց, Չորեքշաբթի, երբ ես Վեհարանից գնում էի դեպի եկեղեցի *(Սբ· Աստվածածին*

եկեղեցին վանքից ընդամենը երկու հարյուր մետր էր հեռու), ճանապարհին հանդիպեցի Մայր Տաճարի Լուսաբարապետ Սրբազանին, որն ինձ ուղղակի ասաց, թե արգելում է Ուրբաթ օրով Հոգեհանգստյան պատարագ մատուցելու: Իմ հարցին, թե ինչո՞ւ, ի՞նչն է պատճառը, կանոնական որևէ սխալ կա՞, չուզեց պատասխանել, միայն ասաց, որ թույլ չի տալիս այն կատարելու և վերջ: Ես առարկեցի, պատճառաբանելով, որ կանոնական որևէ սխալ չկա դրանում և երկրորդ այդ հարցում արդեն իսկ ստացել եմ Վազգեն Վեհափառի համաձայնությունը, որովհետև այդ Պատարագը պիտի կատարեմ Ուրբաթ օրը, եթե որևէ խնդիր ունեք լուծելու, գնացեք Վեհափառի հետ լուծեք»: Նա մի քիչ բարկացավ, փրփրեց ու իրենը պնդեց, բայց ես տեղի չտվի ու գնացի եկեղեցի: Սակայն գնալուցս առաջ, երբ տեսավ անդրդվելի եմ, ինձ սպառնաց· *«Տեր Հովսեփ, եթե այդ պատարագը կատարես, քեզ փիլոնագուրկ կանեմ»:* Զարմացա, մի քիչ էլ նեղվեցի: Եկեղեցում իմացա, թե ինչո՞ւ Լուսարարապետ Սրբազանը թույլ չէր տալիս ինձ Ուրբաթ օրով Սուրբ Պատարագ մատուցելու:

Բանից պարզվում է, որ հոգեհանգստյան Պատարագ ուզողները նախ գնացել են վանքերից մեկը և այնտեղի Հովիվ-քահանայից խնդրել, որպեսզի նա Պատարագ մատուցի: Քահանան, որ իրանահայ էր փոխանակ ինքը այդ հարցը կարգավորելու, մտածել է դիմել Լուսարարապետ Սրբազանին ճիշտ կողմնորոշվելու և իրեն ապա-հովելու համար: Սրբազանն էլ ոչ տարել, ոչ բերել է, ուղղա-կի մերժել է քահանային ասելով, թե չի կարելի ուրբաթ օրով Հոգեհանգստյան Պատարագ մատուցել, թող Կիրակի օրվա Սուրբ Պատարագի վերջավորության հոգեհանգիստ պատվիրեն: Քահանան էլ այս մերժումը փոխանցել է սգակիրներին: Իսկ իմ պարագային ես տվել էի իմ համա-

ձայնությունը· Հասկացա, թե ինչո՞ւ ինձ թույլ չէր տալիս Սրբազանը և սպառնում, թե փիլոնազուրկ կանի, եթե···

Մի խոսքով Ուրբաթ օրը Վեհափառ Հայրապետի թույլտվությամբ Հոգեհանգստյան Պատարագը մատուցեցի, մխիթարեցի սգավորներին և նրանք բավարարված ու հոգեպես խաղաղված գնացին եկեղեցուց: Ուրբաթ օրվանից մինչև Կիրակի, լսում էի, որ Վեհափառի և Լուսարարապետի միջև տաք խոսակցություններ են եղել և Սրբազանը եկեղեցի չի գնացել՝ հակառակ Վեհափառի հորդորներին: Իսկ իրականում ի՞նչ է տեղի ունեցել: Երբ Սրբազանը Ուրբաթ օրը հաստատ իմացել է տեղի ունեցած Սբ, Պատարագի մասին, անմիջապես զանգել է Վեհափառին և նրանից հաշիվ պահանջել ինձ թույլատրելու համար: Վեհափառը փորձել է բացատրել նրան, թե դա ինչպե՞ս եղավ և թե կանոնական որևէ սխալ չկա դրանում, Սրբազանը անմիջապես արհամարհական հեռախոսը ցած է դրել ու այլևս չի պատասխանել հեռախոսազանգերին: Վեհափառը վարդապետներից մեկին մի քանի անգամներ ուղարկել է նրա բնակարանը, բայց նա դուռն էլ չի բացել և չի ուզել խոսել Վեհափառի հետ երեք օր շարունակ: Սրբազանը եկեղեցի ոտք չի դրել ոչ շաբաթ եւ ոչ էլ Կիրակի օրերին, այդ ձևով իր բողոքը հայտնելով Վեհափառի որոշման դեմ:

Երկուշաբթի օրը, ինչպես միշտ ես գնացի իմ ծառայության Կաթողիկոսարան: Երբ մտա Վեհափառի աջը առնելու, տեսա, որ ծայր աստիճան նեղված վիճակ ունի: Հասկացա, թե պատճառը ի՞նչ էր: Որպեսզի կարողա-նամ նրա բարկությունը մեղմել, ասացի *«Վեհափառ Տեր, եթե կարծում եք, որ ես եմ պատճառը ձեր գժտության, խնդրեմ կուզեք գնամ և ներողություն խնդրեմ Սրբա-զանից»:*

Վեհափառը ոչ միայն չընդունեց իմ առաջարկը, այլ բարկացած ասաց· *«Նստիր, թուղթ առ և գրիր»* ու ինձ թելադրեց երկու էջանոց մի նամակ, որտեղ նկարագրում էր Լուսարարապետ Սրբազանի երեք օրերի ընթացքում թույլ տված սխալերի, արհամարհական ու վիրավորական կեցվածքի մասին ու այդ բոլորը կետ առ կետ շարադրելուց հետո, եզրակացնում էր· *«Եթե մինչև ժամը 4:00-ը չգաք և մեզ չներկայանաք, հարց պիտի դնեմ Ձեզ նախ Լուսարարապետությունից հրաժարվելու և ապա ավելի առաջ գնալով անհնազանդության համար նույնիսկ կարգալույծ անելու»:* Խիստ էր ասված:

Ես նստած տեղս անհանգիստ շարժումներ արեցի. ցույց տալու համար Վեհափառին. որ մի քիչ խիստ է գրված. սակայն նա անդրդվելի էր և ստիպեց ինձ. որ արագ մեքենագրեմ: Նամակը վերջնական տեսքի բերելուց հետո, ստորագրեց և անմիջապես կանչելով երիտասարդ վարդապետներից մեկին հրահանգեց, որ տանի ու հանձի Լուսարարապետ Սրբազանին: Կեսօրվա ժամերին ես իմ ծառայությունը ավարտելուց հետո, գնացի եկեղեցի: Երեկոյան արդեն գիտեի, որ Սրբազանը ճիշտ Վեհափառի ասած ժամին ներկայացել էր նրան, և խնդրել նրա ներողամտությունը: Պատիժը ազդել էր և ես ավելի քան վստահ եմ, եթե Սրբազանը չհասկանար իր սխալը և չգնար, անպայման ավելիով պիտի պատժվեր: Այդպես էր Վեհափառը, սխալը ճշտելուց հետո, գիտեր ներել, եթե ենթական զղջար ու ընդուներ իր մեղքը: Հաջորդ օրը ես և Սրբազանը հանդիպեցինք վանքի բակում: Իրար ողջունելուց հետո, Սրբազանը մի տեսակ քաշվելով հորդորեց, որ մոռանանք այս միջադեպի մասին և շարունակենք մեր հոգևոր կապը: Բարձր պաշտոն ունենալ, դեռ չի նշանակում, որ ան-

պայման տվյալ անձը կարող է իր կամքը թելադրել, նույնիսկ սխալ լինելու դեպքում: Այս պարագային մանավանդ, երբ համաձայնություն տվողը Վազգեն Վեհափառն էր, Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որի նկատմամբ մեր հարգանքը իրավունք չունենք որևէ ձևով պակասեցնելու, քանի որ նա մեր Հոգևոր Հայրն է:

ՔԱՂՍՈՎԵՏԻ (ՔԱՂԱՔԱՊԵՏԻ) ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ...

1980 թվականն էր: Վազգեն Վեհափառը հրահանգեց Մայր Աթոռի Գլխավոր Ճարտարապետին և ինձ, որպեսզի մի այցելությամբ կարծիքը ունենանք Քաղսովետի, Գործադիր Կոմիտեի և քաղաքի Գլխավոր Ճարտարապետի Սուրբ Աստվածածին եկեղեցու նոր կենտրոնական գմբեթի կառուցման նախագծի մասին: Անշուշտ նախագիծն էլ մեզ հետ էինք տարել: Վեհափառը լավ էր հասկանում, որ նրանց շրջանցել չէր կարելի և անպայման այդ մասին նրանք տեղեկություն պիտի ունենային ու իրենց կարծիքը հայտնեին: Քաղսովետի նախագահը մեզ ուշադրությամբ լսեց և իր ծանրակշիռ կարծիքը հայտնեց. *«Ես իբրև մարդ, հայ մարդ, ամենայն լրջությամբ կողմ եմ եկեղեցուն կենտրոնական գմբեթ տեղադրելուն, որը բնականաբար ավելի պիտի գեղեցկացնի քաղաքը, սակայն իբրև Քաղսովետի նախագահ, որը պաշտպանում է քաղաքի շահերը՝ դեմ եմ»:* Պարզ էր, թե նա ինչո՞ւ էր դեմ, նրա պաշտոնը այդ էր թելադրում: Նրա խիղճը այլ բան էր ասում, պաշտոնը՝ ուրիշ:

Այս մասին մենք հայտնեցինք Վազգեն Վեհափառին, որը պետք է ասեմ նախ զարմացավ, ապա վշտացավ, որ պետության ներկայացուցիչը այդպիսի պատասխան է տվել: Հակառակ քաղաքի ղեկավարության բացասական կարծիքի, Վեհափառի նամակը ուղղված Եկեղեցական Գործերի Խորհրդի նախագահին՝ ուղարկվեց:

Շատ ժամանակ պիտի չանցներ և Երևանի Հուշարձանների Պահպանության Կոմիտեի Կենտրոնական Հանձնախումբը տեղվույն վրա ծանոթանալով Սբ. Աստվածածին եկեղեցու իրավիճակին, պիտի մերժեր Կենտրո-

նական գմբեթ դնելու Վեհափառի առաջարկը, առարկելով, թե եկեղեցին բազիլիկ *(տանիքի պես է. մեր ճարտարապետությունը նաև ունի այս տեսակի հուշարձաններ)* ճարտարապետական հազվագյուտ կառույց է, որը փոխել չի կարելի: *(Առ ի գիտություն ասենք, որ տարի-ներ հետո այդ հազվագյուտ կառույցներից մեկը, Երևանի Կոնդի Սբ. Հովհաննես Եկեղեցին, որը ճիշտ ու ճիշտ նման էր Էջմիածնի Սբ. Աստվածածին եկեղեցուն, հիմնովին վերակառուցվեց, կենդրոնական գմբեթ դրվեց, առանց հաշվի առնելու բազիլիկ եկեղեցի լինելու հանգամանքը):* Վստահ ենք, որ Էջմիածին քաղաքի Քաղաքային Խորհրդի մատը այս մերժման մեջ անպայման խառն էր, քանի որ Քաղսովտի նախագահի պատասխանը ժխտական էր: Այս և նման այլ հարցերում Վեհափառ Հայրապետի կեցվածքը ավելի դիվանագիտական էր, նա շատ զգույշ էր: Կենտրոնական գմբեթի կառուցման մերժման հարցում էլ նա հանգիստ վերաբերվեց, սակայն փորձեց ինչ որ մի լուծում գտնել եկեղեցին բարվոք վիճակի հասցնելու համար: Եվ գտավ: Վեհափառի երկար հորդորներից ու խնդրանքներից հետո, Կրոնից նախարարության միջնորդությամբ թույլատրվեց եկեղեցուն կից կառուցել մի զանգակատուն և այն վերանորոգել ամբողջությամբ: Եվ ուղիղ տասնվեց տարիների ընթացում կառուցվեցին՝ Զանգակատունը, Սուրբ Մկրտության Ավազանը. ամբողջովին երեսապատվեց սալահատակը մարմարով, պատերը մաքրվեցին, գեղեցիկ պարտեզներ պատրաստվեցին, կառուցվեց նաև մատաղատունը. Աղբյուր-հուշարձանը, Հոգևոր Հովիվի սենյակը. մի խոսքով եկեղեցին ստացավ մի նոր կերպարանք՝ ի շնորհիվ Ազգիս Մեծագործ Վազգեն Վեհափառի ուշիմ, խելացի և հեռատես գործունեության ու ինչո՞ւ չէ նաև քաղաքականության:

Ահա ձեզ մի փոքրիկ պատմություն, որը կարող է մեզ պատկերացում տալ, թե անհավատության շրջանում ղեկավարությունը և պաշտոն ունեցողները ինչպիսի՞ մոտեցում էին դրսևորում եկեղեցու նկատմամբ: Խոստովանվեմ, որ մեղքը իրենցը չէր, այլ՝ պաշտոնինը: Սակայն Աստված մեզ հետ էր, գործը այդ ցույց տվեց: Աստծու առաջ ոչ մի արգելք չկա և Սբ. Խաչը բարձրացավ դեպի երկինք: Դրոշակը ընկավ, սակայն խաչը միշտ մնաց զորավոր ու հաղթական: Այսօր Սբ. Աստվածածին եկեղեցին կանգնած է ամուր ու անսասան և իր հոգևոր օրհնությունն է բաշխում մեր հավատացյալ ժողովրդին: Իսկ ո՞ւր են անհավատություն սերմանողներն ու արգելողները…

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԳԼԽԱՎՈՐ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ

Էջմիածին քաղաքի Սբ· Աստվածածին եկեղեցին ներսից ընդհանուր վերանորոգության մէջ էր: Սալահատակը կարծր քարից էր շարված և հնարավոր չէր քանդել: Որոշվեց ուղղակի նրա վրա մարմար շարել: Մարմարագործները իրենց գործը շատ բարեխիղճ կերպով էին կատարում: Հերթական աշխատանքային օրերից մեկն էր· Ես հիվանդ պառկած էի տանը: Առավոտյան մարմարա-գործ վարպետները ինձ զանգահարեցին, բացատրեցին իրավիճակը և խնդրեցին, որ շտապ եկեղեցի գնամ ու մի բան հասկացնեմ Գլխավոր Ճարտարապետին, որ ինչ որ հարցում համաձայն չէր նրանց հետ և գործը կանգնած էր: Հակառակ իմ հիվանդության, եկեղեցու սիրույն, գնացի, որպեսզի աշխատանքը չկանգնի:

Մայր Աթոռի Գլխավոր Ճարտարապետը բարձրահասակ մեկն էր, որ կարելի է ասել շատ հատուկ չէ հայերիս, ավելի քան 1.90սմ·-ի չափով: Ճարտարապետը հետաքրքիր մարդ էր, նույնիսկ իր տարօրինակություններով, երբեմն կարելի է ասել՝ միամիտ հայացքով: Ուղիղ աչքերիդ մեջ էր նայում, իր ասելիքը ասում և իրեն թվում էր, թե ինքը ամենաճիշտ մտածումներն ու որոշումներն է արտահայտում: Այս պարագային խոսքը սալահատակի մարմար շարելուն էր վերաբերում: Մինչ բուն նյութին անցնելս ասեմ, որ եկեղեցու դռները պատրաստված էին փայտից և գեղեցիկ քանդակներ ունեին: Երկու հրաշալի քանդակագործներ ունեինք, որոնք փայտի ու քարի վրա իրենց տաղանդ էին ցուցաբերում: Ըստ Ճարտարապետի, եթե մարմարը սկսեին շարել, դռներին մոտենալուց հետո այն ավելի քան 5սմ· ավելի բարձր պիտի կանգներ և հնարավոր պիտի չլիներ դռները փոփոխության ենթարկել,

քանի որ նրանք արդեն իսկ քանդակված էին: Ինչ որ տրամաբանական բան կար նրա դատողություններում:

Սակայն ես այս լսելուց հետո նրան այս առաջարկը արեցի, *«Պրն· Ճարտարապետ, ուզում եմ Ձեզ մի հարց տալ, Հայաստանում Ձեր հասակի բարձրության քանի՞ հոգի մարդ կլինի»:* Նա զարմացած ինձ նայեց ու պատասխանեց· *«Հազիվ մի քսան հոգի»: «Լավ,- ասացի,- եթե քանդակված դռան տակից և վերևից 5-ական սմ· կտրենք, ինչքան կմնա (դռները 2 մետր էին»:* Նա պատասխանեց· *«1.90սմ·»: «Որ այդպես է,- ասացի ես,- այդ քսան հոգին էլ, եթե այցելեն Սբ· Աստվածածին եկեղեցի, թող խոնարհվելով մտնեն Աստծու Տունը: Իմ կարծիքով եկեղեցու դռները պետք է ցածր լինեն, որպեսզի հավատացյալները խոնարհվելով մտնեն Աղոթքի Տունը»:*

«Մեր բոլոր սրբերի ու մեծերի դամբարանները կառուցված են ցածր տեղերում, որպեսզի ներս մտնելուց խոնարհվենք նրանց սրբության ու մեծության առաջ, ինչպես Սբ· Գրիգոր Լուսավորչի, Սբ· Մեսրոպ Մաշտոցի, Սբ, Հսիփսիմեի, Սբ· Գայանեի և այլ սրբերի»: Գլխավոր Ճարտարապետը ինձ հասկացավ և գոհ մնաց: Վարպետները շարունակեցին իրենց գործը, եկեղեցին մարմարապատվեց և հրաշալի տեսք ստացավ:

Խոնարհությունը առաքինություն է: Եկեք խոնարհվենք մեր սրբությունների և մեր սրբերի հիշատակի առաջ:

ԶԱՆԳԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

ՍԱ ԻՐԱԿԱՆ ԱԿԱՆԱՏԵՍԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ Է ԿԱՊՎԱԾ ԻՄ ՀՈԳԵՎՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ

1986 թվականի գարունն էր: Էջմիածին քաղաքի Սուրբ Աստվածածին Եկեղեցու նորակառույց Զանգակատունը մոտենում էր իր ավարտին և ծրագրված էր աշնանը կատարել նրա բացումը, երբ Արգենտինայից բարերարուհին՝ Տիկին Տորիս Չննոզյանը ժամաներ: 1978-1994 թվականներին եղել եմ այդ Եկեղեցու Վանահայրը: Մտահոգ էի, քանի որ զանգերը գնելու և տեղադրելու դժվարին աշխատանքը պիտի կատարէինք:

Ասեմ, որ տարիներ առաջ, երբ ես դեռ այդ Եկեղեցու փոքրիկ սաներից էի, Տեր Հայրը, որ իմ առաջին ուսուցիչն էր, նեղված ու ափսոսանքով ասաց, որ զանգը գողացել են: Արդեն ընդամենը մեկ զանգ կար, շատ մեծ չէր, բայց զրնգուն ձայն ուներ և ամեն առավոտ ու երեկո նրանով հավատացյալները գալիս էին ներկա լինելու ժամերգություններին ու Սուրբ Պատարագին: Առնվազն տասնըհինգ տարի զանգը կորած էր: Օգտագործվում էր մի այլ զանգ, որը այնքան էլ զրնգուն չէր: Մի խոսքով անհայտ մնաց, թե ո՞վ գողացավ կամ ո՞ւր կորավ եկեղեցու իսկական զանգը: Վերևում ասացի, որ աշնանը ծրագրված էր Եկեղեցու Զանգակատան բացումը և այդ մասին ամենուր հայտարարում էինք:

Բոլորը տեղյակ էին այդ կարևոր իրադարձության մասին: Վեհափառին խնդրել էի, որ գոնե երկու զանգ տա, որպեսզի տեղադրենք Զանգակատան վերևում: Եվ հանկարծ մի օր… երբեք չեմ մոռանա այդ օրը, հիմա էլ: Ինձ մոտ եկավ հրշեջ կայանի (Fire station) ղեկավարը, որի հետ

մտերիմ էի և լավ գիտեի, ինքն էլ՝ ինձ: Ասաց. *«Տեր հայր, մի բան պիտի ասեմ, բայց չզայրանաս և ուզում եմ ինձ հավատաս, որ ես ճիշտ եմ ասում: Այս մի քանի օրը երազումս ինձ երևաց Սուրբ Աստվածամայրը և ասաց, որ. «իմ եկեղեցու զանգը տար և տուր տիրոջը»:* Ես սկզբում այնքան էլ ուշադրություն չդարձրեցի, սակայն երկրորդ և երրորդ անգամ երևալուց հետո ասաց. *«Տա՛ր և տո՛ւր տիրոջը, թե չէ մեծ փորձանքների պիտի հանդիպես»:* Ես նախ զարմացա, թե ի՞նչ զանգի մասին է խոսում, մինչև որ ինքը չբացատրեց եղելությունը: Պարզվում է, որ ժամանակին զանգը եկեղեցուց գողացել են ու տարել հրշեջ կայան, որպեսզի հրդեհի պարագային նրանով ահազանգեն մեքենաներին՝ շտապ դուրս գալու:

Աստծու նախախնամությանը նայեք: Եվ խնդրեց, որ առանց մերժելու վերցնեմ զանգը ու օրհնեմ, որպեսզի իր վրայից մեղքը դուրս գա: Իմ ուրախության չափ ու սահման չկար: Այդ զանգը ինձ համար խորհրդանշում էր իմ հոգևոր մանկությունը, որի ղողանջների ներքո ես ամեն օր գալիս էի մասնակցելու *«Գյուղի ժամում»,* բոլոր ժամերգություններին և Սուրբ Պատարագին: Անշուշտ այս մասին հայտնեցի նաև Վեհափառ Հայրապետին և զանգը տեղ գտավ երկու մեծ զանգերի մեջտեղում նորակառույց Զանգակատանը:

Ամեն ինչ անցողիկ է, միայն Աստծու գործն է անմահ ու հավիտենական:

ԽԱՉԸ ԵՎ ԴՐՈՇԱԿԸ

«ԽԱՉԸ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ՊԻՏԻ ԼԻՆԻ, ՔԱՆ ԴՐՈՇԱԿԸ՞»:

1986 թվականն էր: 1978-ի Սեպտեմբեր ամսից Երջանկահիշատակ Վազգեն Վեհափառի կարգադրությամբ միաժամանակ նշանակվել էի Էջմիածին քաղաքի Սուրբ Աստվածածին եկեղեցու վանահայր, ուրիշ երկու տարիքով քահանաների հետ: Ավելի քան յոթը տարիներ պետք եղավ, որ կարողանանք եկեղեցին բարեկարգել և մի նոր Զանգակատուն կառուցել: Բարեբախտաբար գտնվեցին բարերարներ Արգենտինայի Բուենոս այրես քաղաքից, որոնք իշխանական նվիրատվություն կատարեցին եկեղեցին վերանորոգելու համար: Եվ ահա եկել էր պահը, երբ 1986 թվականին Զանգակատան ավարտով բացումը պիտի կատարվեր եկեղեցու վերանորոգության: Մի օր, կեսօրվա մոտ, երբ ես Վեհարանից եկեղեցի եկա, մոմավաճառուհին ասաց, որ Քաղաքային Խորհրդի նախագահը ինձ է կանչում:

Եկեղեցին գտնվում էր հրապարակի վրա, ուղիղ Քաղաքային Խորհրդի և Շրջանային Կոմիտեի շենքերի դիմացը *(որտեղ նստում էր քաղաքի և շրջանի ամենապատասխանատու առաջին մարդը, որին ժողովուրդը ասում էր «Ռայկոմի» քարտուղարը):* Մի խոսքով նախագահը ինձ էր կանչում: Վազգեն Վեհափառի մոտ իմ աշխատանքի բերումով, բավական ծանոթ էի թե՛ Երևանի և թե՛ Էջմիածնի ղեկավարների հետ ու ինձ համար զարմանալի չէր նրա կանչելը: Գնացի, ինչպես միշտ իմ հոգևոր հագուստով: Սիրալիր ընդունեց և եկեղեցու վերաբերյալ մի քանի հարցումներ կատարելուց հետո, ի միջի այլոց ասաց. *«Տեր հայր, մի բան պիտի հարցնեմ, բայց խնդրում եմ,*

չբարկանաս: Զանգակատունը, երբ լրիվ վերջանա, քանի՞ մետր պիտի լինի»: Ես նախ զարմացա այս հարցի համար, բայց հետո զսպելով իմ ներքին վրդովմունքս ասացի, թե քանի՞ մետր պիտի լինի: *«Վահ»,*-բացականչեց նա: Ասացի,- *«Ի՞նչ պատահեց»: «Ուրեմն,- մի քանի րոպե դադար տալուց հետո, նա ասաց,- «ԽԱՉԸ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ՊԻՏԻ ԼԻՆԻ ՔԱՆ ԴՐՈՇԱԿԸ՞»:* Ասեմ, որ Քաղաքային Խորհրդի շենքի վերեվում դրված էր կարմիր դրոշը: Այդ պահին պատկերացնում եք իմ վիճակը. հոգևորականի սքեմով, նաև իբրև անդամ-ներկայացուցիչ երկհազարամյա Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և այսպիսի անհավատ արտահայտություն: Հասկացա, որ նախագահը իր կողմից չէ՞ որ ունեցավ այս արտահայտությունը. վերևից անուղղակի կերպով հրահանգ կար: Նա պարզապես արտահայտում էր նրանց մտածումը, նույնիսկ կարելի է ասել՝ վախը: Ես հազիվ կարողացա ինձ զսպել, որպեսզի ավելորդ շարժումներ և արտահայտություններ չունենամ, պարզապես հանդարտ և սառնարյուն կերպով նրան պատասխանեցի.

«Պարոն Նախագահ» խաչը նոր չէ, որ մենք պիտի դնենք զանգակատան վրա, այն ավելի քան երկու հազար տարի է դրոշմված է մեր սրտի և հոգու մեջ: Մեր նախնիները իրենց կյանքը զոհեցին հանուն հավատի ու հանուն Հայրենյաց, որպեսզի խաչը մշտապես ու հավիտենապես ծածանվի մեր գմբեթների վրա: Իսկ դրոշակը, որը ընդամենը մի քանի տասնամյակ է գոյություն ունի և շատ հմարավոր է, որ կարգերը փոխվելուց հետո նա էլ փոխվի, մինչդեռ խաչը հավիտենապես պիտի մնա խորհրդանիշը քրիստոնեության»: Եվ դուրս եկա:

Նույն տարվա Սեպտեմբերին Վազգեն Վեհափառի նախագահությամբ և Բուենոս Այրեսից մասնավոր կերպով

հատուկ այս բացմանը եկած Բարերարուհու ներկայության ու բազում հոգևորականների և հյուրերի մասնակցությամբ տեղի ունեցավ Զանգակատան բացումը, ապա Սուրբ Պատարագ: *(Ասեմ, որ Զանգակատան բացմանը և Սուրբ Պատարագին ներկա էին՝ Կ. Պոլսի Պատրիարք, Հոգելույս Շնորհք Արքեպս. Գալուստյանը, Ամերիկայի Միացյալ Նահանգների Արևելյան Թեմի Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Տիրան Արքեպս. Ներսոյանը, Կենտրնական Եվրոպայի Հայրապետական Պատվիրակ՝ Գերաշնորհ Տ. Մեսրոպ Արքեպս. Գրիգորյանը, Մայր Տաճարի Լուսարարապետ՝ հոգելույս Գերաշնորհ Տ. Հուսիկ Արքեպս. Սանթուրյանը և այլն):* ԵՎ ՍՈՒՐԲ ԽԱՉԸ ՀԱՂԹԱԿԱՆ ՈՒ ՀԱՍՏԱՏՈՒՆ ՇԱՐՈՒՆԱԿԵՑ ԻՐ ՕՐՀՆՅԱԼ ԵՐԹԸ:

Երկու տարի հետո, 1988-ին տեղի ունեցան բոլորիս հայտնի Արցախյան դեպքերը, խորհրդային կարգերը տապալվեցին, դրոշակը ընկավ և անհավատ ղեկավար պաշտոնյաներն էլ փախան ամեն մեկը մի տեղ փնտրելով:

Մի օր հանդիպեցի նախկին Քաղաքային Խորհրդի նախագահին, որը պաշտոնից զրկված էր և գործ էլ չուներ, չէ՞ որ կարգերը փոխվել էին և իրենց ուժն էլ կորել էր: Այն աթոռի վրա նստած նախագահի խրոխտ ու հպարտ կեցվածքը կորել էր: Մոտեցա, ողջունեցի ու ուղիղ աչքերին նայելով, ասացի. «Ո՞ՒՐ Է ՁԵՐ ԴՐՈՇԱԿԸ» և չսպասելով պատասխանի, ներքին հպարտությամբ ասացի՝ «ԱՀԱ՛ ՄԵՐ ԽԱՉԸ» և ցույց տվեցի Զանգակատան գմբեթի վրա ամուր կանգնած դեպի վեր, դեպի Աստված բարձրացող սլացիկ Խաչը: Ու հաղթանակած զինվորի ցնծությամբ՝ խաչս հանեցի·

ՊՐՆ· ԳԱՌՆԻԿԻ ԲԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Երկար տարիներ էր, որ աշխատում էի Կաթողիկոսարանում և բավական փորձառություն էի ձեռք բերել ու կարողանում էի արագ կերպով ճանապարհել վանքի աշխատողներին: Գլխավոր հաշվապահը նույնպես բավական տարիներ էր, որ ծառայում էր Մայր Աթոռին, ամուսնացած չէր, ապրում էր վանքի սենյակներից մեկում, փորձառու, նվիրյալ և Սբ, Էջմիածնի շահերը պաշտպանող անձնավորություն էր ու պետք է ասել, որ հարգված էր բոլորի և մանավանդ Վազգեն Վեհափառի կողմից: Բարի և անաչառ մարդ էր: Մի խոսքով Հայ եկեղեցին դարձել էր իր ընտանիքը: Վազգեն Վեհափառը ամեն ինչում վստահում էր նրան: Քանի որ կեսարացի էր *(պատմական Հայաստանից)* հաշիվները թուրքերեն լեզվով էր անում: Երբ գնում էի իր մոտ և լսում նրա հաշվելը՝ բիր, իքի, ուչ, դէորդ (մեկ, երկու երեք, չորս), քթիս տակ խնդում էի, հակառակ որ իմ ականջին այդ լեզուն խորթ չէր, քանի որ հորս կողմից տատս և պապս մի բառ հայերեն չգիտեին, Կիլիկիայի Հասենբել գյուղից էին, Ամանոսի շրջանից և ես ծանոթ էր դրան. ինչ մեղքս թաքցնեմ մի քիչ էլ խոսում էի ու հասկանում: Սակայն Հայաստանի պայմաններում, ուր իշխող Լեզուն հայերենն էր, բնական է, գեղեցիկ չէր լսվում նրա թուրքերենով հաշվելը, բայց մեղադրելու չէր, քանի որ նա այդպես էր սովորել:

Այդ շրջանում Կաթողիկոսարանում նշանակվեց Հոգևոր Ճեմարանի քարտուղար՝ մոտ 65 տարեկան մի անձնավորություն, որը անգլերեն և ֆրանսերեն լեզուների մասնագետ էր ու Վեհափառի նամակներն էր մեքենագրում: Ես ավելի հայերենի մասնագետ էի: Հետաքրքիրն այն էր, որ ամեն անգամ, երբ Պրն· Գառնիկը քարտուղա-

րություն էր գալիս, այս մարդը միշտ բողոքում էր, թե ինչո՞ւ է Տեր Հովսեփի աշխատավարձը ինձանից բարձր: Շատ անգամներ նա չլսելու էր տալիս, բանկի հետ կապված հաշիվ-նամակները ինձ հետ գրելուց հետո, արագ հեռանում էր: Եվ սա կրկնվում էր գոնե շաբաթը մեկ անգամ: Մի օր հերթական բողոքից հետո, Պրն· Գառնիկը այլևս չհամբերելով, ասաց· *«Մարգիս (իսկական անունը փոխված է), քեզ մի բան պիտի պատմեմ, ուշադիր լսիր և հասկացիր: «Վաճառականի մեկը նավահանգստում նավե-րից առնտուր էր անում, ուներ երկու ծառաներ, մեկին վճարում էր ժամական տասը, իսկ մյուսին՝ հինգ դոլար: Որոշ ժամանակ հետո հինգ դոլար ստացող ծառան բողոքում է իր վճարի քիչ լինելու մասին, թե ինչո՞ւ մյուսին տաս է վճարում, իրեն՝ հինգ: Վաճառականը նրան դաս տալու համար, ասում է· «Գնա և տես թե ի՞նչ նավ է եկել նավահանգիստ»: Ծառան գնում և գալիս է ու ասում, «Տեր, «Արմենիա» նավն է կանգնած նավահանգստում»: ·«Իմացա՞ր, թե ինչ ապրանք է բերել»,- հարցնում է վաճառականը: «Ոչ»,- պատասխանում է ծառան: «Գնա և իմացիր»,- հրահանգում է վաճառականը: Եվ այսպես մի քանի անգամներ ծառան գնում է ու գալիս, իմանալու համար, թե ապրանքի գինն ի՞նչ էր, ինչքանո՞վ կարող են վաճառել իրենց, եթե մեծ քանակությամբ գնվի իրենցից» և այլն: Մի խոսքով այս ծառան հինգից-վեց անգամ գնում ու գալիս է այս բոլորը իմանալու համար:*

Վաճառականը բարկանալով, նրան ասում է կանգնիր այս անկյունը և տես, թե ինչ է անում ժամական տասը դոլար ստացող ծառան: Ապա կանչում է մյուս ծառային ու հանձնարարում, որ գնա և տեսնի թե ի՞նչ նավ է եկել նավահանգիստ:

Ծառան գնում է ու բավական ուշացումով գալիս է ու զեկուցում· *«Տեր, եկող նավի անունը «Արմենիա» է, հայկական ծիրան էր բերել, հարցրեցի կիլոն քանիսո՞վ են վաճառում, իմացա, ասացի, եթե մեծ քանակությամբ գնենք իրենցից, քանիսո՞վ կարող են մեզ տալ»:* Ու ծառան մեկ առ մեկ նշում է գները, որոնցով հնարավոր պիտի լիներ մեծ քանակությամբ գնել նավից:

Մյուս ծառան, որը սենյակի անկյունում կանգնած լսում էր, անդրադառնում է, թե ինչո՞ւ է տերը նրան տասը դոլար տալիս, իսկ իրեն՝ հինգ ու այլևս երբեք չի բողոքում: Այս պատմելուց հետո, Պրն· Գառնիկը ուղիղ նայելով Սարգիսի աչքերին, ասաց· *«Հիմա դու հասկացա՞ր այս պատմությանս իմաստը թե ինչո՞ւ Տեր Հովսեփին ավելի ենք վճարում, քան՝ քեզ, որովհետև ես դեռ քարտուղարության դռանը չմոտեցած, բարևս չտված, նա արդեն գիտի, թե ես ո՞ւմ նամակ պիտի գրեմ, ի՞նչ պիտի գրեմ ու մի քանի րոպեից նամակը պատրաստ է և ես առանց ժամանակ կորցնելու, վերադառնում եմ իմ աշխատանքին: Եվ այս բոլորը տևում է ընդամենը հինգ-տասը րոպե ամենաշատը: Իսկ դու այն գրում ես երեք ժամից»:*

Սարգիսը գլուխը կախել ու լուռ լսում էր, քանի որ շատ լավ էր հասկացել Պրն· Գառնիկի պատմության իմաստն ու նպատակը: Դրանից հետո այլևս բողոք չեղավ: Պրն· Գառնիկը լավ դաս տվեց նրան և նրա միջոցով այն մարդկանց, որոնք իրենց արժեքը չգիտեն ու ավելիով ուզում են գնահատվել:

«Ո՞ՒՐ Է ՄԱՇՏՈՑՍ»

Վերջերս Էջմիածին քաղաքի Սբ. Աստվածածին եկեղեցու իմ երկար տարիների ծառայություն ունեցող Սարկավագներից մեկը հիշեցրեց ինձ մի դեպքի մասին, որը պատահել էր ավելի քան երեսուն տարի առաջ: Այն ժամանակ ես ընդամենը 29 տարեկան էի, Սարկավագը 65 անց էր: Ես պատասխանատու Հովիվն էի հիշյալ եկեղեցու: Ավելի լավ է պատմեմ, թե Սարկավագը ինչպե՞ս էր հիշում դեպքը: Իր նամակից մի հատված:

«Սիրելի Տեր Հայր, հիշեցնեմ մի դեպքի մասին: Միասին գնացել էինք Էջմիածնի Ջրառատ գյուղը թաղում կատարելու: Մոռացել էինք Մաշտոցը, պայուսակում չկար, կար միայն խաչը: Թաղումը կատարեցինք առանց Մաշտոցի, թե ինձ և թե հարյուրավոր մարդկանց զարմանք պատճառեց որ քսանհինգամյա մի հոգևորական թաղումը կատարում է բերանացի առանց թերության, մի բառ անգամ բաց չթողնելով: Թաղումից հետո հացկերույթի ժամանակ, ամբողջ ժողովուրդը ոտնկյաց բաժակներն իրար խփելով խմեցին ձեր կենացը, մաղթելով հաջողություններ և ապագա սպասելիքներ…»:

Սարկավագի պատմածին ավելացնեմ իմ հիշողությունները:

Նախ Սարկավագը ինքն էր մոռացել Մաշտոցը խորանում, քանի որ թաղումից առաջ ցանկություն էր ունեցել նայելու, թե ինչ էր կարդալու, երկրորդ՝ այն ժամանակ ես ոչ թե քսանհինգ, այլ՝ 29 տարեկան էի, որովհետև արդեն մեկ տարի էր, որ Պատսխանատու Հովիվ էի նշանակված Վազգեն Վեհափառի կողմից Սբ. Աստվածածին եկեղեցու: Դա 1979 թվականն էր: Այդ գյուղը, որի մասին շեշտում է

Սարկավագը առնվազն Էջմիածին քաղաքից 35 կիլոմետր հեռու էր թրքական սահմանին Մարգարա գյուղի մոտ: Հիշում եմ այսօրվա պես, այդ գյուղի կեսը քրդախոս հայերն էին և մեզ տանող քրդախոս հայը պարծենում էր, որ մեր Տեր Հայրը մոլլայի պես չի լոլոլո ասելով առանց գրքի առջևից գնում, գոնե նա իր ձեռքում կրոնական գիրք ունի: Այսպես խոսելով իր ժամանակին տեղ հասանք, մեռնողի մարմինը տանն էր, ներս մտանք և պատրաստվեցինք արարողության: Պայուսակս բացեցի, փորուրարս վիզս դրեցի, վերցրեցի խաչս ու փնտրում եմ Մաշտոցս, չկա: Դարձա Սարկավագին ու հարցրեցրի· «Ո՞ւր է Մաշտոցս»: Սարկավագը հակառակ իր տարիքին կարմրեց: նա ինձանից ավելի քան 35 տարի մեծ էր և ասաց, որ մոռացել է Խորանում: Եղածը եղել էր, պետք էր մտածել, թե ինչպե՞ս պիտի արարողություն անենք առանց Մաշտոցի: Սարկավագի խոստովանությունը սկզբում իր նամակի մեջ ճիշտ էր, ես երիտասարդ էի, բայց քանի որ փոքր հասակից եկեղեցի էի հաճախել, անգիր գիտեի բոլոր արարողությունները, նաև թաղման կարգը: Նույնիսկ Սարկավագը անգիր չգիտեր իր բաժինը. ստիպված պիտի լինեի նաև նրա բաժինն էլ երգելու և արտասանելու: Որպեսզի այն տպավորությունը չստեղծվի, թե ես էլ քրդերի մոլլայի պես առանց գրքի եմ երգում, խնդրեցի, որ գոնե մի եկեղեցական գիրք գտնեն ու բերեն, որպեսզի ձեռքս բռնեմ, սակայն դժբախտաբար այդ էլ չգտնվեց: Բարեբախտաբար պայուսակիս մեջ կար «Աշխարհ ամենայն» երգը, որը վերցրեցի ձեռքս ու սկսեցի իմ թաղման կարգի արարողության: Եթե անկեղծ լինեմ, ես այսօր զարմանում եմ, թե ինչպե՞ս կարողացա ամբողջ թաղումը երգերով, աղոթքներով անգիր ասել: Նույնիսկ հիշում եմ, թաղման տերերից մեկը խնդրեց, որ հաջորդ օրվա այգաբացի (ինքնահոդի, ինչ-

պես ժողովուրդն է ասում) կարգն էլ կատարեմ: Կատարեցի, ինչքան որ կարողացա: Ինչ որ եղավ առաջնորդողը Ինքը Աստված էր, որ ուժ տվեց, որպեսզի անկատար չմնա հեռավոր այդ գյուղում ապրող մեր ժողովրդի հոգևոր պահանջը: Յոթը օր հետո, այդ գյուղից նորից եկան ու մեզ տարան յոթնօրեք կատարելու: Այս անգամ մասնավոր կերպով ստուգեցի, թե պայուսակիս մեջ Մաշտոց կա՞, թե՝ ոչ: Արդեն խրատվել էի, որպեսզի այնտեղ հասնելուց հետո Սարկավագին չհարցնեմ« թե՝ «Ուր է Մաշտոցս»: Ճանապարհին այդ քրդախոս հայը պատմում էր գյուղի բնակիչների տպավորության մասին: *«Տեր Հայր, մի շաբաթ է, որ ժողովուրդը խոսում է միայն քո մասին, թե ինչպե՞ս առանց Մաշտոցի կարողացար ամբողջ թաղումը անցկացնել»:* Արդյոք հիմա, եթե այսպիսի բան պատահի, պիտի կարողանա՞մ առանց Մաշտոցի անգիր լրիվ արարողություններ կատարել: Աստված գիտի:

ՎԱԶԳԵՆ ՎԵՀԱՓԱՌԻ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ

1989 թվականի ամառն էր: 20 տարի Կաթողիկոսարանի քարտուղարի պաշտոնում մնալուց հետո, խնդրեցի, որ Վազգեն Վեհափառը մտածի ինձ փոխարինողի մասին: Տարիներ առաջ էլ այս մասին ասել էի, բայց նա ուշադրություն չէր դարձրել: Սակայն քանի որ Էջմիածին քաղաքի Սբ. Աստվածածին եկեղեցու Հոգևոր Հովիվն էի, Ճեմարանների համար 9-14 տարեկան երեխաների նախապատրաստական դպրոց ունեի, ավելի քան 60 հոգի, այն դեպքում, երբ Հոգևոր Ճեմարանը ընդամենը 40 աշակերտ ուներ, եկեղեցին շինարարության մեջ էր, հսկել ու հետևել էր պետք, Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի Ժառանգավորաց Վարժարանի համար աշակերտներ ուղարկելու պատասխանատուն էի, կար նաև ժողովրդի ու իմ ընտանիքի ծանրաբեռնվածությունը, որով օրեցօր դժվարություն ունեի շարունակելու իմ աշխատանքը Կաթողիկոսարանում:

Երկար խնդրելուց հետո վերջապես մի օր Վեհափառը համաձայնվեց, որ ինձ փոխարինող գտնեմ: Ուզեցի մի Սարկավագի բերել, բայց ոչ մեկը չհամաձայնվեց, առարկելով, որ Վեհափառի հետ աշխատելը ծանր է, քանի որ շատ պահանջկոտ է ու ճշտապահ: Վերջապես գտա մի կնոջ, որը քիչ-միչ մեքենագրել գիտեր ու արագ նրան սովորեցնելով դուրս եկա քարտուղարի պաշտոնից: Սակայն Վեհափառը ինձ թողեց մի պայմանով միայն, եթե պետք լիներ, ես նորից պիտի գայի օգնության: Եղան անշուշտ շատ դեպքեր և ես մի քանի ժամով կամ մի քանի օրով օգնեցի քարտուղարուհուն, բայց հետո կամաց-կամաց նա ընտելացավ ու այլևս ինձ քիչ էին անհանգստացնում:

Երբեմն կողքից լսել էի մի քանիսի խոսքերը, թե՝ *«Վեհափառ, ինչո՞ւ չեք գրում Ձեր հուշերը»:* Նա միշտ խուսափել է պատասխանել այս հարցին: Մի օր, մեր հերթական հանդիպման ժամանակ, Վեհափառն ինձ ասաց, որ երեկոյան Վեհարան գնամ: Գնացի: Նստեցինք ու նա ասաց, որ որոշել է գրել իր հուշերը: Ես ուրախացա և անհամբերությամբ սպասում էի, թե ե՞րբ պիտի սկսենք… Անկեղծ ասած, ես սպասում էի, որ Վեհափառը իր առջև գոնե մի օրագիր կունենա ու նրանով կառաջնորդվի, բայց մեծ եղավ զարմանքս, երբ ոչինչ չտեսա: Սովորաբար այդպիսի մեծ մարդիկ օրագիր են ունենում իրենց կյանքի նշանավոր դեպքերի ու հանդիպումների նշումներով: Բավական սպասելուց հետո, հարցրեցի. *«Վեհափառ Տեր, ո՞ր տարվանից սկսենք»: «Մի րոպե, ո՞ր տարին հիշեմ, այդ տարվանից էլ պիտի սկսենք»:* Վեհափառը իր հուշերը գրել սկսելուց առաջ, իմ ուշադրության հանձնեց մի հանգամանք, որով պիտի խոստանայի դրանք մեքենագրել միայն մեկ օրինակից, առանց պատճենի, քանի որ ես տանն էի մեքենագրում: Խոստացա:

Իմաստուն Հայրապետը երկու ձեռքերով գլուխը գրկեց ու սկսեց վերհիշել: Մի քանի րոպե անցնելուց հետո, նա ասաց *«1942 թվական»:* Եվ այսպես շարունակ: Ամեն օր նա ասում էր մի թվական ու սկսում էինք: Վեհափառը այնքան ճշգրտությամբ էր հիշում դեպքերը, մարդկանց անունները, հանդիպումների օրերը, որ մի օր զարմացած հարցրեցի. *«Վեհափառ Տեր կարելի՞ է Ձեզ մի հարց տալ»:* Գլուխը դրական շարժելուց հետո, շարունակեցի. *«Արդյոք մի օրագիր կամ գրավոր պահած գրություն ունե՞ք Ձեր սենյակում, որտեղից օգտվում եք ու այստեղ ինձ թելադրում»:* Հավատացեք հարցումս անկեղծ էր ու կարելի է ասել նույնիսկ զարմանքի արտահայտություն էր: Պատաս-

խանը ժպիտով «Ոչ» էր: Ամեն անգամ, երբ ես գրում էի իր հուշերը, տուն էի տանում մեքենագրում էի ու մի օր հետո հանձնում Վեհափառին: Ես կարող էի երկու օրինակից մեքենագրել, բայց քանի որ խոստացել էի նրան, չուզեցի նրա կամքին ու հրահանգին հակառակ գնալ: Ես արդեն խաբել ու սուտ խոսել չէի սիրում, այնպես որ խոստումս կատարեցի: Ես չէի կարող Վեհափառի աչքերի մեջ նայել ու խաբել: Բավական ժամանակ մենք այդ հուշերը գրեցինք, սակայն Վեհափառը հիվանդացավ և սկսեցինք քիչ հանդիպել: Նա մարմնով հիվանդ էր, բայց միտքը արտակարգ արթուն էր:

Մի օր էլ ինձ ասաց. *«Տղաս, չեմ կարծում, թե մենք այլևս պիտի կարողանանք շարունակել: Ես հասա իմ կյանքի ավարտին, մնացածը Աստծու կամքն է»:* Ես տխրեցի նրա խոսքերից, գուցե այդ պահին չանդրադարձա, որ շատ շուտով մենք պիտի կորցնենք մեր սիրելի Հայրապետին: Նա իր մահվան մասին էր ակնարկում: Ես երբեք չեմ տեսել այսպիսի հիշողություն ունեցող մեկին: Երեսուն-քառասուն տարիներ հետո մանրամասն հիշել ամեն ինչ, դա մեծ մտքի ու սրտի տեր անձնավորությունը միայն կարող էր: Իսկ Վազգեն Վեհափառը այդպիսին էր:

Թե ի՞նչ եղան մեր գրած հուշերը, չեմ կարող ասել: Ամեն անգամ, երբ մեքենագրած բերում էի, նայում էր ուղիղ աչքերիս մեջ տեսնելու համար կատարե՞լ եմ արդյոք իր հրահանգը և թղթերը վերցնելով դնում էր գրասեղանի պահարանում: Նա ինձ հավատում էր ու վստահում: Ես շնորհակալ եմ Աստծուց, որ կարողացել էի շահել նրա վստահությունը: Տարիները ինձ մոտեցրել էին ոչ միայն Աստծուն, այլև մեր սիրելի Հայրապետին: Գուցե այն ժամանակ ես չէի էլ գիտակցում, թե ինչպիսի մեծության

հետ էի աշխատում: Շատ տարիներ հետո հասկացա, սակայն Վեհափառն այլևս մեզ հետ չէր: Վստահ եմ, որ մի օր անպայման մեկը դուրս պիտի հանի արխիվից նրա հուշերը և հրատարակի: Լույս իջնի հոգուդ, սիրելի Վեհափառ:

Կ. ՊՈԼՍԻ ՇՆՈՐՀՔ ՊԱՏՐԻԱՐՔԸ ԴՐՈՇՄՎԱԾ ԻՄ ՍՐՏԻ ԵՎ ՀՈԳՈՒ ՄԵՋ

Շնորհք Պատրիարքը իմ ամենասիրած հոգևորականն է, իրապես շնորհալի: Ժամանակին ով որ դրել է իր հոգևոր անունը, շատ ճիշտ է ընտրել այն: Նրան անձամբ ճանաչելու պատիվն եմ ունեցել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, երբ Վազգեն Վեհափառի Կաթողիկոսարանի քարտուղարն էի; Հիշում եմ Վազգեն Վեհափառը մի օր ինձ ասաց. «Շնորհք Պատրիարքն է եկել և քեզ տալիք գրություններ ունի, որ մեքենագրես, իրեն տես»: Շնորհք Պատրիարքը Վեհափառի հյուրն էր և մնում էր Վեհարանի երկրորդ հարկի ննջարաններից մեկում: Գնացի: Երբ դուռը ծեծեցի, հազիվ լսելի ձայնով մեկը ասաց. «Հրամեցեք»: Ներս մտա, կարծես մի սուրբ էր նստած, սպիտակած երկար մորուքով, բնական է ճերմակած մազերով: Մոտեցա «Աստված օգնական Պատրիարք Հայր»,- ասացի, ձեռքը համբուրեցի ու կանգնած մնացի:

Շնորհք Պատրիարքի վրայից, ինչպես ասում է ժողովուրդը. «շնորհքը կաթում էր»: «Տղաս,-մտերմիկ դիմեց ինձ, (ես այն ժամանակ 25 տարեկան էի, ինքը՝ մոտ 65, մի քանի թուղթ երկարելով ինձ,- «կրնաս ասոնք թայփ ընել (մեքենագրել)»: Ասացի, «Այո, Պատրիարք հայր. կփորձեմ»: «Լավ, գնա և ըրե»: Պետք է ասեմ, որ Վազգեն Վեհափառի ձեռագրին մինչև ծանոթացա և կարողացա լրիվ կարդալ ամբողջությամբ ու մեքենագրել, տևեց ավելի քան մեկ տարի: Շնորհք Պատրիարքի ձեռագիրը ավելի վատն էր, բայց քանի որ արդեն իսկ Վեհափառի ձեռագիրը կարդալու փորձը ունեի, ինձ համար հեշտ եղավ այն մեքենագրել: Մի կերպ տակից դուրս եկա ու տարա հանձնեցի իրեն: Զարմացած ասաց. «Այս ի՞նչ արագ թայփ ըրիր, ապրի՛ս»: Վազ-

գեն Վեհափառի մոտ էլ ինձ գովեց. «Վեհափառ, արագաշարժ քարտուղար ունիք, ինչ լավ կըլլար այսպիսի մեկն ալ ես ունենայի»: Վեհափառի գոհունակ ժպիտը ամեն ինչ ասում էր: Հպարտ էր իր քարտուղարով:

Ափոսոս սուրբի պես իմ սիրելի Պատրիարքը դժբախտ պատահարով (գլորվեց Վեհարանի երկրորդ հարկի աստիճաններից) վախճանվեց, մեծ սուգի մատնելով բոլորիս: Աստված թող լույս իջեցնի նրա հոգուն:

«ԹԻԹԵՌՆԻԿ» ՊԱՐԱՅԻՆ ԽՄԲԻ ՃԱՄԲՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

«Թիթեռնիկ» պարային խումբը էջմիածին քաղաքի 9-15 տարեկան երեխաների պարի խմբերից մեկն էր: Իմ տղան էլ էր պարում այդ խմբում: Հիմնականում պարի փորձերը կատարվում էին քաղաքի Պիոներ Տանը: Ուսուցչուհին իրապես գիտակ էր իր մասնագիտությանը: 1988-ի Դեկտեմբերի 7-ին տեղի ունեցավ Հայաստանի ահավոր երկրաշարժը: Շենքեր փուլ եկան, հիվանդանոցներ, դպրոցներ ու մանկապարտեզներ քանդվեցին և հազարավոր մարդիկ զոհվեցին, իսկ տասնյակ հազարներ մնացին անտուն, անօթևան և մանավանդ խեղանդամ վիճակում: Այդ ահավոր երկրաշարժից անցել էր մեկ տարի: Արտասահմանի Քույր Եկեղեցիների ներկայացուցիչ հոգևորականները հյուր էին Մայր Աթոռում:

Օգտվելով այդ առիթից, ես նրանց հրավիրեցի դիտելու «Թիթեռնիկ» պարային խմբի ելույթները Պիոներ Տանը: Նրանք ընդունեցին իմ հրավերը և արտասահմանի իմ ընկերների հետ եկան դիտելու պարի խմբի ելույթը: Պարը և հանդիպումը տևեց մեկ ժամ: Երեխաները իրենց գերազանցեցին՝ հրաշալի պարելով: Ներկաների քաջալերիչ խոսքերը մեծ ազդեցություն ունեցան երեխաների վրա: Այդ խանդավառ մթնոլորտում, Շվեյցարիայի Հայոց Թեմի Հոգևոր Առաջնորդ Հայր Սուրբը խոստացավ երկրաշարժի տարելիցին խմբին հրավիրել Շվեյցարիա ելույթների՝ 16 օրով;

Ես և նա խոսքը գործի վերածեցինք ու շատ չանցած բոլոր փաստաթղթերը և անձնագրերը ձևակերպելուց հետո, խումբը բաղկացած 40 հոգուց Դեկտեմբերի սկզբին մեկնեց Շվեյցարիա: Հետաքրքիր մի դեպք տեղի ունեցավ երեխաների անձնագրերի ստացման ժամանակ: Արտաքին

Գործոց Նախարարությունը անձնագրերի համար Էջ-միածին քաղաքից պահանջում էր ավելի քան 30.000 ռուբլի: Երբ ես այս մասին խնդրեցի Էջմիածնի Քաղաքային Խորհրդի Նախագահին, նա նախ զարմացավ, թե ինչի՞ մասին է խոսքը, ապա իմանալուց հետո՝ հրաժարվեց վճարել: Ասացի, որ սա մեծ պատիվ է ոչ թե իմ, այլ՝ քաղաքի համար:

Բայց նա հաշվի չառավ իմ ասածը և պատճառաբանեց, թե քաղաքը գումար չունի: Ես գնացի քաղաքի ամենամեծի՝ Շրջանային քարտուղարի մոտ: Նրան բացատրելուց հետո իրավիճակի մասին, խնդրեցի օգնել և ի միջի այլոց ասացի, որ Քաղաքային Խորհրդի Նախագահը մերժեց և չուզեց այս հարցին ընթացք տալ: Քարտուղարը բարկացավ և զանգահարելով Քաղաքային Խորհրդի Նախագահին. հրահանգեց, որ նա անմիջապես պահանջվող գումարը ուղարկի Արտաքին Գործոց Նախարարություն: Նախագահը մի քիչ չեմ ու չեմ արեց, թե ո՞րտեղից պիտի գտնի գումարը, բայց Քարտուղարը անդրդվելի էր: Դեկտեմբերի սկզբին խումբը մեկնեց Մոսկվա և ապա Շվեյցարիա: 16 օրեր երեխաները հրաշալի ելույթներ ունենալով Շվեյցարիայի զանազան քաղաքներում, արժանացել էին մեծամեծ պատիվների ու ջերմ ծափահարությունների:

Նրանց վերադարձին Մոսկվայում սաստիկ ձմեռ էր ու սառնամանիք: Երեխաներին դիմավորելուց առաջ վարձեցի մի ավտոբուս, որպեսզի Շերեմետև միջազգային օդանավակայանից նրանց կարողանայի արագ հասցնել Դոմոդեդովոյի օդանավակայանը՝ Երևան ճամբորդելու համար: Օդանավակայանի ղեկավարությանը տեղյակ էի պահել, որ եկողները երեխաներ են և խնդրեցի մի քիչ ուշանալու դեպքում ինքնաթիռը սպասեցնել տանք: Այդ-

պես էլ եղավ: Շվեյցարիայի ինքնաթիռը մի քիչ ուշացումով ժամանեց, մենք էլ՝ Դոմոդեդովո հասանք նույնպես ուշացումով: Ինքնաթիռը սպասում էր երեխաներին: Հոգնած, ջարդված, մրսած և պայուսակները հազիվ քարշ տալով երեխաները նստեցին ինքնաթիռ ու քնեցին: Մեր չար բախտից, ինչպես ասում են, ինքնաթիռը փչացած դուրս եկավ ու ստիպված մեկ առ մեկ բոլորին արթնացնելով, տեղափոխվեցինք մի այլ ինքնաթիռ և ապահով հասանք Երևան:

Մեծ գնահատանքի է արժանի Պարի խմբի Ուսուցչուհին, որը լինելով բալետի մասնագետ, ամառվա չորս ամիսների ընթացքում կարողացավ երեխաներին սովորեցնել ազգային պարերի մի ամբողջ շարք, որպեսզի ձմռանը պատվով կարողանային դուրս գալ իրենց ելույթներով: Շնորհակալություն Ձեզ, սիրելի Ուսուցչուհի, ծնողներ և անշուշտ երեխաներ, որ Էջմիածին քաղաքի պատիվը բարձր պահեցիք և ձեր աղոթքով խունկ ծխեցիք մեր երկրաշարժի զոհվածների հիշատակին:

Այսօր Ուսուցչուհին գտնվում է Լոս Անջելեսում, պարող երեխաներից շատերը ապրում են զանազան երկրներում, սակայն չեն մոռանում իրենց պարը և հաճախ ցույց են տալիս իրենց շնորհքը:

Լոս Անջելեսում էլ իմ տղան, որը, ինչպես և մյուս պարի խմբի երեխաները, 36 տարեկան է, երբ հարսանիքների կամ ծննդյան տոնակատարությունների ժամանակ պարելու առիթ է լինում, ցույց է տալիս իր արվեստը ու բոլորը հիանում են: Մենք էլ կողքից նայելով՝ ուրախանում ենք և աղոթում նրանց պար սովորեցնող Ուսուցչուհու, որը հիմա պատկառելի տարիք ունի, ծնողների և բոլոր երեխաների համար:

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ

ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ԱՆԿՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ

Տարիներ առաջ էր, երբ ես Լա Քրասենթայի ու Թահանգայի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Հոգևոր Հովիվն էի, մի օր զանգահարեց հավատացյալներից մեկը և ուզեց տեսնվել ինձ հետ մի կարևոր հարցով: Բնական է, ես սիրով համաձայնեցի: Եկավ, բարետես մի կին էր, հետո իմացա, որ երեք երեխաների մայր է, ամուսին էլ ունի: Մի քանի րոպե զրուցելուց հոտո, սկսեց լաց լինել ու պատմեց իր ընտանիքի, մասնավորաբար տղայի մասին: Ուշադիր լսեցի նրան: Պատմությունը այս էր:

Մի կերպ իրեն զսպելով, նա ասաց. «*Տեր Հայր ջան, իմ ամուսինը ժամանակին թմրամոլ էր, հիմա էլ երբեմն օգտագործում է: Հիանալի երեխաներ ունեմ, երկու աղջիկ և մի տղա: Բոլորն էլ սովորող, ծնողներին հարգող, լսող զավակներ են, գոհ ենք նրանցից: Տղաս դպրոցը ավարտելուց հետո համալսարան ընդունվեց և որպեսզի գնալ գալ չլիներ, ուզեց ապրել նրան մոտ մի հանրակացարանում: Մենք էլ համաձայնվեցինք: Ամեն բան լավ էր: Նա հիանալի էր սովորում: Երբեմն էլ տուն էր գալիս կամ մենք էին գնում: Հանկարծ մի օր. մեր տուն է զանգահարում Գլենդելի եկեղեցիներից մեկի աշխատողն ու ասում, որ մեր տղան այնտեղ է և շտապ օգնության կարիք ունի: Անմիջապես գնացինք: Երբ տեսանք նրան, չհավատացինք մեր աչքերին»:*

Անհավատալի փոխված էր, գույն չկար երեսին, նույնիսկ անկարող էր ոտքերի վրա կանգնել: Մի կերպ տուն բերեցինք: Պարզվեց, որ վերջին շրջանում, որպեսզի կարողանա արագ կերպով համալսարանն ավարտել,

գիշերները չքնելու ու դասերը սովորելու համար, օգտագործել է թմրանյութ (մարիուխանա կոչվածը): Եվ դա իր համար սովորություն է դարձել ու մի օր էլ չափազանց շատ է օգտագործել և ընկել է այդ վիճակի մեջ: Արդեն երկրորդ շաբաթն է, որ տանն է, սենյակից դուրս չի գալիս, հետը հնարավոր չէ խոսել, ծայր աստիճան գրգռված վիճակ ունի: Ոստիկանություն չենք կարող կանչել, ներքին կարգով մի բժիշկ կանչեցինք, որ նրան նայի, թույլ չտվեց: Չգիտենք ի՞նչ անենք; Հեռուստացույցով Ձեզ տեսա, կարծես մեջս մի հույս ծագեց, ասեցի փորձեմ, *«Գուցե այս Տեր Հայրը մեզ կարողանա օգնել և մեր տղային այդ վիճակից հանի»:* Ես նրան ուշադիր լսեցի, մտքումս ծանր ու թեթև արեցի նրա ընտանիքի վիճակը և փորձեցի հանգստացնել ու խոստացա անպայման այցելել: Եվ հաջորդ օրը գնացի:

Երիտասարդը հազիվ քսաներեք-քսանչորս տարեկանի շուրջ լիներ: Ծանոթացա նրա հետ. այդ պահին կարծես հանգիստ էր: Զրուցեցի ու նրան հրավիրեցի եկեղեցի աղոթելու: Համաձայնվեց, եկավ ծնողների հետ: Պատկերացրեք նրա հետ եկեղեցում աղոթում ենք, մենակ ենք՝ մենք և ծնողները: Հանկարծ ի՞նչ պատահեց, չգիտեմ, նա վազեց ու բարձրացավ Սուրբ Սեղանի վրա և սկսեց ցատկոտել, անհանգիստ շարժումներ անել: Հազիվ կարողացանք իրեն իջեցնել Սուրբ Սեղանից ու տուն տանել: Անցան մի քանի օրեր: Մայրը մի օր անհանգիստ զանգահարեց. *«Տեր Հայր, խնդրում եմ եկեք մեր տուն, այստեղ պատերազմ է»:* Շատ արագ հասա նրանց տուն, տեսածիս չհավատացի. տղան ջինս էր հագել և երկու գրպաններում դաշույններ էր դրել ու վախեցած մայրը, հայրը և քույրերը չգիտեին ի՞նչ անեն: Բնական է իրենց հարազատի վրա ոստիկան չէին կարող կանչել, քանի որ անմիջապես նրան կձերբակալեին ու խնդիրը շատ կբարդանար: Ստիպված

տանում էին նրա բոլոր արարքները, միայն թե հանգիստ մնա:

Այդ պահին նա շատ անհանգիստ էր: Տունը սեփական էր և բակ էլ ուներ: Տղան բակում դաշույնները դրած անհանգիստ գնում-գալիս էր: Մեծ համարձակություն էր նրա մոտ մտնելը: Խաչս հանեցի ու գնացի: Դուռը երբ բացեցի, գլուխը բարձրացրեց, ինձ տեսավ, անմիջապես խաղաղություն իջավ նրա վրա: Առանց մի բոպե իսկ կորցնելու, օգտվեցի առիթից և դաշույնները դուրս հանեցի գրպաններից ու ապահով տեղ դրեցի: Իսկ իրեն համոզեցի, որ ներս մտնի, թեյ խմենք միասին ու որոշ ժամանակ հետո, նրան տարա իր ննջասենյակը և քնեց: Աստծու զորությամբ, իմ հաճախակի այցելություններով, ծնողների հետևողականությամբ, քույրերի սիրալիր վերաբերմունքով, բավական ժամանակ անց, նա խելքի եկավ, արթնացավ, դուրս եկավ այդ վիճակից, գնաց, շարունակեց համալսարանական իր կիսատ թողած ուսումը, ավարտաճառը պատրաստեց ու շրջանավարտ էլ եղավ: Իր ճյուղը Politic Science էր՝ մասնագիտությունը քաղաքականության գծով էր:

Դժբախտաբար, մի դեպք պատահեց այդ ընթացքում, որն ստվեր գցեց նրա կյանքի վրա և քիչ մնաց ճակատագրական լիներ: Ծնողները նրա մի քիչ լավանալուց ուրախացած, որոշեցին նրան միայնակ ճամբորդության ուղարկել, որը իմ կարծիքով շատ սխալ էր և ես իրենց էլ խորհուրդ տվեցի, որ դա չանեն: Բայց նրանք ինձ չլսեցին և ուղարկեցին, արդյունքը… պարզ է, կրկնվեց իր հին հիվանդությունը, որովհետև մի ընկերոջ հետ ինքը նորից փորձել և օգտագործել էր այդ «թույնը»: Վերադարձավ, նորից հանդիպումներ, բուժումներ, աղոթքներ, որոնք բարե-

բախտաբար օգնեցին վերականգնելու նրա նախկին վիճակը: Այս անգամ ծնողները որոշեցին նրան Հայաստան տանել: Տարան: Այնտեղ իրենց ծանոթ ընտանիքներից մեկի աղջկան էլ, հակառակ տղայի կամքի, նշանեցին ու մի քանի ամիս հետո էլ բերեցին և ամուսնացրեցին: Սխալը սխալի ետևից; Արդյունքը՝ *«Ես չեմ սիրում նրան, դուք ինձ ինչո՞ւ ստիպողաբար ամուսնացրեցիք»:* Կռիվներ, անհասկացողություններ, շաբաթներով բացակայություն տանից: Վերջում՝ բաժանում:

Մի կողմից անկում, մյուս կողմից՝ վերածնունդ, նորից անկում, նորից վերածնունդ: Ինչքա՞ն: Աստված ասաց, բավական է ձեր չարչարանքը, թող ներված լինեն բոլորիդ մեղքերը, ես նրան կփրկեմ ու Իմ ձեռքը կառնեմ: Ու այդպես էլ եղավ: Եկավ մի պահ, տղան սկսեց Սուրբ Գրքի սերտողություններին հաճախել, Աստծու խոսքերը լսել, աղոթքի կյանքով սկսեց ապրել ու մի տեսած կարծես վերածնվեց: Վերևում ասացի, որ համալսարանը ավարտեց ու դարձավ քաղաքական գիտության մասնագետ: Սակայն մտածեց, որ դեռևս այդ գծով փորձ չունի և որոշեց այլ աշխատանք կատարել, մինչև որ կարողանա իր բուն մասնագիտությանը տիրապետել:

Մի օր ինձ ասաց. «*Տեր Հայր ջան, չեմ կարողանում ինձ ներել, ես այսքան նեղություն եմ տվել իմ ծնողներին, իմ շրջապատին, պիտի ծանր աշխատանքով. աղոթքով քավեմ իմ մեղքերը»:* Մի քանի տարիներ մեծ մեքենաներով (truck) ապրանք էր տանում Ամերիկայի զանազան նահանգները տասը օրով, տասնհինգ օրով բացակայում էր տանից: Սակայն, երբ նեղություն էր ունենում մտքի և հոգու խռովք, նախընտրում էր զանգել իր հոգևոր ծնողին: Ես փորձում էի նրա խռովահույզ հոգին հանգստացնել,

միտքը հանդարտեցնել: Ու ամեն անգամ, երբ պիտի հրաժեշտ տար հեռախոսով, ասում էր. *«Շնորհակալ եմ քեզանից, Տեր Հայր ջան, քեզ հետ խոսելուց հետո խաղաղություն է գալիս վրաս»:*

Ու այսպես շարունակ: Երեկ վերադարձել էր երկար ճամբորդությունից, զանգեցի, պատասխանեց, որ այստեղ է, Լոս Անջելոսում: Միասին ճաշեցինք: Ճաշի ընթացքին, երբ նայում էի նրան, կարմիր թելի նման մտքիս արահետներում անցան այն դժվարին ու փոթորկալից օրերը, որոնք մնացին ետևում և ես մտովի ուրախացա, որ անկումից հետո, նա վերածնունդ ապրեց: Երբ խոսում էինք, հիշեց, մեղավորի պես այն աղջկան, որի հետ ամուսնացավ առանց սիրելու և շատ ցավ զգաց, որ բաժանվեց նրանից: *«Փնտրում եմ ինձ սիրող մեկին, որ ամուսնանամ, ի՞նչ կասես, Տեր Հայր, կգտնե՞մ»:*

Ես ասացի, մոռացա՞ր Ավետարանի պատգամը, թե՝ *«Փնտրի՛ր, որ գտնես, խնդրի՛ր, որ ստանաս և դուռը ծեծիր, որ բացվի քեզ համար»:* Դու հիմա նոր ծնունդ ապրեցիր, վստահ եմ, որ Աստված քեզ պիտի օգնի, որպեսզի կյանքդ հավատով ու սիրով շարունակես՝ ժպիտ պարգևելով թե ծնողներիդ, թե շրջապատիդ և թե ապագա ընտանիքիդ: Ճաշից հետո մենք ողջագուրվեցինք ու նա գնաց փնտրելու իր երջանկությունը:

Այս երիտասարդը փրկվեց. սակայն սրա նման քանի քանիսները կան, որոնք երբեք էլ չեն կարողանում դարիս այդ «թույնից» ձերբազատվել ու դժբախտաբար երիտասարդ տարիքում հեռանում են կյանքից, մեծ ցավ պատճառելով իրենց ծնողներին ու հարազատներին: Փորձենք ամեն մեկս Աստծու զորության վրա մեր հույսը դնելով, փրկենք մի երիտասարդի այս *«թույնի»* ճանկերից ու վրս-

տահ եղեք պիտի գնահատվենք Ամենակալի կողմից, երբ ժամանակը գա: Եվ մի մտածեք, թե չեք կարող, դժվար է, նույնիսկ՝ անկարելի: Մեր խղճի առաջ հանգիստ լինելու համար, պիտի փորձենք և անպայման կհաջողվենք, քանի որ Հիսուս ասում է. *«Այն ինչ որ հավատով խնդրեք, պիտի տրվի ձեզ»:* Շարժվենք Տիրոջ իմաստությամբ:

ՏԵՐ ՀԱՅՐ, ԿԱՐՃ ԿԱՊԻ…

Հիսուսի խոսքերն են. *«Մի տվեք սրբությունը շներին, և ձեր մարգարիտները խոզերի առաջ մի գցեք, որպեսզի դրանք ոտքի կոխան չանեն և դառնալով ձեզ չպատառոտեն…» (Մատթ. 7:6): Եվ նա իր մոտ կանչելով աշակերտներին՝ նրանց իշխանություն տվեց պիղծ դևերի վրա՝ հանելու դրանք և բժշկելու ամեն ցավ և ամեն հիվանդություն… Եվ երբ այն տունը մտնեք, ողջույն տվեք ու ասացեք. «Ողջու՛յն այս տանը»: Եթե տունն արժանի է ձեր ողջույնը նրա վրա թող իջնի, իսկ եթե արժանի չէ, ձեր ողջույնը ձեզ թող վերադառնա: Եվ եթե մի քաղաք չընդունի ձեզ և չլսի ձեր խոսքերը, այդ քաղաքից դուրս գնալիս՝ ձեր ոտքերից փոշին թոթափեցե՛ք…» (Մատթ. 10:1,12-15):*

ՏԵՐ ՀԱՅՐ, ԿԱՐՃ ԿԱՊԻ…

Մի կիրակի օր հրավեր ստացա գնալու Հոլիվուդի գերեզմանոց: Մահացողը հիսուներկու տարեկան մի մարդ էր, նրա մահվան քառասունքն էր: Դրանից առաջ նույն ննջեցյալի յոթի արարողությանն էի գնացել: Այն ժամանակ, սակայն շատ բան չէի կարողացել իմանալ, թե ո՞վ է հանգուցյալը, քանի՞ երեխա ու ի՞նչ հարազատներ ունի և այլն: Այս անգամ, սակայն ցավով իմացա, որ երեք եղբայրներից մեկն է, ամենափոքրը, երկու երեխա ունի ու ավելի ցավոտ՝ նրա մայրը դեռ ողջ էր: Ես իմ հոգեհանգստյան արարողությունը կատարեցի, ինչպես որ կարգն էր և վերջում սովորությանս համեմատ, ուզեցի մի քանի մխիթարական խոսք ուղղել ընտանիքին ու ներկա հարազատներին:

Խոսքիս մեջ ասացի. *«Մի նշանավոր մտածող մարդու կյանքը նմանեցնում է վարդի: Երկու տեսակ վարդեր կան, մեկը հոտավետ, մյուսը՝ անհոտ: Կան մարդիկ, որոնք իրապես հոտավետ վարդի նման բուրում են ու իրենց շուրջը անուշ հոտ են սփռում, կա նաև դրա հակառակը. մարդիկ, որոնք համ չեն տալիս ո՛չ ընտանիքին, ո՛չ հարազատությանը և ո՛չ էլ իրենց շրջապատին: Հանգուցյալին ես անձամբ չեմ ճանաչում, սակայն վստահ եմ, որ իբրև հայ քրիստոնյա իր լավագույն պարտքը կատարել է իր ծնողների, ընտանիքի և բոլորի նկատմամբ»:*

Հետո քանի որ տեսա, թե ինչպես է մայրը աղիողորմ լալիս իր զավակի վրա, ուզեցի մասնավոր նրան մխիթարել. *«Բոլորս էլ ցավում ենք, որ հանգուցյալը երիտասարդ է և անժամանակ հեռացել է այս կյանքից: Սակայն բոլորիցս առավել այսօր այդ մեծագույն ցավը զգում է իր մայրը, մայր, որն իր մեջ զգացել է իր զավակի սրտի տրոփյունը և կյանք տվել նրան»:* Ահա այդ պահին, հանկարծ մոտենում է ինձ հանգուցյալի զավակը ու ցածր ձայնով, բայց կոպիտ տոնով *(որը միայն լսելի էր մեզ մոտիկ կանգնած հարազատներին)* ասում. *«ՏԵՐ ՀԱՅՐ, ԿԱՐՃ ԿԱՊԻ ՀՈԳԵՀԱՑԻ ՊԻՏԻ ԳՆԱՆՔ...»:*

Այդ պահին, հավատացեք, ինչպես ասում են, վիրավորանքից աստղերը իջան գլխիս: Սակայն ես ոչինչ ցույց չտվեցի, անմիջապես խոսքս դարձրի ու հայտարարեցի, Աստված հոգին լուսավորի. ընտանիքը խնդրում է, որ բոլորդ հոգեհացի գնաք իրենց տունը: Հարցը նրանում էր, որ հոգեհացն էլ ոչ թե սրահում էր, որ ուշանային, ժամի խնդիր լիներ, այլ՝ հանգուցյալի տանը; Մի խոսքով այս վերջին խոսքերը ասելուց հետո, կամաց թողեցի ու հեռացա: Ինձ ուղեկցեց հանգուցյալի եղբայրը, որը ներո-

դություն խնդրեց իր եղբոր տղայի այդ կոպիտ վերաբերմունքից: Բնական է, որ ես ասացի, թե չեմ նեղվել, հասկանում եմ իր հոգեվիճակը, բայց հոգու խորքում Հիսուսի նման ասացի. «Հայր, ների՛ր դրանց, քանի որ չգիտեն թե ի՞նչ են անում» (Ղուկ. 23:34):

ՏԵՐ ՀԱՅՐ, ԿԱՐՃ ԿԱՊԻ… Ի՞նչ եք կարծում, Հիսուսի այս խոսքերը տեղին չե՞ն. *«Մի տվեք սրբությունը շներին, և ձեր մարգարիտները խոզերի առաջ մի գցեք, որպեսզի դրանք ոտքի կոխան չանեն և դառնալով ձեզ չպատառոտեն…» (Մատթ. 7:6):* Այս խոսքերը սակայն բառացի կերպով չհասկանաք. Նա ուզում է ասել, իմացեք, թե որտե՞ղ, ո՞ւմ և ի՞նչ եք խոսում: Ամեն մարդ չէ՞ որ ընդունակ է լսելու ու հասկանալու ձեր ասածները: Այս դեպում այս երիտասարդը իմ խոսքերը ոտքի տակ գցեց ու ինձ վիրավորեց: Մենք դատավոր չլինենք: Կա գերագույն Դատավորը՝ Աստված, թողնենք Նրա դատաստանին:

«ԲԱՐԵՎ, ԲԱՐԻ ՔԱՀԱՆԱ»
ԲԱՐԻՆ ՄԵԿՆ Է, ՈՐ Է ԱՍՏՎԱԾ

Իմ պարտականությունների մեջ է մտնում երկու շաբաթը մեկ այցելել Արարատ Տուն, *(Ծերանոց),* որն ունի երեք բաժիններ – երկու հիվանդանոցի, ուր ավելի անկողնային կամ անիվների վրա եղող հիվանդներն են, իսկ երրորդը նրանք, որոնք կարողանում են քայլել: Երկու շենքերը դեմ դիմաց են: Առավոտյան սկսում եմ իմ հանդիպումը մեծահասակների հետ բնական է հիվանդանոցային առաջին բաժնից: Մտնում եմ սրահ, ուր բազմաթիվ հիվանդներ կան, մեծ մասամբ անիվներով մեքենաների վրա “will chair”: Բնական է նրանց տրամադրությունը բարձրացնելու համար մտնում եմ երգելով, ուրախ և ժպիտը դեմքիս: Զգում եմ նրանց ուրախությունը և լսում բացականչությունները. *«Տեր Հայրը եկավ»:*

Մինչև իմ աղոթքին անցնելը, մեկ առ մեկ մոտենում եմ սեղանների շուրջ հավաքված մայրիկներին կամ հայրիկներին ու ամեն մեկի հետ առանձին զրույց ունենում: Նրանցից ոմանք սուրճ են խմում և կամ թեյ լիմոնով: Երբեմն նրանց հետ կատակներ եմ անում, հարցնելով, թե սուրճը ինչպե՞ս եք խմում, լեղի, թե քաղցր, թեյը ինչո՞ւ եք լիմոնով խմում: Երբ հերթական սեղաններից մեկին մոտեցա, հանկարծ լսեցի այս արտահայտությունը՝ *«Բարև, Բարի Քահանա»:* Անմիջապես հիշեցի Հիսուսի խոսքը, երբ մի երիտասարդ իրեն դիմեց այդ ձևով, *«Բարի Վարդապետ, ի՞նչ բարիք գործեմ, որ հավիտենական կյանքն ունենամ»: Եվ Նա նրան ասաց. «Ինչո՞ւ ես ինձ բարու մասին հարցնում, մեկ է բարին, եթե կամենում ես հավիտենական*

կյանքը մտնել, պահիր պատվիրանները»: Այո, բարին մեկ է:

Այդ պահին ներքին մի ուրախություն ապրեցի մայրիկի ասածից, «Բարև, Բարի Քահանա»: Ի՞նչ էր տեսել այս մայրիկը իմ այցելությունների մեջ, որ ինձ այդպիսի գնահատական տվեց: Բարի Քահանա, իրապե՞ս ես բարի եմ, ի՞նչ եմ արել ես համեստ եկեղեցականս այս մեծերի համար, որոնք ինձ այսպիսի մեծ գնահատական տվեցին: Մեծերը իրավացի են, ես սիրում եմ նրանց, անկեղծ սիրով և հավատացեք ամեն անգամ, երբ այցելում եմ նրանց, հակառակ որ ծանր հիվանդությունների տեր մարդիկ եմ տեսնում, սակայն այնտեղից դուրս գալուց հետո, հուսահատված, նեղված կամ կյանքից հոգնած վիճակում չեմ զգում ինձ, այլ՝ ընդհակառակը ավելի զորացած իմ հավատի մեջ, փառք եմ տալիս Աստծուն, որ առողջ եմ ու շարունակում եմ իմ ծառայությունը բոլոր նրանց, որոնք կարիքն ունեն իմ աղոթքին;

Երբեմն զրույցի եմ բռնվում նաև տղամարդկանց հետ, որոնք իրենց ավելի ծանր են պահում: Այդ մարդկանցից մեկը կա, որ միշտ ինձ հետ ուզում է հոգևոր հարցերի շուրջ մտքի մարզանքներ անել. Օրինակ, մի անգամ ինձ ասաց, *«Տեր հայր, գիտես երազիս մեջ գնացել էի սրանից հինգ հազար տարի առաջ մեր թագավորությունը. ասացի, ես եկել եմ Հիսուսին տեսնելու, ո՞ւր է նա»: «Ասացին, այստեղ չէ», «Ասացի, չգիտեմ, ի՞նչ կուզեք արեք անպայման գտեք ու բերեք իմ մոտ Նրան»:* Հայրիկ, ասացի, *«Հիսուս եկավ երկու հազար տարիներ առաջ և ոչ թե հինգ հազար, կարծեմ սխալվել եք»: «Ի՞նչ ես ասում, Տեր հայր ջան, ինձ համար կարևոր չէր, ասացի, չգիտեմ,*

ինչպես ուզում եք արեք, որտեղից ուզում եք գտեք ու բերեք Նրան»:

Ու այսպես ամեն մեկի հետ զրուցելով սկսում ենք միասնական աղոթքը, իսկ հետո նրանց խոսում եմ հետաքրքիր հոգևոր նյութերի շուրջ, մանավանդ շատ են սիրում և տպավորվում է նրանց մտքում, երբ օրվա նյութի շուրջ կյանքից վերցված պատմություններ եմ պատմում, անշուշտ դրանք կապելով Հիսուսի կյանքի հետ: Հետաքրքիրն այն է, որ խնամողները, որոնք ներկա են լինում իմ քարոզներին և աղոթքի ժամանակ, լսում են այս պատմությունները և լավ հիշում են: Ինչի՞ց գիտեմ, քանի որ երբեմն նրանք են ինձ պատմում և հիշեցնում, որ այդ պատմությունը լավ տպավորվել է իրենց մտքում: Ուրախ եմ դրա համար;

«Բարև, Բարի Քահանա»: Շնորհակալություն ձեզ, սիրելի մայրիկներ և հայրիկներ, որ կարողացել եմ շահել ձեր սիրտը ու արժանանալ այս պատվավոր գնահատականին, որն ինձ համար ամենամեծ շքանշանն է:

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ

«Պատվիր քո հորն ու մորը, որպեսզի բարիք գտնես, երկար ապրես բարեբեր այն երկրի վրա, որ Տեր Աստված տալու է քեզ» (Ելք 20:12) (Տասնաբանյա պատվիրան):

«ՄԵԿԴ ՀԱԶԱՐ ԸԼԼԱ» - ԹՈՂ ՄԵԿԴ ՀԱԶԱՐ ԼԻՆԻ

Արարատ Տան Ծերանոցում իմ հերթական այցելության ժամանակ, առաջին հերթին մինչև ընդհանուր սրահը գնալը, պարտքս եմ համարում այցելել մի հիվանդ մայրիկի՝ Լուսիկ անունով, որ անկողնային է և չի կարողանում գալ ու մասնակցել ընդհանուր աղոթքի: Լուսիկ մայրիկը բեյրութահայ է և արմտահայերեն է խոսում: Ճիշտ է անկողնային է, բայց խելքը տեղն է և պայծառ ուղեղ ունի: Սենյակի դուռը բաց է, մտնում եմ ու *«բարի լույս»* ասում: *«Բարի լույս»* պատասխանում է մայրիկը; *«Այսօր ինչպե՞ս ես»,* հարցնում եմ: «*Գեշ եմ, լավ չեմ, կմրսիմ կոր»,*-դողացող ձայնով պատասխանում է նա: *«Հիմա միասին կաղոթենք և կտաքնաս, համաձա՞յն ես»: «Լավ կըլլա»:* Ու միասին աղոթում ենք, «*Հայր մեր»-ը և ես «Պահպանիչ»* աղոթքով Աստծուն խնդրում եմ, որ օգնի մայրիկին:

Աղոթքը վերջացնելուց հետո հարցնում եմ, *«Մայրիկ, հիմա ինչպե՞ս ես, չե՞ս մրսիր»:* «Մեկդ հազար ըլլա», իր հուզմունքի և ուրախության պատասխան օրհնությունն է: Ինչքան լավ է, որ մեկը քեզ օրհնում է ու բարին ցանկանում, այն էլ մայրը, որն անկողնում պառկած է: *«Մեկդ հազար ըլլա»:*

Եթե անկեղծորեն ասեմ, մի կողմից ներքին ուրախություն եմ ապրում մայրիկի օրհնանքի, մյուս կողմից հուզվում եմ նրա այդպիսի վիճակի համար: Ի՞նչ է նրա

կյանքը, ի՞նչ իմաստ ունի անկողնում պառկած հիվանդի կյանքը, կտրված աշխարհից, կյանքի իրադարձություններից. ո՞վ գիտի երիտասարդ ժամանակ ինչպիսի կայտառ, ուրախ և աշխատող կին է եղել Լուսիկ մայրիկը: Իսկ այսօր… «Մեկդ հազար ըլլա»: Սիրելի Լուսիկ մայրիկ, ես երբեք չեմ հոգնի ու ձանձրանա քեզ այցելելուց, աղոթելուց և իմ բժշկության աղոթքը քո վրա կարդալուց: Միայն թե Աստված օգնի քեզ ու դու տուն գնաս, կարոտ չմնաս քո երեխաներից, կյանքն ապրելուց եւ ուրախանալուց:

«Պատվիր քո հորն ու մորը, որպեսզի բարիք գտնես, երկար ապրես բարեբեր այն երկրի վրա, որ Տեր Աստված տալու է քեզ»: Ակամա հիշեցի Տիրոջ պատվիրանը ծնողների մասին և հոգեպես նեղություն ունեցա: Լուսիկ մայրիկը այդ ծնողներից մեկն է, Մայր է:

«ԹՈՂ ՔՈ ՄԵԿՆ ԷԼ ՀԱԶԱՐ ԼԻՆԻ, ԼՈՒՍԻԿ ՄԱՅՐԻԿ»:

2011
Միշըն Հիլզ, Կալիֆորնիա

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ

ԿՅԱՆՔ ԱՂԵՐՍՈՂ ՀԻՎԱՆԴԸ

2011-ի Հունվարի 14-ն էր, մի ուրբաթ օր, առավոտյան, Մայր Տաճարում մասնակցեցի գիշերային ժամերգության, որից հետո Առաջնորդարանում էի: Հանկարծ մի զանգ ստացա, իմ ծանոթներից մեկն էր: Խնդրում էր անմիջապես գնալ հիվանդանոց, իր հիվանդ հորեղբոր համար աղոթելու:

Արագ գնացի: Ընդհանրապես, երբ հարցը վերաբերում է հիվանդին, ես ժամանակ չեմ կորցնում և ամեն գործ թողած գնում եմ նրան այցելության, քանի որ բոլոր գործերը կարող են սպասել և ավելի ուշ կատարվել, սակայն հիվանդը՝ ոչ: Հիվանդանոցը գտնվում էր Լոս Անջելոսի շրջաններից մեկում: Երբ ներս մտա հիվանդասենյակ, արդեն այդ հիվանդանոցի պատասխանատու հոգևորականը իր պարտականությունն էր կատարում, աղոթում էր հիվանդի վրա: Հիվանդանոցները ընդհանրապես կառավարության կողմից վարձատրվող հոգևորականներ ունեն բողոքական, կաթոլիկ, նույնիսկ՝ հայ: Այս մեկը պատկանում էր Բողոքական եկեղեցուն:

Հիվանդի շուրջ հավաքված էին իր մտերիմները, որոնք հագել էին դեղին խալաթներ, ձեռնոցներ և բերանները ծածկված էին, ըստ բժիշկների հրահանգի: Սովորաբար վիրուսով վարակված հիվանդի պարագային դեղին խալաթներ ու ձեռնոցներ են հագցնում այցելողներին, որ չվարակվեն: Նույնիսկ խնամող քույրերն էլ են հագնում: Ես գլխով ողջունեցի նրանց, ապա մերժեցի հագնել դեղին խալաթն ու ձեռնոցները, համարձակ հագա իմ հոգևոր զգեստը և սկսեցի աղոթել: Մինչ այդ հիվանդի հարա-

զատներից մեկը ինձ մի քանի տեղեկություններ տվել էր նրա վիճակի և դրության մասին։ Ըստ այդ տեղեկության, իմ աղոթքից հետո հիվանդին միացած արհեստական գործիքները պիտի անջատվեին, քանի որ ըստ բժիշկների նրա վիճակը անհուսալի էր։ Հիվանդը մեկ ու կես ամիս էր, որ տառապում էր թոքերի հիվանդությամբ։ Մի խոսքով թոքերը հրաժարվել էին նրան ծառայելուց, որով ընտանիքի համաձայնությամբ գործիքները անջատելուց հետո հիվանդը հրաժեշտ պիտի տար այս աշխարհին։ Պարզ էր, նշանակում է նա ինքը չէր ապրում, այլ նրան ապրեցնում էին գործիքներով։

Տեղեկությունների մեջ մի հետաքրքիր բան կար, ըստ որի, հիվանդը երբեմն-երբեմն շարժում էր մի աչքը, ձեռքը, ուրիշ ոչինչ։ Նույնիսկ գիտակցությունը տեղը չէր, չէր ճանաչում ոչ մեկին։ Մի խոսքով շատ չտանջվելու համար, կինը, զավակները որոշել էին նրան հանգստացնել։ Ըստ աստվածային օրենքի, սակայն, մարդու կյանքը պատկանում է միայն Աստծուն, Նա կարող է որոշել, թե ի՞նչ է լինելու նրա վաղվա օրը։ Բայց մենք դատավոր չլինենք. Ավետարանն ասում է. *«Մի դատէք, որ չդատապարտվեք»։* Այս բոլորը իմանալով հանդերձ ես սկսեցի իմ բժշկության աղոթքը։ Զարմանալիորեն աղոթքի կեսին հիվանդը սկսեց աշխուժանալ. աչքերը արար-արագ թարթում էր, մի ձեռքը հաճախ տանում-բերում էր, որ առաջ չէր կարողանում շարժել. ոտքի մատները սկսեցին շարժվել, նույնիսկ զարմանք պատճառելով իր հարազատներին։ Ավելին։

Երբ ես աղոթքիս պահին ձեռքս դրեցի հիվանդի ճակատին, այն ուժեղ քրտնած էր. ԴԱ ԿՅԱՆՔԻ ՔՐՏԻՆՔՆ ԷՐ, ՈՉ՝ ՄԱՀՎԱՆ։ ԻՄ ՄԱՐՄՆՈՎ ՍԱՐՍՈՒՌ ԱՆՑԱՎ,

ՀՈՍԱՆՔԻ ՊԵՍ ՄԻ ԲԱՆ; Այ՛ հիմա էլ, երբ գրում եմ այս տողերը, հավատացեք, զգում եմ նրա ճակատի քրտինքի առատությունը։ ԿԱՐԾԵՔ ՀԻՎԱՆԴԸ ՁԵՌՔԻՍ ՀՊՈՒՄՈՎ ԻՆՁԱՆԻՑ ԿՅԱՆՔ ԷՐ ԱՂԵՐՍՈՒՄ, ԿՅԱՆՔ, ՈՐԻՆ ՊԵՏՔ ՈՒՆԵՐ, ԿՅԱՆՔ, ՈՐՆ ԻՐԵՆ Ի ՎԵՐՈՒՍՏ ԷՐ ՏՐՎԱԾ։ Ի՞ՆՉ ԵՔ ԱՆՈՒՄ ՄԱՐԴԻԿ, Ո՞ՒՄ ԿՅԱՆՔՆ ԵՔ ԽԼՈՒՄ, Ո՞Վ Է ՁԵԶ ԻՐԱՎՈՒՆՔ ՏՎԵԼ… Հիվանդը կարծեք վերջին ճիգն էր գործադրում իր կյանքը ետ վերադարձնելու համար, բայց արդեն ուշ էր. գործիքները անջատված էին։

2011
Դաունթաուն, Կալիֆորնիա

ՀՈՒՅՍ ՈՒՆԵՐ...

Հունվարի 18-ն էր: Այցելեցի Լոս Անջելեսի շրջանում գտնվող Սիդրը Սայնա հիվանդանոցում պառկած քաղցկեղով մի հիվանդի, հազիվ 51 տարեկան: Ինձ դիմավորեց իր կինը, որը ծայր աստիճան հոգնած տեսք ուներ, հավանաբար ամուսնու վիճակի պատճառով: Հիվանդին մի քանի անգամ տեսել էի հանդիպումների ժամանակ. իմ քառասուն տարվա մտերիմ ընկերոջ քավորն էր, բարի, ազնիվ, աշխատասեր և հարգանքով մեկն էր: Հակառակ 16 տարի ամուսնացած էին, սակայն երեխաներ չունեին: Հարուստ էր, բայց տառապում էր դարիս հիվանդությամբ: Մի քանի անգամներ արդեն վիրահատել էին, նախ թոքերը, ապա գլխում ուռուցք էին հայտնաբերել և հեռացրել էին: Ստացած ճառագայթների պատճառով մազերը լրիվ թափվել էին, կարծես ութսուն տարեկան մի ծերունի լիներ: Մոտեցա, բարևեցի, ժպիտ երևաց իր հիվանդ երեսին, երբ ինձ տեսավ, գուցե և սպասում էր, քանի որ իմ օրհնության կարիքը ուներ: Հասկացա, որ ես իրեն պետք եմ ու փորձեցի իմ հանգստացուցիչ խոսքերով հավատի ուժ ներարկել նրան:

Զգացի, որ դեռ ապրելու հույսը չէր կորցրել, աչքերի մեջ կյանքի փայլը մնում էր: Օգտվեցի այդ վիճակից և բացատրեցի, որ ինքն իրեն կարող է օգնել, եթե իր հույսը դնի Աստծու վրա: Համոզվեց ու ինձ հետ լուռ աղոթեց: Շրթունքները շարժվում էին, նա հավատաց, որ իմ և իր աղոթքով բացվեցին Աստծու դռները ու Նա լսեց մեր ձայնը: «Քո հավատը քեզ փրկեց»,- կրկնեցի Հիսուսի քաջալերիչ խոսքը, ասված տասներեք տարիներ արյունահոսությամբ տառապող կնոջը, որը մոտենալով Հիսուսի

հագուստին, հավատաց, որ միայն դիպչելով Նրան՝ պիտի բուժվեր։ Այդպես էլ եղավ։ Ասացի, որ ես Հիսուս Քրիստոսը չեմ և այդ զորությունը չունեմ, բայց եթե միասին աղոթենք, իրապես կօգնի։ Խնդրեցի, որ ամեն օր գոնե մեկ անգամ խաչ հանի, հավատով և Աստված էլ կլսի նրա ձայնը։

Չգիտեմ ինչո՞ւ, երբ աղոթում էի նրա վրա, մարմնովս սարսուռ անցավ. այդ պահին ես հասկացա, որ հիվանդի համար հույսը ամենաբուժիչ սրսկումն է։ Աղոթքի ժամանակ ձեռքս երկար պահեցի իր գլխի վրա, ճակատը սառը չէր։ Նա դեռ կյանքով լի էր։ Եվ մենք ներկա եղողներս միաձայն արտասանեցինք «Հայր մեր» Տէրունական աղոթքը։ Լսիր մեր ձայնը Տեր Աստված։ Խնդրեցի նաև իր կնոջը, որ հիվանդի քնած ժամանակ աղոթք կարդա։ Եթե դուռը թակենք, Աստված մեր խնդրանքները կկատարի։ Այսօր մի բարի գործ արեցինք, օգնեցինք մի հիվանդի իրեն ավելի լավ զգալու։

ՏԵՐ ԱՍՏՎԱԾ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՆԿԱՐԵԼԻ ՈՉԻՆՉ ՉԿԱ, ՕԳՆԻՐ ԱՅՍ ՀԻՎԱՆԴԻՆ ՈՏՔԻ ԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ԻՐ ԿՅԱՆՔԸ, ՄԻՇՏ ՔԵԶ ՓԱՌՔ ՏԱԼՈՎ։ ԿԱՄՔԸ ՔՈՆՆ Է;

2011
Լոս Անջելոս, Կալիֆորնիա

ԺՊԻՏՈՎ ՀԻՎԱՆԴԸ

«Ես իսկ եմ Հարություն և Կյանք, ով հավատում է Ինձ, թեպետ և մեռնի, կապրի, և ով կենդանի է ու Ինձ հավատում է, հավիտյան չի մեռնի» (Հովհ. 11:25-26)
«Ես եմ Ճանապարհը, Ճշմարտությունը և Կյանքը: Ոչ ոք չի գա Հոր մոտ, եթե ոչ՝ Ինձանով» (Հովհ. 14: 6)

Մեր հույսը դնենք ոչ թե մարդկանց, (որ նշանակում է» թե՝ մեր տունը կառուցենք ավազի վրա), այլ՝ Աստծու, *(որ նշանակում է, թե՝ մեր տունը կառուցենք ամուր ժայռի վրա):* Գործածենք մեր խելքը, խիղճն ու կամքի ուժը:

Բրբենկի սրահներից մեկում հոգեճաշի ներկա լինելուց հետո տուն էի վերադառնում, երբ իմ հավատացյալներից մեկը հեռաձայնեց և ասաց, որ իր հարազատը հիվանդանոցում է. խնդրեց, որ անպայման այցելեմ: Ես արդեն այդ մասին գիտեի, նույնիսկ մի անգամ էլ աղոթել էի նրա վրա, երբ Սրբազան Հոր հետ Գլենդելի «Ադվենտիստ» հիվանդանոցում Ջրօրհնեքի արարողություն էինք կատարել: Անմիջապես գնացի, քանի որ հիվանդը չի սպասում և կարիք ունի անմիջական օգնության:. Հիվանդը, երբ ինձ տեսավ, ժպտաց, ես էլ կատակով ասացի, զարմանում եմ, որ դեռ հիվանդանոցում եք: Հիվանդը շատ ծանր չէր, գիտակցությունը տեղն էր և կարողանում էր ինձ հետ խոսել: Նրա շուրջը հավաքված էին իր կինը և զավակները: Մի քանի րոպե նրա հետ զրուցելուց հետո, աղոթեցի ու ապրելու հույս տալով՝ հրաժեշտ տվեցի նրան: Սենյակից դուրս գալուց առաջ ասացի, որ մի քանի օր հետո Աստծու կամքով իրեն պիտի հանդիպեմ տանը ավե-

լի առողջ ու ոտքի վրա։ Հիվանդը ժպտաց և կարմրած դեմքով հայտնեց իր շնորհակալությունը։

Ես հասկացա, որ նա երկար չի մնա հիվանդանոցում և շատ շուտով տուն կգնա առողջացած, որովհետև ժպտում էր ու իր հույսը դրել էր Աստծու վրա։ Այո, հիվանդը ճիշտ ճանապարհի վրա էր, չի կարելի հույսը դնել ֆիզիկական բժիշկների վրա, որոնք Աստված չեն, այլ կարևոր է և նույնիսկ անհրաժեշտ, որ աղոթքի ճանապարհով մեր հույսը կապենք Աստծու հետ, որի համար անկարելի բան չկա։

2011
Գլենդել, Կալիֆորնիա

ԽՈՍՏՈՎԱՆՎԱԾ ՀԻՎԱՆԴԸ

«Խոստովանում եմ Աստծու առաջ և Սրբուհի Աստվածածնի ու քո առաջ, հայր սուրբ, բոլոր գործած մեղքերս: Քանզի մեղք գործեցի խորհրդով, խոսքով և գործով, կամա թե ակամա, գիտությամբ և անգիտությամբ, մեղա Աստուծո»:

Մեղա հոգուս զորությամբ, խորամանկությամբ…
Մեղա մտքիս չար խորհրդով, նենգությամբ…
Մեղա մարմնիս ցանկությամբ…
Մեղա լեզվիս չարախոսությամբ …
Մեղա ձեռքերիս գողությամբ…
Մեղա շինվածքիս ողջ կազմությամբ…»

«Այլ և մեղա յոթը մահացու մեղքերով՝ հպարտությամբ, նախանձով, բարկությամբ, ծուլությամբ, ագահությամբ, որկրամոլությամբ (շատակերությամբ), բղջախոհությամբ (ցանկասիրությամբ) և նրանց բոլոր տեսակներով, մեղա Աստուծո»:

«Այլև մեղա Աստծու բոլոր պատվիրանների՝ հանձնառելիների և հրաժարելիների դեմ քանզի չկատարեցի հանձնառելիները և չհեռացա հրաժարելիներից: Օրենքը ստացա և օրինապահության մեջ ծուլացա, հրավիրվեցի քրիստոնության կարգի մեջ և գործերովս անարժան գտնվեցի, չարը գիտենալով կամովին շեղվեցի և բարի գործերից ես ինքս հեռացա, վայ ինձ, վայ ինձ, վայ ինձ, ո՞րն ասեմ կամ ո՞րը խոստովանվեմ, քանզի անթիվ են իմ հանցանքները, անասելի են իմ անօրենությունները, աններելի են իմ ցավերը, և անբժշկելի են իմ վերքերը, մեղա Աստուծո»:

Կինս ասաց, որ իր ընկերուհու եղբայրը նորից է վատացել և տեղափոխել են հիվանդանոց: Զանգեցինք ու գնացինք: Հիվանդանոցը գտնվում էր Փասադենա քաղաքում, Հանթինկթըն փողոցի վրա: Ընկերուհին հետո մեզ պատմում էր, թե երբ հիվանդը իմացել է, որ ես գնում եմ իրեն տեսության, ուրախացել է: Երբ ներս մտա հիվանդասենյակ, տեսա բավական գիրացած, կերած-խմած մի երիտասարդի, որին երկար տարիներ չէի տեսել. Փոխված էր, դեմքը ուռած, աչքերը հազիվ էին երեւում: Կատակով ասացի, *«Երեւում է գործերդ լավ են, հա»:* Ծիծաղեց: Պարզվում է, որ ճնշումը բարձրացել էր եւ ուղեղի վրա արյուն էր կաթել: Բժշկի ասելով նրա բախտը բերել էր, որովհետեւ արյունը կաթացել էր ուղեղի ոչ այն մասում, որը նրան կարող էր անզգայացնել ու գամել անկողնուն: Հասկացա, որ այդ բոլորը տեղի էր ունեցել խմիչքի եւ ծխախոտի չարաշահումից: Կատակով ասացի, որ մեղքերդ շատ են և քանի որ ես այստեղ եմ, պետք է խոստովանվես: *«Խոստովանում եմ, իրապես շատ մեղանչեցի, չափը անցա, հիմա ծխելը թողել եմ, խմելուց էլ պիտի հրաժարվեմ, սա ինձ լավ դաս եղավ»:*

«Ես ուղղակի զարմանում եմ մեր երիտասարդների վրա, ասում ենք, խրատում, բացատրում, որ չափի մեջ ամեն ինչ գեղեցիկ է, բայց օգուտ չունի, մի ականջից մտնում է, մյուսից դուրս գալիս: Աստված ամեն ինչ ստեղծել է, որ մարդիկ վայելեն, սակայն չափավորութեան կոչ է անում: Երբեք Աստծուն փառք չենք տալիս, հիշում ենք միայն այն ժամանակ, երբ նեղությունների ու դժվարությունների մեջ ենք»- պատասխանեցի ես: Ապա հիշեցի իր հորը, հասկացող, ընտանիքին նվիրված, չափի զգացողությունը իմացող, մանուկի պես զգայուն. այդ հրաշալի

բարի ու արդար մարդուն: *«Փորձիր նմանվել նրան»,-* ասացի ես: Երիտասարդը հուզվեց, աչքերը լցվեցին: *«Ճիշտ ես ասում Տեր Հայր ջան»,-* պատասխանեց: *«Քանի առողջ ենք, Աստծուն հիշող չկա, փառք տվող չկա, ինչ անենք այսպես եկել է, այդպես էլ պիտի գնա, օգուտ չունի: Հայրս, ողորմի իր հոգուն, իրապես հրաշալի մարդ էր, շատ էր սիրում մեզ: Այո, նրան նմանվել, նշանակում է հանգստացնել ու խաղաղեցնել նրա հոգին»:* Մեր երկխոսությանը ուշադիր հետևում էին նրա քույրը, աղջիկը և կինս: Նրանք գլխով հաստատեցին իր ասածները և ուրախացան, որ ես իրենց սրտից խոսեցի, խրատական կարդալով: Ապա ես նրան խոստովանեցրի, վերևում գրածս մեղքերի շարանը ներկայացնելով նրան ու ստանալով պատասխանը. *«Մեղա Աստուծո»:* Միասին աղոթեցինք, սրտանց և հուզումով: Հիվանդի աչքերից արցունքներ էին հոսում, դրանք կարծես խոստովանության, մեղքի գիտակցության արցունքներ լինեին: Նա զղջում էր իր մեղքերի համար: Ես աղոթեցի ու Աստծուն խնդրեցի ներել նրա մեղքերը: *«Աստված թողություն թող շնորհի քո մեղքերին»,-* ասելով:

Հակառակ որ ամբողջ օրը զանազան միջոցառումների էի մասնակցել և ֆիզիկապես հոգնած էի, սակայն այս երիտասարդի հետ երկխոսությունից ու նրա հուզախառն արցունքներից և մեղանչական խոստովանությունից հետո, զգացի, որ ես էլ եմ հանգստացել, մի բարի գործ կատարած լինելու գիտակցությամբ: Իրեն օգնողը անշուշտ Աստված պիտի լինի, միայն թե նա իր ամենօրյա աղոթքով պիտի թակի Նրա դուռը ու ժամանակի ընթացքում ամեն ինչ իր տեղը կընկնի: Թող Աստծու պահապան Աջը նրա և այլ երիտասարդների վրա լինի:

2011
Փասադենա, Կալիֆորնիա

ՀԱՄԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԿՈՒԶԵՄ...

Գնացի հիվանդին այցելության, այս անգամ ոչ թե հիվանդանոց, այլ տուն: Հիվանդը տանն էր պառկած: Այր և կին մեր եկեղեցու հավատացյալներն էին: Ամեն կիրակի առանց բացակայության գալիս էին Սուրբ Պատարագին մասնակցելու, լսելու և իրենց աղոթքները անելու: Որոշ ժամանակ հետո կամաց-կամաց սկսեցին ուշ-ուշ գալ, պատճառաբանելով իրենց հիվանդ լինելը: Բավական ժամանակ չեկան: Զանգեցի, հետաքրքրվեցի, իմացա, որ ամուսինը հիվանդանոցում է, գնացի, ուրախացան: Եվ այսպես շարունակ ամուսինը մեկ՝ հիվանդանոցում էր, մեկ՝ տանը: Վերջ ի վերջո բժիշկները նրան տուն ուղարկեցին: Անցան ամիսներ: Ես կնոջ հետ հեռախոսով էի խոսում և իմանում իր ամուսնու վիճակի մասին: Սուրբ Ծնունդից հետո կինը ուզեց, որ այցելեմ իրենց: Երեկոյան գնացի: Կինը ինձ դիմավորեց՝ անուշ ժպիտը դեմքին: Հիվանդը նստած էր շարժական աթոռի վրա, մոտեցա, բարևեցի *«Հրամմե, նստե, Տեր հայր, սուրճ մը կառնե՞ս»,*- իր հարցմանը գլխով արեցի, նորից հարցրեց.*«Սուրճը ինչպե՞ս կխմեք, շաքարո՞վ, թե՞...»: «Միջին»,*- պատասխանեցի: Ապա դառնալով իր ամուսնուն, քնքուշ ձայնով հարցրեց.*«Յավրիկս, դուն ալ կխմե՞ս»,* այնպես էր, կարծես թե նա դիմում էր իր հինգ տարեկան թոռնիկին: Ամուսինն էլ ուզեց և շուտով սուրճը եկավ ու հետաքրքիր զրույց ծավալվեց իմ և նրանց միջև:

Խոսքի մեջ կինը պատմեց իրենց մասին, որ երեխաներ չունեն, քանի որ ուշ են ամուսնացել: *«Մենք Բեյրութեն ենք: Քույրս, ողորմի իր հոգուն, դեռ ողջ էր, ինծի ըսաւ, այս մարդը աղվոր մեկը կերևի, ամուսնացիր, որ*

մինակ չի մնաս: Ան ատենը ես 45-էի, ամուսինս՝ 57: Ամուսնացանք: Աստուծմե գոհ եմ, որ ասանկ ամուսին ունիմ: Միրով կինամեմ, բայց տունին պայմաններուն մեջ դժվարիս կուգա, առաջվան ուժն ալ չունիմ, ինք ալ ծանրացեր է: Դիմացս վիետնամցի դրացի մը ունիմ, երբեմն ինծի կօգնե, երբ կուզեմ իրեն դուրս տանիլ: Ծերանոց ալ չեմ ուզեր տանիլ. խիղճս կը տանջէ, բայց ի՞նչ ընեմ, ԱՍՏՈՒԾՄԷ ՇԱՏ ԲԱՆ ՉԵՄ ՈՒԶԵՐ, ՈՉ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ, ՈՉ ՄԵԿ ԱՅԼ ԲԱՆ, ՄԻԱՅՆ՝ ՀԱՄԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԿՈՒԶԵՄ»:

Խոսելու ընթացքին նա երբեմն երբեմն դառնում էր ամուսնու կողմը, որպեսզի նա հաստատի իր ասածները. *«Անանկ չե, յավրիկս, շիտակ չե՞մ»:* Խեղճ մարդ, գլխով նշան էր անում, երբեմն էլ «*այո»,*- էր ասում: Այդքան քնքշություն, հոգատարություն ես այս տարիքի մարդկանց մեջ չէի տեսել: Ծերանոց չէր ուզում տանել, որովհետև սիրում էր իր հիվանդ ամուսնուն: *«Ի՞նչ ընեմ, կսիրեմ սա մարդը, գեշ, աղեկ, միասին ենք: Մենք կառավարութենեն թոշակ չենք ստանար, ինչ որ աշխատած ենք, ատոր դիմաց է, որ բան մը կառնենք. Նույնիսկ ծերանոց ալ իրեն չեն ընդունիր: Բավական գումարի պիտի նայի, որ մենք չունինք: Փառք Աստուծո, չեմ բողոքեր, բայց ասանկ է»:* Իմ հարցին, թե ամուսինը ինչ վիճակ ունի, ասաց. *«Երբեմն կմոռնա, դեղը կուտամ, փոխանակ խմելու, գրպանը կը-դնե, կկարծե շաքար է, անանկ չէ՞ աղվորս»,*- փաղաքշական ձևով դիմելով ամուսնուն ասաց նա. ամուսինն էլ գլխով հաստատում էր: *«Լեցուն դեղեր ունի, ամեն մեկն ալ իր ժամանակին պիտի տամ, ժամացույցը ժամուն վրա կը դնեմ, որ զարնե. զարնե նե ըսելե դեղը տալու ատենն է: Դեղով կապրի»:*

Ակամայից հիշեցի Պողոս Առաքյալի պատգամը սիրո մասին. «*Սերը համբերող է, քաղցրաբարո է, սերը չի նախանձում, չի ամբարտավանանում, չի գոռոզանում… ամեն բանի դիմանում է, ամեն բանի հավատում է, մշտապես հույս է տածում, ամեն բանի համբերում» (Ա. Կորթ. 13:1-13):* Ահա այս կինը կատարում էր Պողոս Առաքյալի սիրո օրհներգը: Ուշ տարիքում ամուսնացած կինը իրապես իր սերն ու հավատը գործի էր վերածել: Սիրել նշանակում է օգնել հիվանդին, կարիքավորին, ծնողին ու ընկերոջը: Վարձքտ կատա՛ր:

Ասացի, որ ուզում եմ հիվանդի վրա աղոթել: Միասին *«Հայր մեր»-ը* արտասանեցինք: Ապա նրանց խոստովանեցրի եւ Սուրբ Հաղորդություն տվեցի: Երկուսն էլ լուռ արտասվում էին: Թե իրենց մտքով ինչ էր անցնում, այդ պահին չկարողացա հասկանալ, բայց մի բան պարզ էր, նրանց հոգին խաղաղ էր: Միասին *«Խորհուրդ մեծ»* Սուրբ Ծննդյան շարականը երգեցինք, որը իրենք լավ գիտեին:

«ՀԱՄԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԿՈՒԶԵՄ»: ՆՐԱՆՑ ՀՐԱԺԵՇՏ ՏԱԼՈՒՑ ՀԵՏՈ, ԽՆԴՐԵՑԻ ԱՍՏԾՈՒՆ, ՈՐ ԱՅԴ ԿՆՈՋ ՈՒԶԱԾ ՀԱՄԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՏԱ, ՈՐՊԵՍԶԻ ԿԱՐՈՂԱՆԱ ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ԻՐ ԲԱՐԻ ԳՈՐԾԸ՝ ՍԻՐՈ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ:

ԵՐԱՆԻ ԱՅՍՕՐՎԱ ՄԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ԱՅՍ ՏԱՐԵՑ ԶՈՒՅԳԻ ՕՐԻՆԱԿԸ ՈՒՆԵՆԱՅԻՆ, ԱՅՍԻՆՔՆ՝ ՍԻՐՈ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԾԵԻՆ:

2011
Լա Քրասենթա

ԱՆԳԻՏԱԿԻՑ ՀԻՎԱՆԴԸ...

Բրբենկի *«Մենթ Ջոզեֆ»* հիվանդանոցում էի, մի հիվանդի այցելության առիթով: Բարձրացա 5-րդ հարկ և այնտեղ ինձ դիմավորեց ժպտուն դեմքով, ուրախ, զվարթ մի կին: *«Օ, եկար, Տեր Հայր, շատ ուրախ եմ և շնորհակալ: Գիտեք ձեզի կսպասեի: Աստված օրհնե ձեզի»:* Այս խոսքերով նա ինձ առաջնորդեց հիվանդի մոտ, որը անգիտակից վիճակ ուներ. աչքերը փակ, անշարժ պառկած էր: Իմ մի քանի հարցերից հասկացա, որ հիվանդը հրաշքի համազոր կարողացել էր դիմանալ երեք վիրահատությունների: Հիմնական հիվանդությունը կապված էր գլխուղեղի հետ: Կինը Աստծուց շատ գոհ էր, որ իր ամուսինը այդ վիճակում է: *«Աստված օգնեց իրեն և կհավատամ, որ աղոթքը նույնպես պիտի օգնե իրեն և շատ շուտով պիտի արթննա ու առողջացած տուն պիտի երթա»:* Այս հավատով կինը խնդրեց, որ աղոթեմ իր ամուսնու համար: Մինչև սկսելս կինը իր ամուսնուն ասաց, որ Տեր Հայրն է եկել և պիտի աղոթի իր համար: Երևի իմ հայացքից հասկացավ, որ կասկածում եմ, ասաց, որ հիվանդը հակառակ աչքերը փակ լինելուն, լսում է և հորդորեց նրան, որ մեզ հետ արտասանի *«Հայր մեր»* Տերունական աղոթքը: Բնական է, որ հիվանդը ոչ մի շարժում չարեց, բայց աղոթքիս պահին զգացի, որ աչքերը թեթեւ շարժվում են:

Հիվանդը կարծես զգում էր ու հասկանում և լուռ գոհություն էր հայտնում Աստծուն, Իր փրկարարին: Աղոթքս ավարտելուց հետո մի րոպե բռնեցի հիվանդի ձեռքը: Տաք էր, նույնիսկ քրտնած: Ինձ թվաց, թե նա լուռ արտասվում է: Ես բնականաբար Հիսուս Քրիստոսը չէի,

որ կարողանայի նրան օգնել, բայց ինչպես մեր Տերը իր զգեստի եզրին դիպչող կնոջը ասաց. «*Քո հավատը քեզ փրկեց»,* նույնը պիտի լինի այս հիվանդի պարագային, հավատը իրեն պիտի փրկի։

Աղոթքից հետո կինը ինձ ճանապարհեց, հազար ու մի օրհնանքներով։ «Ինչպես կրնանք ձեզի վարձահատույց ըլլալ»- հարցմանը, պատասխանեցի. *«Աղոթեցեք իմ եւ ձեր ամուսնու համար։ Ձեր հիվանդը Աստծու ձեռքերում է։ Թող Նրա կամքը լինի»։* Հակառակ որ հիվանդի աչքերը փակ էին և նա կարծեք անգիտակից վիճակում էր, բայց նա տեսնում էր ու զգում Աստծու ներկայությունը և լուռ շնորհակալություն էր հայտնում աղոթող Տեր Հորը։ ՓԱՌՔԴ ՇԱՏ ԼԻՆԻ ՏԵՐ ԱՍՏՎԱԾ, ՈՐ ՔՈ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ԵՍ ՅՈՒՅՑ ՏԱԼ ՆՈՒՅՆԻՍԿ ԱՆԳԻՏԱԿԻՑ ՀԻՎԱՆԴԻ ՄԻՋՈՑՈՎ։ ՄԵԾ Է ՔՈ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ։

2011
Բրբենկ, Կալիֆորնիա

ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆ

ԶԻՆՎՈՐՈՒԹՅՈՒՆ



ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 5

Առաջին քայլերս··· 6

Դպրոցի թղթերս 9

Փոքրիկ Հովսեփը 12

500 էջանոց գիրքը 15

Երեխա է դեռ··· 16

Ճեմարանից հեռանալս 18

Պահեստի գողությունը 21

Ուսանողների հիվանդությունը 24

Միամիտ պատանին 26

Ֆանտամասը 27

Բանաստեղծություններիս գիրքը 30

Ֆուտբոլի խաղը 31

Հորեղբորս ապտակը 34

Տեսուչի «պատիժը» 36

Ձմերուկը 39

Մարշալ Բաղրամյան 41

Վերակացուի ապակե ամանը··· 43

Երաժշտության դասը 45

Հանրակացարանի նորոգությունը 47
Սրբազանի շնիկը 49
Վազգեն Վեհափառի պատիժը 51
Սրբազանի ստորագրությունը 54
Վեհափառի ճշտապահության դասը 57
Շիրազի «բողոքը» 59
Զինվորություն 63
Զինվորության հիվանդությունս 67
Բյուրեղապակյա աղբամանը 71
Սբ· Աստվածամայրը երազումս 75
Հոգեհանգստյան պատարագ 78
Քաղաքապետի պատասխանը 83
Գլխ· Ճարտ· տրամաբանությունը 86
Զանգի վերադարձը 88
Խաչը և դրոշակը 90
Պրն· Գառնիկի բարկությունը 93
«Ո՞ւր է մաշտոցս» 96
Վեհափառի հիշողությունը 99
Շնորհք Պատրիարքը իմ··· 103
«Թիթեռնիկ» պարային խումբը 105

Երիտասարդի անկումը 108

Տեր Հայր, կարճ կապիր 114

Բարև, Բարի քահանա 117

Մեկդ հազար ըլլա 120

Կյանք աղերսող հիվանդը 122

Հույս ուներ 125

Ժպիտով հիվանդը 127

Խոստովանված հիվանդը (Զղջում) 129

Համբերություն կուզեմ 132

Անգիտակից հիվանդը 135

Նկարներ 137

Բովանդակություն 143

ԱՐԺԱՆԱՇՆՈՐՀ ՏԵՐ ՀՈՎՍԵՓ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ

Արժ· Տ· Հովսեփ Ավագ Քահանա Հակոբյանը ծնվել է Հոկտեմբերի 7-ին, 1950, Էջմիածին քաղաքում, Հայաստան:

1960-62 թվականներին հաճախել է Էջմիածին քաղաքի Սբ· Աստվածածին եկեղեցին:

1962-ի Սեպտեմբերին ընդուն-վել է Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարան:

1967-ին ձեռամբ Մայր Տաճարի Լուսարարապետ՝ Գերշ· Տ· Հայկազուն Արքեպս· Աբրահամյանի ձեռնադրվել է Սարկավագ:

1968-ին ավարտել է Հոգևոր Ճեմարանը և նույն տարվա Հունիս ամսին նշանակվել Կաթողիկոսարանի Քարտուղար:

1974-ի Փետրվարի 16-ին ամուսնացել է Մերի Մանվելյանի հետ:

1974-ի Դեկտեմբերի 22-ին Մայր Աթոռում ձեռնադրվում է ամուսնացյալ Քահանա և 1975-ի Մարտին նշանակվում Էջմիածին քաղաքի Սբ· Հռիփսիմե վանքում իբրև ծիսակատար, միաժամանակ շարունակելով Կաթողիկոսարանի Քարտուղարի պաշտոնը:

1977-ին Տեր Հոր ընտանիքը բախտավորվում է արու զավակով, որին ի հիշատակ իր վաղամեռիկ եղբոր անվանա-

կոչում են Խաչատուր:

1978-ի Մայիսին իբրև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ներկայացուցիչ, Տեր Հայրը մի Վարդապետի հետ մասնակցում է Հյուսիսային Ամերիկայի Արևելյան Թեմի Հոգևորականաց Համագումարին:

Ամերիկայից վերադարձին շարունակում է իր ծառայությունը Մայր Տաճարում և նույն թվականի Սեպտեմբեր ամսից նշանակվում Էջմիածին քաղաքի Սուրբ Աստվածածին Եկեղեցու պատասխանատու, ապա՝ Վանահայր:

1979-1993 թվականներին ծավալել է թե շինարարական և թե հոգևոր լայն գործունեություն, պատշաճ մակարդակի հասցնելով եկեղեցու առաքելությունը: Այդ թվականներին Երջանկահիշատակ Վազգեն Վեհափառի հանձնարարությամբ ստեղծել է նախապատրաստական դպրոց բաղկացած 9-14 տարեկան փոքրիկներից ու պատանիներից: Դպրոցի նպատակն էր պատրաստել եկեղեցական արարողություններին որոշ չափով գիտակ պատանիներ, որոնք պիտի ընդունվեին Հոգևոր Ճեմարաններ:

Այդ փոքրիկներից և պատանիներից շատերը այսօր արդեն իսկ ձեռնադրյալ հոգևորականներ են, կուսակրոն կամ ամուսնացյալ և ծառայում են Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն՝ ի Հայաստան և ի Սփյուռս աշխարհի:

1994-ի Դեկտեմբերին Տեր Հայրը ընտանյոք հանդերձ տեղափոխվել է Ամերիկայի Միացյալ Նահանգներ և 1995 -ի Հուլիս ամսից մինչև այսօր շարունակում է իր հոգևոր ծառայությունը Հյուսիսային Ամերիկայի Արևմտյան Թեմում՝ զբաղեցնելով զանազան պաշտոններ: